



ՌԱՄԿԱՎԱՐԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ Թ. 2.

ՌԱՄԿԱՎԱՐՈՒԹԻՒՆ

ԱՆԽԱՏԱՍԻՐԵՑ

Մ. ՅԱՄԱՏԵԱՆ

Հետևողութեամբ Հանրի Միեկլի
Մօրիս Գուրկէնի և Բրէվօ-Բարաձօլի

ԱԳԵՔՍԱՆԴՐԻԱ

ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

1910

Հ Ե Ղ Ի Ն Ա Կ Ի Ն Ո Ի Ր Ի Շ Գ Ո Ր Ծ Ե Ր Ը

ՆԵՐՇՆՉՈՒՄՆԵՐ Ազգային և Յեղափո-
խական արդի կեանքէ. 1899

Գին 1 ժրն.



Ռ Ա Մ Կ Ա Վ Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12

ՌԱՄԿԱՎԱՐՈՒԹԻՒՆ

329.14

Տ-

A $\frac{11}{1045}$

ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ

Մ. ՏԱՄԼԵՅԱՆ

Հետևողութեամբ Հանրի Միւլիի,
Մորիս Պարիլէնի եւ Գրեյօ-Բարաւօլի




ԱՂԵՐՍԱՆԴՐԻԱ

ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

1910


THE UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY



CHICAGO

Յ Ա Ռ Ա Չ Ա Բ Ա Ն



Հիմա որ, շնորհիւ նոր բէթիմին, օսմանեան հայրենիքն ալ կը բացուի գիտութեան եւ քաղաքակրթութեան լոյսին առջեւ, օսմանեան ժողովուրդները պէ՛տ ունին ամէն բանէ առաջ՝ քաղաքական եւ քաղաքացիական դաստիարակութեան մը, Ազատութեան էութիւնը ըմբռնելու, ցեղերու միջեւ տեսական համեմատութիւն առաջ բերելու, եւ ընդհանուրին բարոյական, մտաւորական ու տնտեսական զարգացումը ապահովելու համար :

Այս նպատակին ծառայող միջոցներուն մէջ չկա՛յ բան մը որ այնչափ օգտակար եւ արդիւնատու ըլլայ, որչափ ռամկավարական գաղափարներուն տարածումը եւ ժողովրդականացումը մեր մէջ :

Ռամկավարութիւնը՝ քաներորդ դարու մարդկութեան դեկավարող սկզբունքն է, եւ հետզհետէ ծառայելով բոլոր երկիրներու մէջ, յաղթանակէ յաղթանակ կը փայէ՝ բռնապետութեան եւ խաւարի ուժերուն դէմ իր անդուլ պայքարին մէջ :

Բայց ռամկավարութեան ուսումը՝ դէպ ի ազատութիւն, հաւասարութիւն եւ եղբայրութիւն անսայթափ փայլեւ առնելու համար միայն կարեւոր չէ, այլ նաեւ, եւ մա՛նաւանդ՝ այդ ուսու-

մը կարեւոր է՝ սխալ ըմբռնուած ազատութեան, լրբութեան սահմաններուն հասնող ապերասանութեան, դէպ ի անիշխանականութիւն առաջնորդող ծայրայեղութեան այլապէս աղետաբեր վճանգներէն զերծ մնալու համար: Եւ այս վերջին վճանգները աւելի՛ հաւանական են դեռ երէկ ստուկ՝ ազատութեան նորընծայ ժողովուրդներու համար, քան՝ իր ասելի յիշատակներովը սակաւին ամենուն մտքին մէջ քարմ՝ բռնապետութեան վերադարձի մը կարելիութիւնը:

Ռամկավարութեան ուսումը, ռամկավարական առողջ գաղափարներու տարածումը պիտի ծառայէր իբր փարոս մը՝ իբր կողմնացոյց մը՝ շառաջդիմութեան նամբուն վրայ նոր քեւակոխող անփորձ ժողովուրդներուն համար: Այդ կողմնացոյցով պիտի փալենի առաջ՝ առանց ետ դառնալու. բայց եւ մեր շառաջխաղացութեան ընթացքին՝ պիտի չի մոլորին սխալ նամբաներու մէջ ու պիտի չի վազեն անկարելիութեանց ու անհասանելի հեռապատկերներու ետեւէն: Միապեսական բռնապետութեան չարիքներէն նո՛ր ազատուած՝ պիտի չիյնան ռամկավարական բռնապետութեան կամ կուսակցական խուժանապետութեան լուծին սակ:

Մէկ ու կէս տարուան իրադարձութիւնները, թէ՛ օսմանեան ընդհանուր կեանքին եւ թէ՛ մեր ազգային ներքին կեանքին մէջ, աւելի քան կը հաստատեն վերեւ մասնաւեռուած վճանգներուն իրական գոյութիւնը եւ՝ ժողովուրդը այդ վճանգներէն զերծ կացուցանելու համար՝ ռամկավար

րական գաղափարներու սարածման ամենակարեւոր պէտքը:

Աւելորդ չենք համարիր նաեւ ըսել թէ, սկրզբունք մը դնելը, աշխարհահայեացք մը բանաձեւելը չի նշանակեր զայն անմիջապէս, մէկ օրէն միւսը, միահաղոյն կերպով գործադրելու ելնել: Մեր նպատակն է հոստեղ ուրուագծել, բանաւորապէս ըմբռնելի եւ գիտականապէս իրագործելի այն փաղափական վիճակը որուն կը ձգտինք հասնիլ եւ որ կը կազմէ ամէն փաղափակիրք ընկերութեան կատարելասիւք (*idéal*) հեռանկարը: Կուգենք խնամով եզերագծել Ռամկավարութեան սանձանները, եւ ցոյց տալ թէ՛ այդ սահմաններէն փայլ մը ետ՝ պահպանեղականութիւնն ու յետադիմութիւնն է, ու փայլ մը առաջ՝ անիշխանականութիւնը եւ կամ ցնորքներու աշխարհը: Իսկ մեր նպատակակէտին պիտի հասնինք աստիճանական յառաջխաղացութեամբ, հանգրուանէ հանգրուան. պիտի փալենք միշտ առաջ հաստատ եւ կռուած փայլերով, առանց մուլեկան վազքի, առանց խիզախ ոսումներու:

Այս կէտը շեշտելու այնչափ պէտք պիտի չտեսնէինք, եթէ չափազանց վաղվաղկոտ եւ արկածախնդիր մտքեր, «գիտական *parvenu*»ներու եւ *déclassé* ներու ամբողջ բանակ մը՝ կանխած չըլլալին մեզի հրամցնել՝ իբր բացարձակ եւ անյեղի նշմարութիւններ, իբր «կեանքի մէջ» իրագործելի այժմէութիւններ՝ մենէ տասնապատիկ յառաջադէմ ազգերու մէջ դեռ հազիւ ծնունդ առած

կարգ մը վիճելի վարկածները եւ ենթադրական վարդապետութիւնները :

Այսօր մեր ազգին առջեւ՝ բարոյական, կրթական, ընկերային ու սնեստական բարեօրոյմի հսկայ գործ մը կայ, իր անմիջական, հրամայողական պահանջներով: Մեր արդէն ՏԳԷՏ, յեսամնաց ու թշուառ ժողովուրդը այսօր անելի քան երբեք անկումի ու վաստատումի վիճակ մը կը ներկայացնէ. ու մենք, այս ընդհանուր ու կասարեալ ֆայնայումի (*débâcle*) պակտերին առջեւ՝ մեր ազգային կեանքի ամբողջ անկերպարան ֆառսը կերպարուելու, կամ, ինչպէս պիտի ըսէր Զօլա, «դէպ ի ապագան ֆալելու եւ ամբողջ ազգ մը վերաբնելու մեծ ու դժնդակ գործը» ունինք. գործ մը՝ որուն համար պէ՛տք ունինք մեր բոլոր գիտակից եւ կենսունակ ուժերուն, մեր բոլոր բարի կամեցողութիւններուն համերաբելու ու ներդաշնակ գործակցութեանը. եւ սակայն մեր ինքնակոչ «դեկավարիչ ուժերը» մեր մէջ գոյութիւն ունեցող ազգային համերաբելութեան վերջին կապերն ալ կուզեն խորսակել՝ յանուն եւ ի սէր իրենց վերացական «ամենայառաջագէտ» վարդապետութիւններուն . . . :

Այս կացութեան հանդէպ է որ պարտք կը գգանք ի վեր հանել նեւարիտ ազատականութեան արժանիքները եւ նեղորոշել լաւ ըմբռնուած ռամկավարութեան սահմանները՝ սովետական եւ ծայրայեղութեան ասպետներուն սնամէջ, ամբարտաւան եւ բացարձակապաշտ վարդապետութեանց դէմ :

Ըսինք եւ կը կրկնենք թէ, այսօր մեր ազգին, մեր ժողովուրդին վիճակը ամէն տեսակէտներով անմխիթարական եւ նոյն իսկ յուսահասական է: Պիտի մնա՞նք այս վիճակին մէջ. բայց այս համա՛նիւ պիտի ըլլար ազգային կործանումի ու կորուստի: Ո՛րչափ վիրաւորիչ երեսայ այս նեմարտութիւնը մեր ազգային հպարտութեանը, պէ՛տ է խոստովանինք թէ մեր ազգային գոյութիւնը ի վրձանգի է այսօր, եւ չե՛նք կրնար ինքզինքնիս խաբել թէ պիտի կարենանք խուսափիլ անդամանելի անկումէ մը, որուն եզերքը հասած ենք արդէն, եթէ ինքզինքնիս վերանորոգելու գերագոյն նիգ մը չընենք եւ *Նոր Հայութիւն* մը ի հանդէս չի բերենք: Ի՞նչ կէտի վրայ պէ՛տ է տեղի ունենայ այս վերանորոգութիւնը, եւ մինչեւ ո՛ր աստիճան ստիպողական է զայն իրականացնել: Ահա այս կէտերը լուսաբանելու եւ մասնանիւ բնելու պիտի ծառայեն մեր ձեռնարկած *Ռաւկա վար Մասե-նադարան* ին զանազան հասարկերը: Կանխաւ գիտենք որ մեր առաջադրած հրատարակութիւնները չպիտի գոհացնեն ո՛չ աւանդապաւս մտերը եւ ո՛չ ցնորապաւսները: Նկատելի է արդարեւ որ, մեր մէջ այս խնդիրներով զբաղողներուն մեծագոյն մասը՝ ինքզինքնին շատ պզտիկցած կրգզան, եթէ չառաջարկեն՝ մէկ հարուածով վեր ի վայր երջել մեր ազգային, կրօնական, ընկերական եւ ընտանեկան բոլոր կարգ ու սարէերը, մեր քաղաքական ու տնտեսական բոլոր գաղափարներն եւ ըմբռնումները, եւ եթէ մէկզմէկ չի գե-

րագանցեն՝ իրենց ծրագիրներուն եւ պլանօրօմներուն յանդգնութեամբք եւ սարօրինակութեամբք (*). մինչդեռ միւս կողմէ ունինք շատ մը մարդեր ալ՝ մասնաւորապէս մեր ազգին գլուխը գննողներուն մէջ՝ որոնք կը կարծեն ամէն բան վստանել եւ կամ յանդուզն ու թեթեւամիտ մարդերու կարգը դասուիլ, եթէ իրերու հաստատեալ կարգին մէջ ոեւէ համեայ փոփոխութեան մը ոգի ի բոլին չի հակառակին: Այս երկու հակընդդէմ ուղղութիւններու հանդէպ՝ ժողովուրդը շուարած՝ ի՛նչ ընելիք չի գիտեր եւ անկարող կըլլայ գտնել միջին համբայ մը՝ ոմանց կոյր աւանդամայութեան եւ ուրիշներու փոքուրոյց նոռամարանութեանց միջեւ:

Ահա այս երկու կողմերուն ալ չպիտի կրնար հանելի ըլլալ մեր ձեռնարկը. բայց արդէն անոնց չէ՛ որ կուղղենք մեր խօսքը, այլ ժողովուրդին այն յրջախօսի եւ անկասեկանօ մասին, որ բաւական խելք եւ ուսում ունի՝ այս խնդիրները գիտակցաբար եւ անաչառապէս դատելու, եւ բաւականաչափ գերծ է նախապաշարումներէ՝

(*) Կարծե՛ անգամ մը աչքե անցընել Դաշնակցական եւ Հնչակեան նորագոյն, անեկալերջին Մրագիրները եւ Պլանօրօմները՝ հարեղուէրու համար մեր այս հաւաստումին նշմարնութեանը, եւ հաստատելու համար որ այս Կուսակցութեանց վարիչները, ա՛յնքան ղաժան ու սուղ փորձառութիւններէ վերջ ալ, սակարիկ բա՛ն մը չեն սորված, եւ ո՛չ ալ բան մը սողացած են իրենց քուրակօրէն սերսած ծակօր բանաձեւերէն եւ կայկօրէն հետեւած «սիրական մեքոս»ներէն:

զանոնք լուծելու համար՝ սովորական ուղղամտութեան եւ ազգային շահերու թելադրած եղանակաւ:

Ռամկավարութեան վրայ մեր այս ուսումնասիրութիւնը նոր եւ ինքնատիպ բան մը չէ, եւ ո՛չ ալ հեղինակի յաւակնութիւնը ունինք. ծայրէ ծայր փաղուածք մ'է, եւ մեծ մասամբ բառացի քարգմանութիւն մը՝ առաջին մասը՝ Հանրի Միւսելիի «*La Doctrine politique de la Démocratie*» գրքովէն, երկրորդ մասը՝ Maurice Bourguinի «*Les Systèmes Socialistes et L'Évolution Économique*» հոյակապ հեղինակութենէն, եւ երրորդ մասը՝ Prévost-Paradolի «*La France Nouvelle*» հասորին առաջին գիրքէն, հազիւ տեղ տեղ թեթեւ փոփոխութիւններով՝ մեր ազգային կեանքին պստանեցնելու համար զանոնք:

Այն օրէն ի վեր երբ ռամկավարութիւնը իմաստաւորներու եւ փաղափաղէտներու խորհրդածութեան առարկայ դարձաւ, պարզուեցան շատ մը հայեացքներ որոնք ապա փորձառութեամբ ալ հաստատուեցան. այնպէս որ այս ծանրակշիռ հարցերուն հանդէպ անպատեհ գրական սնափառութիւն մը պիտի ըլլար հրաժարիլ նեւարտութենէն, որովհետեւ նորութեան հրապոյսը չունէր այն: Քաղաքական գիտութիւններու համար օգտակարութենէ զուրկ չէին սակայն տասնեփններորդ դարուն մէջ փորձուած — եւ նոյն իսկ վիժած — զանազան փաղափաքական փոփոխութիւնները, եւ կը սիրենք կարծել թէ՛ սոյն գրքոյկի

մէջ բռնափութեամբ նիւթերը, որոնք մեր երկրին մէջ տեղի ունեցած վերջին անցուղարձեւումն եւ յեղաշրջումներուն շնորհիւ ալ այժմէականութիւն ստացած են, բաւականաչափ պայծառ եւ մեկին կերպով բացատրուած են՝ այս կարգի ուսումնասիրութիւններով շահագրգռուող անձեւո՞ւ ուժադրութեան արժանանալու համար:

Առանց յուսալու որ իմ եւ ընկերակիցներուս հրատարակութիւնները պիտի ծառայեն բաժանեալ միտքերը համաձայնեցնելու կամ մեր յամառ վարդապետականները (*Doctrinaires*) դարձի բերելու իրենց սիրական ընկերվարական-յեղափոխականութենէն, կը յուսամ որ գոնէ անկաշկանդ ընթերցողը չպիտի կասկածի դիտարարութեանս անկեղծութեանը վրայ եւ կուսակցական գծուծ նկատումներու չպիտի վերագրէ իմ անաչառ — եթէ երբեմն նոյն իսկ անողոք — դատողութիւններս: Ո՛չ իրեւու նկատմամբ նախապաշարումն է որ զիս կը թելադրէ եւ ո՛չ անձեւո՞ւ դէմ կիրքը: Ընդհակառակը, այն անձեւո՞ւ շարքին մէջ, որոնց ուղղութիւնը եւ վարդապետութիւնները կը դատարկեմ, ունեցած եմ եւ ունիմ բազմաթիւ բարեկամներ, որոնց հետ մեր երբեմնի ընկերակցութեան եւ յարգանքի կապերը եւ յիշատակները անխզելի եւ անջնջելի են:

Եթէ Հայ Յեղափոխութեան մէջ իմ համեստ բաժինս ունեցած եմ, — այս ալ առանց յաւիճութեան, — երբեք չեմ նկատած յեղափոխական գործունէութիւնը՝ իբրեւ մշտնջենական եւ յատեժական անհրաժեշտութիւն մը, այլ վայրկեա-

նի պահանջ մը բռնութեան եւ ննուսի վերացման եւ Ազատութեան, եւ անոր հետ՝ անդորրութեան եւ օրինականութեան՝ սիրապետութեան համար: Երբեք չեմ պատկանած «Յեղափոխութիւնը Յեղափոխութեան համար» դպրոցին: (*)

Վերոգրեալ պարագաները մասնաւորապէս ինծի անելի իրաւունք կուտան – եւ իմ վրաս քաղաքացիական պատճի կը դնեն – մտքի կատարեալ անկախութեամբ եւ անվերապահ անաչա-

(*) Այս կէտի մէջ աչ անջրպէս մը բացուած է ինծի պէս մտածողներու եւ իրենց դրօշին «հաւասարիւն» - չըսելու համար մոլի կամ գերի - մնացողներու միջեւ, որոնք անհաւասարի՝ եւ շարժառիթներու տեսակէտէն գերազանցապէս յատկանշական՝ հակասութեան մը մէջ կիշնան, մեկ կողմէ իրենք գիրենք յայտարարելով իրենց նախկին յեղափոխական կարմիր պատմուճակէն մերկացած օրինական-քաղաքական կազմակերպութիւն, եւ միւս կողմէ՝ ծաղրելով ու հեզկելով ուրիշ խմբակցութիւններու նոյնպէս օրինական-քաղաքական նկարագիրը, եւ իրենց մասին՝ շարունակելով քարճարքարքառ պակճացնել անվերածելի յեղափոխականութիւն մը, եւ սոնֆաշով իրենց յեղափոխական կազմի, «ոռամական եւ մատրական ուժերու» հզօրութեան եւ անպարտելիութեան վրայ...

Թերեւս մեր այս տղերն աչ չվարանին որակել - ինչպէս ըրին ուրիշներունը - իբրեւ մասնութիւն: Բայց ի՛նչ փոյր. Օսմ. Սահմանադրութենէն վերջ հրասարակուած իրենց ամբողջ «յեղափոխական» սանձարձակ մտեւագրութիւնը եւ իրենց անկարելի՝ բռնցիկները մեջտեղն են. մեջտե՛ղն են նաեւ քաղուած արդիւնները... եւ ողջամիտ հասարակութեան կը մնայ դատել ու եզրակացնել:

նութեամբ իմ կարծիքս յայտնելու՝ օրուան վէճի նիւթը կազմող այս նարցերուն շուրջը: Նոյն անկեղծութեամբ գրեոյցիս վերջաբանին՝ մէջ մասնանշած եմ մեզի եւ ամբողջ օսմանեան հայրենիքին սպառնացող վտանգներէն մէկ բանին եւ փորձած եմ ծրագրել գործունէութեան այն ուղղութիւնը զոր արդի պարագաները կը թելադրեն:

Արդարեւ, ժամանակ է որ ամէն մարդ ըստ ինչ որ կը խորհի, եւ վերջ մը գտնէ այն բաղաձայն կեղծատրութիւնը որ մեզ կը սարնացնէ եւ կը մաշեցնէ միանգամայն:

Անո՛նք որ կը կարծէին թէ շողափայտութիւնը բռնապետական բէժիմին մենաշնորհն էր եւ թէ այդ կեղծատրութիւնը չէր կրնար ծաղկիլ սահմանադրական կամ ռամկավարական ընկերութեան մը մթնոլորտին մէջ, այսօր փորձառութեամբ պատրաստաբախ եղած պէտք է ըլլան: Ընդհակառակը, ինչպէս ուրիշ երկիրներու մէջ տեսնուած է, մեր երկրին մէջ ալ տեսնուեցաւ թէ՛ սահմանադրական բէժիմի սակ եւս շողափայտութիւնը կրնայ անիլ եւ ուռնանալ, եւ նոյն իսկ կրկնակի պատճօն կատարել եւ կրկին սնունդ գտնել: Ոմանք, պարզապէս նետելով իրենց ճիւղն ու վարութեանը, կը շողափայտեն պատճօնակալութիւնը (*bureaucratie*) կամ ռամկավարական բռնապետութեան եւ խուժանակարութեան ասպետները, ուրիշներ՝ պատճօնակալութեան զեղծումներուն դէմ յեմակէտ մը փնտռելու պատրուակին սակ


խղնի կասաւեալ ապահովութեամբ կը փառաբանեն ժողովուրդը: Եւ դեռ չարիքը այնչափ մեծ եւ այնչափ սխրօրէն գայթակղական չպիտի ըլլար, եթէ իւրաքանչիւր շողոքօրք միայն մէկ կողմը խնկարկէր. բայց դժբաղդութիւնն այն է որ, կը գտնուին աւելի նարպիկ շողոքօրքներ որոնք պատճօնակալութիւնը եւ ժողովուրդը միանգամայն կը շողոքօրքեն, հասասար անպատշաճութեամբ եւ կրկնակի շահադիտութեամբ: Այս տեսակէտով շատ խոր խեղկասակութեանց հանդիսասես եղանք Յով. Սահմանադրութեան հրոյսակումէն ի վեր. բայց է յիշել այս կարգին, ինչ բացառութեամբ, թուրքահայ մամուլին երկարատեւ սպասարկութիւնը Հայ Կուսակցութեան մը շահերուն, հլու հպատակութիւնը բարձրէն եկած հրամաններուն եւ պատգամներուն. արեւ մը՝ արմէ հազիւ ինչ մը սրբութեամբ մամուլը վերջին մէկ քանի ամիսներուն մէջ. եւ երկրորդ՝ հայ կուսակցութիւններէ մասնաւորապէս մէկին յանախաղէպ դիմաւորութիւնները (*volte-face*) հանդէպ օսմանեան ֆօքիթներուն, որոնցմէ օր մը Անրարականները եօթներորդ երկինքը կը բարձրացուէին եւ Իթքիհասականները գետնէ գետին կը զարնուէին, եւ ուրիշ օր մը յանկարծ նոյն Իթքիհասականները երկնային հրեշտակներ կը ներկայացուէին եւ անոնց հետ եղբայրական համեմատութեան դաշտնակներ կը փոխանակուէին . . . : Կեղծիքի, խարդաւանանքի իրենց դերին մէջ թողունք անոնք որոնք անբաժելի են այս խոր

սովորութենէն, բայց չերթանք ստուարացնելու այդպիսիներուն քիւր: Մենք հրաժարինք սնոսի կուտիւր ստեղծելէ՝ ո՛չ վերը եւ ո՛չ վարը: Ի՞նչ-պէս կրնանք պարծիլ թէ չենք խնկարկեր թագերու եւ մականներու առջեւ, երբ անդին կերկրպագէնք «մասսա»ներու անգոյն խառնակոյսին, կը փայփայենք ժողովուրդին բնագոյները, շահագործելով անոր դիրահաւան միամտութիւնը:


Այդ ընթացքը կրնայ թերեւս վաւաստիչ ըլլալ եւ դիրին յաջողութիւններ ապահովել: Բայց ի՞նչ օգուտ այն ժամանակաւոր յաջողութիւններէն որոնք ձեռք կը բերուին ստորնացումով ու կեղծիքով: Ի՞նչ չափով որ զոհենք մեր անկեղծութիւնը եւ մեր ուղղամտութիւնը, նո՛յն չափով կը վնասենք Ազատութեան եւ Հայրենիքին:

Աղեֆսանդրիա

Մ . Տ Ա Մ Ա Տ Ե Ա Ն



Ա. Ռ. Ա. Ջ. Ի. Ն. Մ. Ա. Ս.



A ¹¹/₁₀₁₄₅

Ռ Ա Մ Կ Ա Վ Ա Ր Ա Կ Ա Ն

Ա Շ Խ Ա Ր Յ Ա Յ Ա Յ Ե Ա Յ Բ Ը



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ




Այս Առաջին Մասին նպատակն է՝ հաստատել որ, ինչպէս ամեն իրաւակարգ (*régime*), նոյնպէս Ռամկավարութիւնը պէտք է ունենայ իր սեփական աշխարհահայեացքը. ցոյց տալ քէ ռամկավարական աշխարհահայեացքին տարբեր շահունց ի յայտ եկած եւ իմաստասերներու կողմէ բանստեւում են. վերջապէս, ուրուագրել այդ աշխարհահայեացքը՝ իր խոտոր գծերով:



Ա.

ՌԱՄԿԱՎԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՀԱՅԵԱՅԻՒՄԻ ՄԸ ՊԷՏԻՐ



Գաղտնիարներու պատմութիւնը ցոյց կուտայ թէ, քաղաքական ամէն վիճակները սրոնցմէ անցած է ճարչութիւնը, ունեցած են իրենց աշխարհայեացքը, այսինքն ամբողջութիւն մը հայեացքներու՝ (thèses) այնպէս մը շարկապուած իրարու հետ, որ անոնցմէ ո՛չ մէկը կարելի ըլլար ատանձին գաւանիլ կամ առանց հակասութեան զուգորդել տարրեր ամբողջութեան մը հետ :

Բացարձակ միապետութիւնը ունեցած է իր աշխարհայեացքը, եւ այս այնչափ ծանօթ է՝ որ չարփեր կանգ առնել անոր վրայ : Այս բանը առաջին պատճառ մ'է ընդունելու համար որ, սահմանադրական միապետութիւնն ու ռամկավարական հանրապետութիւնն ալ՝ իրենց կարգին՝ ունենալու են իրենց աշխարհայեացքը (*): Բայց այս չէ՛ միակ պատճառը :

(*) Հոս սահմանադրական միապետքիւնը եւ հանրապետքիւնը միասին նկատի առած ենք, որովհետեւ նեմարապէս ռամկավարական միապետքեան եւ հանրապետքեան միջեւ տարբերքիւնը աւելի ձեւական է քան թէ՛ հիմնական : Առաջին ձեւին մէջ, պետքեան գլուխին իշխանութիւնը ժառանգական է, երկրորդին մէջ՝ ընտրեանէ կը բղխի. բայց երկու պարագային ալ՝ անոր իրաւասութիւնները օրէնքով սահմանադրուած են եւ թո՛ւն գերիշխանութիւնը ժողովուրդին կը պահանքի :

Արդարեւ, դիտուած է նաեւ թէ՛ ընկերութեան (*)
մը համար՝ քաղաքական աշխարհահայեացքը ուժի պայ-
ման մ'է : Քաղաքական ընկերութիւն մը երբ հաս-
տատ կերպով կը կառուցի իր աշխարհահայեացքին, ապ-
րելու ուրախութիւնը եւ հպարտութիւնը կը դառնայ,
վասն զի այն գիտակցութիւնը կունեննայ թէ կապրի-
բարիք մը իրականացնելու համար, եւ դիւրաւ կը
համոզուի՝ թէ նպատակը զոր կը հետապնդէ՝ բարիք-
ներուն գերագոյնն է : Այդ ընկերութեան անդամնե-
րուն աչքին, ո՛չ միայն ներկան կըստանայ մեծ կա-
րեւորութիւն մը, իրքեւ ոստայնը որով պիտի հիւսեն
իրենց գործը, այլ եւ ապագան կը լուսաւորուի իրենց
համար : Երկարժամանակեայ ծրագրերներ կը շինեն, ու
կերեւակային թէ ժամանակ պիտի ունենան զանոնք
իրագործելու : Ճի՛շդ է թէ որոշ չափով պատրանք
մը կայ ասոր մէջ . եւ իրօք՝ պատմութիւնը ցոյց կու-
տայ թէ, շատ մը իրաւակարգերու վարդապետութիւններ
յաջորդաբար գերեզման իջած են : Բայց այդ պատրանքն
իսկ շինիչ ու բարեբար է : Ընկերութիւն մը, որ տե-
ւական վաղորդայններ ողջունելու հաւատքը չունի, եւ
ապագային համար չաշխատիր, իր գործունէութեան
մէջ բոլորովին զուրկ կըլլայ վճռականութենէ եւ բա-
րոյական կորովէ :

Հաւատք ունենալ ինքիր վրայ, հաւատալ թէ
գործուածը բարի է եւ թէ այն գործէն որուն կը նուիր-
ուի մարդ՝ լաւագոյն արգասիքներ պիտի ծնին վաղը,

(*) Ընկերութիւն բառով պէտք է հասկնալ ոեւէ քաղաքա-
կան համախմբում մը, ինչպէս Ժողովուրդը, Ազգը, Պետութիւնը,
Կուսակցութիւնները :

Ետեղիկ ապագային, եւ ընդ միշտ, — ահա՛ ինչ որ կը կազմէ ժամանակի մը եւ երկրի մը մեծագոյն ոյժը: Մեր երկիրը, մեր ազգը եւ մեր ժամանակը քաջ գիտեն այս ճշմարտութիւնը, ճիշդ այն պատճառով որ այս զգացումին, այս եռանդին եւ այս գիտակցութեան պակասէ՛ն է որ կը տառապին: Քաղաքական դաւանանքի մը բացակայութիւնը մեր ժողովուրդի հիւանդոտ վիճակին զխաւոր պատճառներէն մին կը կազմէ. — չեմ բսեր միակը, զի տնտեսական պայմաններն ալ անտարակոյս իրենց դերը ունին, եւ ո՛րչափ ծայրայեղութիւն է տնտեսական պայմաններու ազդեցութեան վերադրել ամէն բան, նոյնչափ սխալ է ուրանալ անոնց ազդեցութիւնը:

Դիտելի է նաեւ որ, եթէ ժողովուրդին մէջէն բաւական մաս մը այսօր կը հրապուրուի իրեն հրամցուած ընկերավարական-յեղափոխական վարչապետութիւններէն, եւ ուրիշ մաս մը տրամադիր կերելի արհամարհել ամէն քաղաքական գործունէութիւն եւ տարամերժօրէն Եկեղեցիէն սպասել ո՛չ միայն կրօնական եւ բարոյական ուղղութիւն, այլեւ ընկերային եւ քաղաքական ամէն բարելաւում, այս երեւոյթին շարժաւիթներէն մին է ա՛յն հմայքը որ կազդէն ժողովուրդին մտքին վրայ՝ ինչպէս ընկերավարութեան նոյնպէս կրօնքի՝ վճռական վարչապետութիւնները եւ անոնց խոստացած փայլուն հեռապատկերները: Կրօնքի եւ ընկերավարականութեան քով զեռ կան՝ աւելի տարտամ եւ անյարակից վարչապետութիւններ ալ, ինչպէս մօլեռանդ ազգայնականութիւնը (chauvinisme), որոնք այսօր իսկ ժողովուրդներու մտքին վրայ որոշ չափով ազդեցութիւն մ՛ ունին, որովհետեւ իրենք ալ կուռ եւ

հաստատուն վարչապետութեան մը վրայ հիմնուած կը ձևւանան: Հետեւաբար, եթէ ուսմիավարութիւնն ալ որոշապէս գծէր իր դաւանանքը, — դաւանանք մը՝ որ ո՛չ շիջելափառ անցեալի մը աւանդութիւնը ըլլար եւ ո՛չ տակաւին անստոյգ սպառօյլի մը նախագուշակութիւնը, — պարկեշտ եւ ողջամիտ քաղաքացիներու մեծամասնութիւն մը սիրով պիտի ընդգրկէր ու որդեգրէր զայն եւ անոր մէջ պիտի գտնար անշուշտ գոհացումը պէտքի մը՝ նոյնչափ տրամաբանօրէն որչափ բարօշական, որուն գոյութիւնը արդէն մատնանիչ ըրինք:

Բայց հոս լուրջ առարկութիւն մը կրնայ տուած ընթացիլ: Կրնայ մեզի հարցուիլ թէ՛ ուսմիավարական աշխարհահայեացք ըսելով՝ արդեօք կուզենք բացարձակ «Պետական վարչապետութիւն» (*doctrine d'État*) մը հաստատել: Այդ պարագային չէ՛ր արժեր, պիտի ըսեն, այնչափ բողոքել բռնապետական կարգերու կամ կրօնքի բացարձակ տիրապետութեան եւ կամ նոյն խնդրն ընկեր վարականներու բացարձակապաշտութեան դէմ: չէր արժեր, վերջապէս, արդի տարըր՝ Ֆրանսական Յեղափոխութենէն առաջ եկած նոր ընկերութիւնը՝ ներկայացնել իրեն բոլորովին անընդունակ՝ վերադառնալու հին կարգերուն եւ աւանդութիւններուն:

Նախ անցողակի միայն դիտել տանք թէ՛ պետական վարչապետութիւն մը յօրինելու այս ամբաստանութիւնը մեր երեսին կը նետուի ընդհանրապէս այնպիսիներէ՛ որոնք, իւրաքանչիւրը իր պատկանած միավետական, կրօնական կամ ընկերվարական գաղտցիկ համաձայն, պիտի չվարանէին ամէն ներքիւ եւ աններքիւ միջոցներ ի գործ դնել իրենց վարչապետութիւնը հանրութեան պարտաւորիչ դարձնելու համար: Բայց

մէկդի թողլով այս պարագան, որ բաւական ուշագրաւ է սակայն, ընթերցողին ուշադրութեանը կը յանձնարարեմ երկու կէտ :

Առաջին թէ, պետական վարդապետութիւն մը (ենթադրելով իսկ որ զայն փափաքելի համարէինք մենք, ինչ որ ճշմարիտ չէ,) շատ տարբեր պիտի ըլլար իրենց դաւանած անվերածելի եւ ճնշող վարդապետութիւններէն: Բռնապետութիւնը, կրօնքը, ընկերվարակաւնութիւնը կը գրաւեն, կը զերեն բովանդակ մարդը: Անոր կը պարտադրեն բացարձակ համակերպութիւն ո՛չ միայն իր գործին եւ իր ընթացքին մէջ, այլ եւ իր հաւատքին ու իր բարոյական յոյզքին (զգացումներուն) մէջ: Ընդհակառակը, պետական վարդապետութիւնը քաղաքացին ազատ պիտի թողուր, բացարձակապէս ազատ իր մտածումին ու իր հաւատքին մէջ: Շատ շատ, խիստ մասնաւոր պարագայի մը մէջ, - այսինքն, երբ պետութեան ծառայութեան մէջ մտնէր իբրեւ հանրային պաշտօնատար, զեր մը ուր ուսմկավարութեան սկզբունքներուն հաւատարմութիւնը իբր օրինական պարտաւորութիւն մը կը ներկայանայ, - անհատը հարկադրուած պիտի ըլլար իր անձին եւ իր հայրենակիցներուն հանդէպ յանձն առնել չի հակառակելու կամ չի դաւաճանելու այդ սկզբունքներուն: Կը կրկնենք թէ այսպէս ըմբռնուած պետական վարդապետութիւն մը տեւ է նմանութիւն չունի վերեւ ակնարկուած վարդապետութիւններու բռնադատող բռնաւորութեանը հետ:

Բայց կը փութանք աւելցնել թէ, երբ այստեղ հետամուտ կըլլանք փնտոելու թէ ի՛նչ պէտք է ըլլայ ուսմկավարութեան քաղաքական աշխարհահայեացքը,

եւ երբ կը ջանանք հաստատել թէ ուսմկաւարութիւնն ալ պէտք է ունենայ իր սեփական դաւանանքը, երբեք մտքէ չենք անցուներ խորհուրդ տալ որ այդ աշխարհահայեացքը պէտք է ցցուի իբր «պետական վարչապետութիւն», նոյն իսկ մեր նշանակած ճշգրիտ եւ մասնաւոր իմաստովը:

Գալով այն կէտին թէ, պէ՞տք է կամ պէտք չէ՞ որ ուսմկաւարութիւնը միջոցներ ձեռք առնէ հաւատարիմ պաշտօնեաներ ունենալու համար, այդ կէտը աւելի գործնական խնդիր մ'է քան թէ սկզբունքի խնդիր մը: Ամէն իրաւակարգ իրեն կը վերապահէ՝ պատշաճութիւններու եւ պարագաներու պահանջմանց համաձայն՝ որոշել իբր պաշտպանողական մասնաւոր միջոցները: Տարակոյս չկայ որ, աշատութեան բէժիմի մը տակ՝ այդ միջոցները պէտք է յարգեն անհատական իրաւունքները: Բայց նոյնչափ յայտնի է թէ, անհատական իրաւունքներու կարգին մէջ չէ՛ պետական պիւտճէէն թոշակ ստանալու իրաւունքը: Այս կէտը ճշգրիտ վերջ, ջանանք ցոյց տալ թէ ի՛նչպէս ուսմկաւարութիւնը կրնայ ունենալ իր քաղաքական աշխարհահայեացքը, առանց դայն դարձնելու պետական վարչապետութիւն մը:

Պետական վարչապետութիւնը դուրսէն պարտադրուած վարչապետութիւն մ'է, որուն մարդ կը համակերպի՝ առանց հաւատալու, կը հնազանդի՝ առանց սիրելու: Թո՛ղ միանգամ ուսմկաւարութիւնը ի հանդէս բերէ այն աշխարհահայեացքը որ ամենէն աւելի կը համապատասխանէ իր ձգտումներուն եւ ըմբռնումներուն՝ ընկերութեան, կառավարութեան, քաղաքացիներու իրարու մէջ եւ անհատին Պետութեան հետ յա-


բարեբուժեանց մասին, եւ ես վստահ եմ որ այս աշխարհահայեացքը ինքիր մէջ պիտի ունենայ ա՛յնպիսի համոզիչ զօրութիւն մը, որ միտքերը եւ սրտերը ինքնաբերաբար պիտի բացուին անոր առջեւ. բա՛ւ է որ զայն ուսուցանելու գոյզն ջանք մը ըլլայ, առանց երբեք պէտք ըլլալու օրինական կամ ուրիշ կերպով պարտաւորիչ միջոցներու շինելու: Միակ պայմանը այն է որ՝ այս աշխարհահայեացքը գործօն կերպով ուսուցուի, յարատեւ կերպով քարոզուի: Ռամկավարութեան անվիճելի իրաւունքն է - ես պիտի ըսեմ՝ նաեւ պարտքը քարոզել իր սկզբունքը: Ամենամեծ եւ ամենալիստակար պատրանք մը պիտի ըլլար կարծել թէ՛ քաղաքական եւ ընկերային ճշմարտութիւնը ինքնիրեն պիտի ճառագայթէ: Թերեւս այդպէս պատահէր, եթէ կուսակցութիւնները եւ ազանդաւորները ձեռնածալ նըստէին: Բայց քանի որ անոնք կը գործեն ու կը քարոզեն անդադար - ինչ որ իրենց իրաւունքն է -, Ռամկավարութիւնն ալ պէտք է նոյնը ընէ, եթէ չուզեր նուազած տեսնել ճշմարտութիւնը իր մէջ փնտռողներուն թիւը: Ուստի հարկ է որ Պետութիւնը (*) իր տրամադրած բոլոր միջոցներով հետամտի լայնօրէն տարածելու ռամկավարական սկզբունքները, եւ բոլոր ձեռնհաս հանրային գործիչները իրենց բովանդակ ու շարժութիւնը նուիրեն այս աշխարհահայեացքի ծաւալումին: Դժբաղդաբար այս անհրաժեշտ գործը բոլորովին անտես առնուած է մինչեւ հիմա:

(*) Չոս Պետութիւն բառով պէտք է հասկընալ նաեւ Ազգայնական կուսակցական կուսակցութիւնները, զի այս գլխուն մէջ պարզուած տեսութեանց եւ խորհրդածութեանց գրեթէ ամբողջութիւնը կը պահանջին՝ ինչպէս ռամկավարական պետութեան մը, նոյնպէս ռամկավարական Ազգի մը կամ կուսակցութիւններուն:

Եթէ այսպէս ուսմկաւարութեան քաղաքական դաւանանքը մինչեւ ցարդ որոշակի սահմանուած չէ, անկէ աւելի ուշադրութիւն չէ՛ դարձուած ուսմկաւարական գաղափարատարածման ծառայող կանոնաւոր եւ ընդարձակ կազմակերպութեան մը անհրաժեշտ պէտքին վրայ: Ըսել չենք ուզեր թէ այս ուղղութեամբ յիշատակութեան արժանի ջանքեր չեն փորձուած կամ կատարուած. բայց այս փորձերը զեռ բոլորովին կանոնաւոր, համակարգ (systematique) ձեւ մը առած չեն: Ընդհանրապէս կարծուած է որ ուսմկաւարական ծրագիրի մը կազմութիւնը բաւական է՝ որպէս զի հաւանութեան արժանանայ այն, թէ անոր գոյութիւնը կը բաւէ, որպէս զի ապրի ու յարատեւէ: Գաղափար մը չի յարատեւեր բայց միայն պայքարելով, այսինքն շարունակաբար իր գոյութիւնը ապացուցանելով: Ռամկաւարականութիւնը գաղափար մ'է. ասիկա իր տկարութիւնն է, բայց միանգամայն իր զօրութիւնը: Թո՛ղ այս գաղափարը ինքիւր գիտակցութիւնը ունենայ եւ ինքզինքը արոտայայտէ անդուլ կերպով. ահա այն ատեն անպարտելի պիտի ըլլայ, ըստ որում անհերքելի պիտի ըլլայ: Իսկ եթէ բաւական համարելով աւելի կամ նուազ պերճախօս կերպով բանաձեւուած ըլլալը, այլ եւս ասպարէզը թողու իմաստակութեան կամ իր սկզբանց հակառակող կարծիքներու ճարպիկ ցուցադրութեանը, — եւ գիտենք թէ այժմ այդ կարգի աճպարար ցուցադրութիւնները ամէն օր տեղի կունենան, — ուսմկաւարականութիւնը պիտի տկարանայ ճի՛շդ այն համեմատութեամբ որով զինք հերքելու ասպարէզ տուած պիտի ըլլայ իր հակառակորդներուն:

Բ.

ՌԱՄԿԱՎԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՀԱՅԵԱՅՔԻՆ ԾԱԳՈՒՄԸ



« Բոլոր ազատ սահմանադրութիւններու մէջէն , անտարակոյս՝ ամենէն առաջինն է Անգլիականը թէ՛ իր հնուութեամբը , թէ՛ կարեւորութեամբը , եւ թէ՛ իսկատիպութեամբը : Իր բոլոր մեծ գիծերովը ի հանդէս եկած է ուրիշ սահմանադրութիւններէ չորս հարիւր տարի առաջ : Այսօրուան բոլոր սահմանադրութիւնները աւելի կամ նուազ կաղապարուած են Անգլիականին վրայ : Իր մէջ կը բովանդակէ բանալին , բո՛ւն իմաստը շատ մը արամադրութիւններու գործնք չկրցան ըմբռնել կամ գիտակցաբար իրենց իսկական նպատակէն շեղեցուցին իրմէ նմանողաբար օրինակողները» (*) :

Անգլիական Սահմանադրութիւնը , որ կանուխէն գէպ ի ազատութիւն ուղղուած էր , դարերով հետեւեցաւ իր զարգացումին , առանց Եւրոպայի մնացեալ մասին լուրջ ուշադրութեանը առարկայ ըլլալու : Ըսել չենք ուղեր թէ իր ծննդավայրէն դուրս՝ բոլորովին անծանօթ մնացած էր : Ունեցած էր իր տեսականադէտները , ինչպէս Ֆօրթէսքիւ (Fortescue) ԺՆ. դարուն մէջ

(*) . Émile Boutmy , Études de Droit constitutionnel :

Եւ Թօմաս Սմիթ ԺԶ. դարուն մէջ, որոնց հեղինակու
 թիւնները կարգացուած էին ուրիշ երկիրներու, մաս
 նաւորապէս Յրանսայի մէջ, այսպէս, ԺԶ. դարու երկ
 րորդ կէսին, Յրանսայի մէջ քաղաքական ազատու
 թեան սկզբունքները սահմանելու ձգտող Միսպեսա
 վարճները (Monarchomaques) քաջածանօթ էին անգ
 լիական քաղաքական իրաւաբանութեան: Բայց տա
 կաւին աւելի բազմաթիւ էին անոնք՝ որ կը ջատագո
 վէին ու կը պանծացնէին բացարձակ միսպետութիւնը՝
 քաղաքական գիտութեան իբրև վերջին կատարելա
 գործութիւնը: ԺԷ. դարու անգլիական կրկին յեղա
 փոխութիւններն անգամ չատ քիչ տպաւորութիւն գոր
 ծեցին Ֆրանսական մտքերու վրայ՝ զուգադիպելով ներ
 քին ծանր երկպառակութիւններու եւ տագնապներու
 ժամանակաշրջանի մը: Բայց ԺԸ. դարուն մէջ երե
 ւոյթները փոխուեցան: Իմաստասիրական միտքը՝ այս
 դարուն մէջ մարդկութեան բարօրութեանը համար հե
 տամուտ ըլլալով քաղաքական գիտութեան, չի դիմեց
 միայն բանականութեան լոյսին եւ յաւերժական ար
 դարութեան տուիքներուն (domnées), այլ անհուն հե
 տազօտութեան մը ձեռնամուխ եղաւ՝ ո՛չ միայն Արեւ
 մուտքի, այլեւ Արեւելքի հին ու նոր պետութեանց եւ
 կառավարութիւններուն ձեւին ու կազմութեանը վե
 բարբրամբ: Թէեւ զանազան կէտերու մէջ այս հետա
 զօտութիւնը զերծ չի դանուեցաւ պատմական անձչդու
 թիւններէ եւ քննադատական սայթաքումներէ, սա
 կայն եւ այնպէս, այս հետազօտիչներուն մէջ զանուե
 ցաւ մեծահանձար մարդ մը՝ Մօնթէսքիէօ, որ իրա
 ւաբանական պատմութեան եւ ընկերաբանութեան ձըշ
 մարիտ հայրը եղաւ: Գլխաւորապէս իր յտակ տե

սուլթեանը եւ թափանցող մտքին շնորհիւ է որ, Ֆրանսայի մէջ Անգլիական Սահմանադրութիւնը ընդունուեցաւ եւ ճանչցուեցաւ, իբրեւ լաւագոյն լուծումը քաղաքական հարցին : Վօլթէոնի հանձարեղ միտքը այս կէտի մէջ համաձայն գտնուեցաւ Մօնթէսքիէօնի զիտական դատողութեանը հետ : Սակայն այս անգամ ալ երեւան եկաւ կարծիքներու տարբեր հոսանք մը, որու համաձայն անգլիական կարգուսարքերը արժամարնուեցան՝ իբրեւ լոկ փորձառութեան վրայ հիմնուած հաստատութիւններ, մինչդեռ այս նոր դպրոցին իմաստասէրները կուղէին առաջնորդուիլ մի միայն բանականութեան լոյսերէն, եւ կամ, եթէ երբեք պէտք էր պատմութեան դասերէն օգտուիլ, կը նախընտրէին տիպար քաղաքական կարգուսարքերը ուրիշ տեղ փնտռել, գլխաւորապէս Հոլմի եւ Յունաստանի հին հանրապետութիւններուն մէջ : Այս դպրոցէն էին ժան-ժաք Ռուսօ եւ Մապլի : Սակայն, հակառակ այս ամենուն, քաղաքական աշխարհահայեացքի կազմութեան մէջ առաջնակարգ դեր ունեցաւ անգլիական ազգեցութիւնը : Ֆրանսական Յեղափոխութեան Սահմանադիր ժողովին մէջ ալ, նախ անգլիական դպրոցը տիրապետեց, եւ եթէ Ֆրանսական բանապաշտ դպրոցը յաղթանակեց 1791ի Յայտարարութեան բանաձեւին խմբագրութեան ժամանակը, Սահմանադիր ժողովը իր վիճաբանութեանց ամբողջ ընթացքին՝ չի դադրեցաւ Անգլիական Սահմանադրութիւնը վկայութեան կոչել եւ ներշնչուիլ անկէ :

Միւս կողմէ, Ամերիկայի Միացեալ Նահանգները, ազատագրուելով իրենց մայր հայրենիքէն, իրենց նորածին Սահմանադրութեան մէջ սիրայօժար մտցուցին էական սկզբունքները անգլիական քաղաքական կարգ-

ուսարքին, որ արդէն իրենց համար այն կաթն էր զոր իրենց խանձարուրքին մէջ ծծած էին մայրական ստինքէն:

Անգլիական սահմանադրական սկզբունքները եւ սամկալարական ոգին՝ Արեւմուտքի սւրբիչ աղատ ազգերուն մէջ ծաւալ գտնելու համար, նախ անցան Ամերիկայի Միացեալ Նահանգաց եւ Ֆրանսայի խողովակէն: Ամերիկայի ազգերը գրեթէ ամբողջօրէն Միացեալ Նահանգաց օրինակին վրայ կադապարուեցան: Եւրոպայի մէջ, ընդհակառակը, գլխաւորաբար Ֆրանսական դադափարներու ազդեցութիւնը ախրագետեց: Եւրոպական ազգերը, փոխանակ ուղղակի Անգլիայէն փոխ առնելու իր սկզբունքները եւ իր կարգուսարքերը, գանտնք իրենց ֆրանսական ձեւով որդեգրեցին: Այս երեւոյթը կլինայ մեկնուել այն բանով որ, Անգլիայ մէջ սահմանադրական եւ սամկալարական սկզբունքները որոշ եւ պարտաւորիչ օրէնքներով ճշդուած ու բանաձեւուած չեն, այլ հիմնուած են սովորութեան, աւանդութեան կամ գործնական կիրարկութեան վրայ: Ֆրանսական միաքր, իր առանձնաշատուկ ոգիին համաձայն, գանտնք օրէնքով նուիրագործած կամ գո՛նէ անվրիպելի պայծառութեամբ սահմանած ու ճշգրտած է:

Վերը յիշեցինք անուները երկու իմաստասէրներու որոնք, թէեւ տարբեր դպրոցներու պետեր, նոյնչափ առաջնակարգ դեր կատարեցին սահմանադրական ու սամկալարական օրէնադրութեան եւ աշխարհահայեացքներու կազմութեան մէջ. ասոնցմէ Մօնթէսքիէօ ս'չ միայն երիցագոյնն էր, այլ եւ իրապէս մեծագոյնը եղաւ. իր ազդեցութիւնը գլեց անցաւ իր

դարուն եւ իր հայրենիքին սահմանները . իր զաղա-
 փարներուն հետքը կարելի է գտնել ո՛չ միայն Ֆրանս-
 աայի, այլև Անգլիոյ եւ Ամերիկայի Սահմանադրու-
 թեանց եւ օրէնադրութեանց մէջ: Բայց Ռուսոյի ազ-
 րեցութիւնը նուազ վճռական չեղաւ ուրիշ տեսակէտով
 մը . իր զաղափարները Ֆրանսացի ժողովուրդին ուղեւ-
 ծուծին մէջ թափանցեցին . ինք ո՛չ միայն սամկալա-
 քութեան նախամարտիկը եղաւ, այլ եւ մեր օրերուն
 նոր անուններով եւ նորագոյն ձևերով ծնունդ առ-
 նող զանազան վարչապետութիւններն ալ աւելի կամ
 նուազ չտնօրով արտացոլացումներն են իր զաղափար-
 ներուն: Վօլթէն, որ ուրիշ կարգի բարենորոգումներ
 մէջ ա՛յնքան վճռական գեր մը կատարեց, քա-
 զարհան կազմակերպութեան ակզրունքներուն տե-
 սակէտով կարելոր ազդեցութիւն մը չտանեցաւ . նա
 աւելի ազատութեան սէրը արծարծեց քան թէ անոր
 սրբմանները օրինազրեց: Այս գլխաւոր դէմքերուն
 քով գտնուեցաւ համատեղութիւն մը գրողներու, ու-
 բոնցմէ ոմանք, ինչպէս Մապլի, փայլեցան իրենց
 ինքնատիպ տաղանդովը: Այս վերջնոյն քաղաքական
 տեսութիւնները, նուազ խորթաթափանց քան Մօնթէս-
 քրէօյինները եւ նուազ ներամիտ քան Ռուսօյինները,
 իր ժամանակակիցներուն վրայ ահազին ազդեցութիւն
 մ՛տանեցան: Մէկ քանի կէտերու մէջ անոնք գրեթէ
 նոյն եւ նման են այն օրէնքներուն հետ զորս վեր-
 ջէն քուէարկեցին Ֆրանսական Յեղափոխութեան Սահ-
 մանադիր ժողովները: Իր «Բաղախացիներու իրաւունք-
 ները եւ պարտաւորութիւնները» գրքին մէջ, Մապլի
 ճշմարտապէս գուշակեց Յեղափոխութիւնը եւ անոր
 գործադրութեան եղանակը, եւ նախազօնց ապագայ

սահմանադրութեան սկզբունքները, զորս արդարեւ ուշագրաւ է բաղդատել 1791ի Սահմանադրութեան հետ :

Պատմութեան ամբողջ ընթացքին, զուցէ երբեք չէ՛ պատահած որ, գրական եւ իմաստասիրական հայեցողութիւնները այսքան ներգործած ըլլան օրէնսդրութեան եւ մինչեւ իսկ մարդկային ճակատագրին վրայ: Այս բանը գրեթէ անհասկնալի կերեւայ, եւ անհաշտելի՝ մարդկային բարեշրջումի բնական օրէնքներուն հետ. - թէ ի՞նչպէս փոքրաթիւ մարդեր կրցան, կէս դարու մէջ, ամբողջ ազգի մը աւանդական զաղափարները յեղաշրջել, եւ գտնել նոր ճշմարտութիւններու շարք մը, գերազանցապէս ընդունակ տարածուելու եւ ընդհանրանալու: Սակայն այս կերպ դատողութիւնը մակերեւութային պիտի ըլլար. իրողութիւնը ա՛յն է որ, այդ յղացումները մեծագոյն մասամբ նոր չէին եւ նոյն իսկ անոնց սաղմնաւորումը շատ կանուխէն տեղի ունեցած էր: Միայն Մօնթէսքիէօ՛ւն է որ ճշմարտապէս ստեղծագործող միտք մը հանդիսացաւ քաղաքական գիտութեան կալուածին մէջ. սակայն ինքն ալ շատ բան կը պարտէր իր նախորդներուն, եւ մանաւանդ Անդլիական կարգուսարքերուն: Ժ՛Ղ. դարու իմաստասէրները՝ մեծ մասամբ արդէն յայտորոշուած եւ բանաձեւուած գտան այն քաղաքական առածները (axiomes) զորոնք իրենց ժամանակակիցներուն ընդունել տուին:

Հետեւապէս, երբ սովորաբար կըսուի թէ Ռամկավարութեան քաղաքական աշխարհահայեացքին աղբիւրն է Ժ՛Ղ. դարու իմաստասիրութիւնը, այս հաւաստումը կրնայ ընդունուիլ իբրեւ ուղիղ, միայն վերու գրեալ բացատրութիւններու լոյսին տակ, ինչպէս նաեւ ուրիշ կարգ մը վերադահումներով որոնք ստորեւ կը բացատրենք :

Արդարեւ, եթէ գաղափարի այս ունիւթիւրաներուն գործը թերի կողմ մ'ունեցաւ, որ եւ սահմանափակեց անոր ազդեցութիւնը, ա՛յն էր որ՝ երկու կարեւոր գաղափարներ անոնց նկատողութենէն վրիպած էին:

Ասոնցմէ առաջինն էր՝ քաղաքական ազատութեան գաղափարը: Անոնք շատ կը սիրէին ազատութիւնը ընդհանրապէս, ինչպէս նաեւ կարգ մը մասնաւոր ազատութիւններ, բայց չէին սիրեր քաղաքական ազատութիւնը. կա՛մ այն էր որ անոր հանդիպած չէին իրենց փորձառութեանը մէջ, կա՛մ այն էր որ Անգլիան՝ քաղաքական ազատութեան օրրանը՝ իրենց աչքին կորսնցուցած էր այն հմայքը զոր ունէր յայս Մօնթէսքրիէօյի, կամ այն էր վերջապէս որ քաղաքական ազատութեան պէտք եղածին չափ կարեւորութիւն չէին տուած: Անհամբեր բարենորոգիչներ էին, եւ կուղէին շուտով գործի սկսիլ: Այնպէս կը հաւատային թէ իշխանին կամքը — մասնաւանդ երբ այդ իշխանը ըլլար Ֆրետերիք Բ. մը, կատարինէ կայսրուհի մը, կամ Ժօզէֆ Բ. մը, — ընկերային բարենորոգութեան ամենէն ուժեղ ազդակն էր: Ասիկա սխալ մ'էր որուն առաջ բերած հետեւանքները շատ ծանր եղան:

Այս սխալն էր որ նպաստեց զօրեղ իշխանութեան (*le pouvoir fort*) նախապաշարումին ուսկաւարական դպրոցին մէջ վարկ ստանալուն եւ յարատեւելուն: Եւ այս նախապաշարումը պատճառ եղաւ ծանր սխալանքներու եւ ծանրագոյն յուսախարութիւններու դէպ ի 79րդ դարու կէսը, այն պահուն երբ յանկարծական կերպով առիթը ներկայացաւ Ֆրանսական ուսկաւարութեան իր ճակատագիրը սահմանելու: 1848ի ուսկաւարները՝ զօրեղ իշխանութեան նախապաշարու-

մին ազգեցութեանը տակ՝ Հանրապետութեան Նախագահին ընտրութիւնը ժողովրդային ընդհանուր եւ ուղղակի քուէարկութեամբ կատարեցին : Յայտնի է թէ ի՛նչ եղան այս վարդապետական սխալումին հետեւանքները : Ընդհանուր քուէարկութեամբ ընտրուած Նախագահը՝ իր ընտրութեան այդ կերպէն իսկ կըստանար տարապայման հեղինակութիւն մը, առաւելաւ շուտութիւն մը Խորհրդարանին եւ նոյն իսկ Երեսփոխանական ժողովին վրայ — որ թէեւ նոյնպէս ընդհանուր քուէարկութեամբ ընտրուած էր, բայց իր անդամներուն իւրաքանչիւրը հազիւ մէկ քանի հազար քուէ կը միացնէր իր անուան շուրջ, մինչ Նախագահը ընտրուած էր միլիոնաւոր քուէներով — : Այս կացութիւնը ինքնին ճանապարհ կը հարթէր զիկատատրութեան առջեւ, եւ այնպէս ալ եղաւ : Այդ սխալումը առջ եկաւ, ինչպէս ըսինք, զօրեղ իշխանութեան վտանգաւոր գաղափարէն, եւ ասոր բուն աղբիւրը եթէ փնտսենք, 1792ի Ազգային ժողովէն (Convention) անցնելով՝ պէտք է ետ երթանք մինչեւ 18րդ դարու փիլիսոփաներուն տեսութիւնները (theories) :

Երկրորդ գաղափարը որ վերիպէցաւ Ռուսոյի, Քօնտօբսէի, ինչպէս նաեւ 1792ի Ազգային ժողովի պետական մարբերուն նկատողութենէն, նպատակի եւ միջոցներու որոշողութեանը համար կիրարկելի մեթոտաներուն զանազանութիւնն էր : Անոնք չզիտացան թէ՛ քաղաքական համախմբումի մը նպատակը որոշելու համար զործածուելիք մեթոտը նոյն չէր եւ չէր պատշաճեր միջոցներու որոշման ծառայող կերպերուն հետ : Քանի որ իրենց առանձնական մտածողութեամբը եւ ի յառաջագուն հայեցողութեամբը (speculation)

յաջողած էին գտնել նպատակը, կարծեցին եւ համոզում գոյացուցին թէ նոյն կերպով գտած էին նպատակայարմար միջոցներն ալ: Իրենցմէ վերջ՝ հակազդեցութիւն մը առաջ եկաւ, որ, ըստ սովորականին, հակառակ ծայրայեղութեան գնաց: Այս հակազդեցութիւնը օգտակար արդիւնքներ միայն պիտի ունենար, եթէ բաւականանար հաստատելու թէ՛ փորձառութիւնը միայն կարող է մեզի առաջնորդ ըլլալ միջոցներու ընտրութեան համար: Ընդհակառակը կորստարներ հետեւանքներ ունեցաւ, ըստ որում լաւ համարեց՝ նոյն խիղճնապատակը գտնելու համար՝ փորձառութիւնը կարգել գատաւոր, ինչ որ համազօր էր մերօրեայ ամէն նպատակ որ փորձառութեան արդիւնքը չէր:

Ահա այսպէս 18րդ դարը 19րդ դարուն կը կտակէր վարդապետութեան մը սերմերը, կորովի եւ շքեղ սերմեր, բայց ո՛չ վարդապետութիւն մը, եւ ասկէ զատ՝ կասկածելի մէթոտ մը: 19րդ դարուն գործը պիտի ըլլար քննադատութեան բովէն անցընել այդ մէթոտը եւ նպատատարել այդ սերմերուն աճումը: Արդ, այդ գործը դժուարացաւ դէպքերէն, որոնք ի սկզբան կարծես զայն աւելի դիւրացնելու երեւոյթը ունէին: Յրանսացի մողովուրդը երթալով աւելի ուսմկավարական դարձաւ, եւ այս շրջափոխութիւնը տեղի ունեցաւ խիստ արագ կերպով: Ա՛յնչափ արագ կատարուեցաւ, որ տեսականութիւնը ետ մնաց իրականութենէն: Ռամկավարութիւնը շանթահարիչ արագութեամբ մը՝ երազանքներէն ու դիրքերէն իջաւ իրականութեան մէջ: 1847րն, խիստ շատերու կարծիքով, որ այդ վայրկեանին ըսնաւոր ալ էր թերեւս եւ որ սակայն մէկ քանի ամիս վերջը ծիծաղելի պիտի ըլլար, ընդհանուր քուէար-

կութեան տեղի չի կար բնաւ: Իսկ 1848ին, ընդհանուր քուէարկութիւնը արդէն մտած էր կիրառութեան մէջ, եւ իրարմէ մէկ քանի ամիս ժամանակամիջոցով՝ կըստեղծէր նախ՝ ոսմկալարութեան օրէնսդիրը իշխանութիւնը եւ յետոյ՝ գործադիրը իշխանութիւնը: Ռամկալարութիւնը — հանրապետական ձեւով — կառավարութեան մը վերածուած էր, չըստասելով որ փլիխսփաները հաւաքէին եւ իրարու միացնէին այն սկզբունքները որոնց վրայ պէտք էր հանգչէր այդ կառավարութիւնը: Այնպէս որ պէտք եղաւ բաւական ժամանակ մը ապրիլ ամիսսիոյ հնարքներով եւ առօրեայ կարգադրութիւններով, որոնք միշտ ալ յաջող չի հանգիստեցան: Այնուհետեւ առաջ եկաւ ընդհանուր արհամարհանք մը դրութիւններու դէմ, յետոյ՝ գաղափարներու մեծ շփոթութիւն մը եւ խառնակութիւն մը, եւ ամենէն վերջը՝ վարդապետութիւններու նոր ախորժակ մը, որ ա՛լ աւելի սրուած էր՝ ճի՛շդ այն պատճառով որ ժուժկալարութիւնը խիստ մեծ եղած էր:

Սակայն ուղիղ պիտի չըլլար ըսել թէ ոսմկալարութիւնը իր աղմուկովը լեցուց դարու մը թատերարեմը՝ առանց բնաւ ներշնչելու խորհողները: Ի հանդէս եկան անհամար թելադրութիւններ, եթէ ոչ միշտ ճշդօրոյ հայեացքներ: Բանաստեղծութիւնը, արուեստը, 19րդ դարու ընթացքին, — եթէ անոնց վերագոյն արտայայտութիւնները նկատի առնուին, — գերազանցապէս ոսմկալարական դրոշմ մը կրեցին: Նոյն դարու գիտութիւնն ալ ոսմկալարական եղաւ, շնորհիւ այն գործնական կիրառութիւններուն որոնց յանգեցաւ, եւ որոնք ամէնն ալ կը ձգտին մեծամասնութեան կեանքը աւելի դիւրատար եւ աւելի ապահով կացուցանելու:

Վերջապէս, գրողներ ու խորհողներ իրենց ուսումնասիրութեանց ուղղակի առարկայ ըրին ժողովուրդը, եւ այս կերպով զգալապէս առաջ տարին ուսման վարական աշխարհահայեացքին կազմութիւնը: Այստեղ կը բաւականանամ յիշել մէկ քանի անուններ, առանց իջնալու անոնց երկասիրութիւններուն մանրամասնութեանցը — ինչ որ գրքոյկիս ամփոփ ծաւալին մէջ չպիտի պարփակուէր:

Ամենէն առաջ կուգայ Թօքվիլ (Tocqueville), որ առաջին ըմբռնողներէն մին եղաւ թէ՛ ուսման վարութիւնը, իր բոլոր հետեւանքներով, իր անասման հետեւանքներով՝ կարեւոր պէտք մ'է եւ միանգամայն բարիք մը: Թօքվիլը լաւ կարգացողը եւ հասկըցողը միանգամ ընդ միշտ կը հրաժարի օտարի մը, անկոչ հանդիսակալի մը տեղ դնելէ ժողովուրդը, որ բուն տանտէրն է: Բայց Թօքվիլ ուրիշ ծառայութիւն մըն ալ մատուց, ապացուցանելով թէ քաղաքական աղտոտութիւնը անհաշտելի չէ՝ ուսման վարութեան հետ, ինչպէս իրմէ առաջ կը պնդէին Մատամ աը Սթաէլ, Կիզօ (Guizot) եւ ուրիշներ (*): Թօքվիլ ուսումնասիրեց այս երկու գաղափարները միացնելու միջոցները: Առանց ամէն կէտի մէջ անսխալ ըլլալու, մեծապէս լուսարանեց քաղաքական եւ ընկերային հարցին այս ամենակարեւոր կողմը:

Թօքվիլէն վերջ կուգայ Միշլէ (Michelet): Մինչ Թօքվիլ, հանճարեղ ճամբորդ՝ ուսման վարութիւնը ուսումնասիրած էր Ամերիկայի Միացեալ Նահանգաց մէջ, Միշլէ նստողական կեանքի դատապարտուած՝

(*) Տե՛ս այս մասին յաջորդ Գլուխին սկիզբները:

ոամկալարութիւնը անսաւ Բարիզի արուարձաններուն մէջ: Սակայն եւ այնպէս, ոչինչ նուազ խորաթափանց կերպով ուսումնասիրեց զայն՝ շնորհիւ արուեստագէտի եւ բանաստեղծի իր ձիրքերուն, շնորհիւ նաեւ իր մեծ սրտին: Ժողովուրդը՝ Միշլէի աչքին՝ վերացականութիւն մը չէ: Կապրի այն: Անիկա պատմութեան գլխաւոր գերակատարն է, չըսելու համար միակ հերոսը: Միշլէ մեզի չի յայտներ միայն ժողովուրդին զերը, այլև անոր խառնուածքը եւ անոր նկարագիրը: Թօքլիլ մեզի կը բացատրէ ժողովուրդը. Միշլէ մեզի կը զգացնէ ու կը սիրցնէ զայն: Մեզի կը քողամերկէ զայն շարժող զսպանակները, զայն խանդավառող մեծ կիրքերը: Ինքն իսկ այդ կիրքերով համակ բոցավառուած է: Միշլէ արժանի է կոչուելու արդի ոամկալարութեան մարգարէն:

Իսկ էկտար Քինէ՝ (Quinet) ուզեց անոր դաստիարակը ըլլալ: Անիկա զգաց կամ լաւ եւս՝ հասկցաւ թէ արդի ոամկալարութիւնը չկրնար զուրկ մնալ կեանքի եւ գործունէութեան տեսականէ մը, եւ իր պայքարող ասպարէզին մէջ՝ հետամուտ եղաւ հիմնելու այդ տեսականը: Չի կրնար ըսուիլ թէ այդ տեսականը բուրժուարի պարզուած է իր գրութիւններուն մէջ: Բայց անոնք լեցուն են բարձր ու վեհ տեսութիւններով որոնք ինքնին կազմ եւ պատրաստ տարրեր են՝ որոնցմով պիտի կազմուի ոամկալարութեան քաղաքական եւ բարոյական աշխարհահայեացքը: Ժամանակին հոգիներուն չափազանց զգայուն, Քինէ երբեմն հետեւեցաւ հոսանքներու ալ որոնք մենք այսօր վտանգաւոր կը դատենք: Բայց սխալելու պարագային իսկ՝ չի գաղբիր լուսաւորելէ իր առջեւ տարածուող ճամբան:

Բրուտոն (Proudhon) Քինէի եւ Միշլէի մէջ-
տեղն է : Ո՛չ առաջինին խիստ վարչապետականութիւնը
ունի , ո՛չ երկրորդին աւելնը : Բայց ինքն ալ , իր
կարգին , ճանչցաւ ժողովուրդը . ինքն ալ միւսններուն
չափ զգաց ուսմկավարութեան անհրաժեշտ պէտքերէն
մէկ քանին : Սուր թափանցողութեամբ մը նշմարեց
այն կէտերը որոնց վրայ պիտի մղուէր պայքարը ուսմ-
կավարութեան եւ իր հակառակորդներուն միջեւ : Քան-
զի բարոյական ներշնչումը իր անձին վրայ վերա-
կենդանացուց եւ բարոյական խնդիրներու մասին հնչե-
ցուց մէկ քանին այն հզօրագոյն խօսքերէն զորս լսած
ըլլայ երբեք տասնեւիններորդ դարը : Գիտեմ Բրու-
տոնի այն թերի կողմերը որոնց պատճառաւ մեր այս
գաաողութիւնը չի կրնար անվերապահ կերպով ըն-
դունուիլ իր սուր ընթերցողներէն : Բայց հոս իմ դի-
տաւորութիւնս չէ՛ այնչափ դատաստան մը ընել որ
ամենուն հաւանութեանը արժանանար , որչափ մատ-
նանիչ ընել Բրուտոնի արժանաւոր տեղը ուսմկավա-
րական գաղափարի վարչապետներուն շարքին մէջ :

Ռընուվիէի (Renouvier) Բարոյագիտութիւնը (La
Science de la Morale) լոյս տեսաւ 1869ին : Ասիկա բա-
րոյական եւ քաղաքական իմաստասիրութեան ամե-
նէն հոյակապ գիրքերէն մէկն է որ երբեք գրուած ըլ-
լան : Այս գրքին մէջն է որ ամենէն աւելի խնամով
շօշափուած են այս կարեւոր հարցերու լուծումները :
Մէկ քանի տարի վերջ , Ֆրանքօ-Բրուսիական պատե-
րազմի վաղորդայնին՝ իր աշակերտին եւ աշխատակցին՝
Ֆ. Փիլօնի (F. Pillon) ընկերակցութեամբ սկսաւ հրա-
տարակել Իււստասիւրական Քննադատութիւնը (La Cri-
tique philosophique) թերթը : Այս թերթին մէջ , գէպե-

բու հոլովումին հետ զուգընթացաբար՝ կուսուսմնասիրէ ժողովուրդին քաղաքական կեանքին բոլոր երևւոյթները, եւ ամենէն ծանրակշիռ ու ամենէն փափուկ խնդիրներու վրայ համարձակօրէն լսելի կընէ իր տեսութիւնները: Խմաստասիրական Բննադասութեան մէջէն կարելի է քաղել ամբողջ քաղաքական վարդապետարան մը՝ ի պէտս ռամկավարութեանց, եւ չեմ ձանչնար գրուածք մը՝ որ ասոր չափ թանկագին կարենայ ըլլալ այն ուսումնասիրողին համար՝ որ պիտի ուզէր օր մը՝ 19րդ դարու վերջին երեսուն տարիներուն մէջ ծագում առած քաղաքական եւ բարոյական գաղափարներուն պատմութիւնը ընել:

Թերեւս ընթերցողը կը զարմանայ՝ տակաւին Օկիւսթ Քօնթի անուան չի հանդիպելուն համար: Արդարեւ Քօնթ եւս յաւակնութիւնը ունեցաւ ղեկավարելու ռամկավարական շարժումը: Բայց, եթէ նա պարզեց բաւական ուշագրաւ եւ արդարացի մասնաւոր տեսութիւններ, մանաւանդ ընչազուրկներուն (prolétaires) եւ մտաւորականներուն զաշնակցութեանը մասին, եւ թէ նա կը հաւատայ գիտութեան, որ ի վերջոյ պիտի կատարէ իր ազատագրիչ գերը եւ երբեք պիտի չըստորնանայ բանավարութիւնը անարգողներուն ծառայելու, սակայն Քօնթ ա՛յն աստիճան կարեւորութիւն չի տուաւ քաղաքական ազատութեան եւ իրաւունքին, որ ռամկավարութեան որ եւ է ճշմարիտ բարեկամի մը մտքէն չի կրնար անցնիլ՝ անոր քով վիստակու քաղաքական վարդապետութիւն մը, որ իսկապէս պատշաճէր ռամկավարութեան: Քօնթի հանգէպ արդար ըլլալու համար, պէտք է մոռնալ իր քաղաքական իմաստասիրութիւնը եւ նկատի առնել միայն իր մտածման ընդհա-

նուր ուղղութիւնները, որոնք յայտնապէս յառաջ-
դիմական եղան :

Վերոգրեալ պատկերը շատ անկատար է . անկէ
դուրս կը մնան կարգ մը անուններ, ինչպէս Արման
Գառէլ, Լուի Պլան, Լամարթին եւ ուրիշներ, որոնք
արժանի էին յիշատակուելու՝ 19րդ դարու ռամկավա-
րական գաղափարի նոյն իսկ հակիրճ եւ թուցիկ
պատմութեան մը մէջ : Այստեղ յիշուած են միայն
այն վարդապետները՝ որոնց խորհրդածութիւնները ա-
ռաւելապէս ներգործեցին միտքերու վրայ եւ որոնք
ժամանակակից մարդկութեան սորվեցուցին ռամկավա-
րութեան էութիւնը :



Ի՞նչ է Ռուսիոյ Ռամկավարութիւնը

Ի՞նչ է ուրեմն Ռամկավարութիւնը, մեր՝ ժամանակակից մարդերու հայեացքովը, որ չենք հարցաքններ ո՛չ անհետացած դարերը եւ ո՛չ մեր նախորդներուն գիտակցութիւնը, այլ բո՛ւն իսկ մեր գիտակցութիւնը:

Այս հարցման ուղղակի պատասխանելէ առաջ, եւ անոր պատասխանը գիւրացնելու համար, ըսենք նախ ինչ որ չէ՛ այլեւս մեր աչքին ռամկավարութիւնը:

Բանա՛նք Մատամ ար Սթաէլի «Նկասողութիւններ Ֆրանսական Յեղափոխութեան վրայ» գիրքը (1818): Այս կարեւոր գիրքէն, որ Վերանորոգութեան (Restau-
 ration) մարդերուն ազատական աշխարհահայեացքը սահմանեց, կիմանանք թէ՛ Ֆրանսական Յեղափոխութիւնը անխուսափելի եղելութիւն մ'էր թէեւ, բայց 1790ին ա՛լ վերջացած պէտք էր ըլլալ: Այդ թուականէն առիկն ինչ որ պատահած է՝ աղիտաբեր միայն եղած է: Եւ ինչո՞ւ: Որովհետեւ, 1790էն սկսեալ «ռամկավարական հեղեղատը» իր անկողնէն դուրս կը յորշի, եւ ամէն բան կաւրչարկէ: Մատամ ար Սթաէլի աչքին, կամ թէ ըսենք՝ Վերանորոգութեան ազատականներուն աչքին — որ իր աշակերտներն եղան — ռամկավարութիւնը աւերիչ պատուհաս մ'է: Մեր ժամանակի ամե-

նէն վախկոտ պահպանողականներն իսկ պիտի վարանէին որդեգրել այսպիսի դատողութիւն մը:

Հիմա տեսնե՛նք զըջոյզ մը զոր կը հրատարակէ Կիզօ 1849 յունուարին — «Ռամկալարուքիւնը Ֆրանսայի մէջ» (*La Démocratie en France*) —: Մտտամ ար Սթաէլի «Նկասողութիւններ»էն ի վեր երկու յեղափոխութիւններ անցած են արդէն Ֆրանսայի վրայէն, եւ գիտենք թէ յեղափոխութիւնները պատմութեան մեծ ուսուցիչներ են. անցեալին վրայ հրաշալի կերպով լոյս կը սփռեն: Անոնք հասկանալի կը դարձնեն ա՛յն ինչ որ երէկ անհասկանալի կը թուէր: Իրա՛ւ է որ Կիզօ չէր կրնար նկատուիլ ջերմ համակիր մը ուամկավարութեան, որուն ուսի բիրտ հարուածը կրեց: Բայց ինք կապահովէ մեզի՝ թէ կը խօսի դէպքերու իրբեւ ուշադիր դիտող մը, իրբեւ անաչառ դատաւոր մը եւ ո՛չ իբր պարտեալ: Արդ, ի՞նչ կըսէ «ուամկավարական գաղափար»ի մասին: Կըսէ թէ կորստաբեր գաղափար մ'է այն, զոր պէտք է ամէն գնով «արմատախիլ ընել միտքերէն»: Եթէ չի յաջողի ուամկավարական գաղափարի այս ջնջումը, ա՛լ չկայ ընկերային խաղաղութիւն, «սպահովութիւն, բարօրութիւն, արժանապատուութիւն, այն ամէն բարոյական եւ նիւթական բարիքները, զորոնք ընկերային խաղաղութիւնը միայն կրնայ երաշխաւորել»: Ռամկավարական գաղափարը չմեռաւ, արմատախիլ չեղաւ մտքերէն. ընդհակառակը վերջին կէս դարուն մէջ բաւական խորունկ արմատներ ձգեց մտքերուն մէջ, եւ սակայն Կիզօյի անաւոր մարգարէութիւնը չիրականացաւ: Եւ այսօր ո՛չ ոք լըջօրէն կառնէ՛ զայն:

Քննենք վերջապէս՝ վերջին էրութիւն մ'ալ, որ

աւելի մօտ ժամանակի գործ է, — Շէրէրի «Ռամկա-
վարութիւնը եւ Ֆրանսան» (*La Démocratie et la France*):
Այս անգամ ալ յեղափոխութիւններ տեղի ունե-
ցած են, որոնց արդիւնքն եղած է ռամկավարա-
կան կարգուսարքերուն հիմնաւորումը: Շէրէր մասնա-
ւոր պատճառներ չունի դժգոհ ըլլալու ռամկավարու-
թեանէն: Ազատ միտք մըն է, եւ ճշմարտապէս իմաս-
տասէր: Եւ սակայն, ինքն ալ վստահութիւն չունի
ռամկավարութեան վրայ: Ըստ իրեն, ռեւէ ինչրի
մէջ, ռամկավարութեան առաջարկած լուծումը ա-
զատական լուծումին տրամադժապէս հակառակ է:
Շէրէրին այս գաղափարները ներշնչող զգացումը բո-
լորովին կը նմանի, — ամէն համեմատութիւն պահելով
եւ ժամանակներու եւ ըմբօնումներու տարբերութիւն-
ներն ալ նկատի առնելով, — Կիզօյի եւ Մատամ տը
Սթաէլի գրութիւններուն մէջ կատարեալ միամտու-
թեամբ մը երեւան եկող զգացումին, որ ուրիշ բան
չէ՝ եթէ ոչ վախը:

Արդ, առաջին ուղղակի պատասխանը որ պիտի
տամ վերոգրեալ հարցումին, այն է թէ՛ մենք չենք
վախնար ռամկավարութեանէն. ա՛լ անիկա խրատուիլակ
մը չէ՛ մեզի համար: Մենք այլեւս չենք քաղքենի
ընկերութիւն մը, որ կը հետամտի կարելի եղածին
չափ սահմանաւորել ժողովուրդին բաժինը, իր հաշիւ-
ներուն ետականութիւնը քողարկելով խօհմութեան
դիմակին տակ: Մենք ռամկավարական ընկերութիւն
մ'ենք, որ գիտակից է իր կոչման եւ որ ինքզինք
պարտական կըզգայ զարգանալու ա՛յն ուղղութեամբ
ուր կը մղեն զինքը իր պատմութիւնը եւ ընդհանուր
գաղափարներու այն համակարգութիւնը (*système*) զոր

ինքիբեհն սեփականացուցած է . մենք ոամկավարական ընկերութիւն մ'ենք, որ կը ձգտի երթալով աւելի ոամկավարական դառնալ: (*)

Եւ ինչո՞ւ . վասն զի ոամկավարութիւնը, մեր աչքին, ո՛չ միայն անխուսափելի իրողութիւն մ'է, այլ եւ ըարեւոտեհ իրողութիւն մը: Մենք հպարտ ենք ոամկավարութեան մէջ գտնուելնուս համար: Մեր կարծիքն է թէ այս իրաւակարգը շատ աւելի բարձր է ուրիշ ամէն իրաւակարգէ, եւ կը կարծենք գիտնալ թէ ինչո՞ւ:

Նախ, որովհետեւ ընդհանուր քուէարկութիւնը, որ ոամկավարական իրաւակարգին բուն արտայայտութիւնն է, իբր գերագոյն փաստը (*ultima ratio*) փոխարինած է թնդանոթին: Եւ այս՝ արդէն՝ բարոյական եւ նիւթական մեծ առաւելութիւն մ'է: Այսօր նորութիւն մը եղած է չարախօսել ընդհանուր քուէարկութեան դէմ: Ընդհանրապէս կառարկին թէ կազմակերպուած չէ այն, ու կը ջանան կազմակերպել: Չեմ վարանիր խոստովանելու որ շատ չեմ համակրիր այդ փորձերուն: Անոնցմէ շատերը զուրկ են պարզութենէ, եւ ոմանք նաեւ անկեղծութենէ: Անոնք հազիւ քողարկուած ձգտում մ'են աղքատները զրկելու քուէի իրաւունքէն՝ ի նպաստ հարուստներուն, կամ խոնարհները իրաւազուրկ ընելու՝ յօգուտ մեր զանազան մանսարխնոչիւններուն (ամիրայութիւններուն), որոնց-

(*) Դժբաղդաբար այս եւ յետագայ կարգ մը իորհրդածութիւնները, մեր՝ Հայերուս եւ առ հասարակ օսմանեան ժողովուրդներու այսօրուան վիճակը չէ՛ որ կը պարզեն, այլ Ֆրանսացիներունը: Թամկավարութիւնը սակաւին մեզի համար *խեղ* մ'է, որմէ շատ հեռու ենք, բայց որուն կը ձգտինք հասնիլ:

մէ շատերը կասկածելի են իրենց նուազ յառաջդիմական ձգտումներով : Ըսենք վերջապէս որ , այս բոլոր փորձերը՝ նախաձեռնողներուն տղայամտութիւնը ի յայտ կը բերեն : Արդարեւ շատ հաւանական չէ՛ որ ժողովուրդը թոյլ տայ՝ որ պարզ համոզողութեամբ մը իրմէ յափշտակեն կամ իր ձեռքին մէջ ոչնչացնեն իրաւունք մը , որուն ինք այսօր կը թուի քիչ արժէք ընծայել , բայց որուն պինդ փարած ըլլալը պիտի հասկցուի ա՛յն օրը երբ փորձեն խլել զայն իրմէ : Յամենայն դէպս , եւ առանց ուրանալու թէ ընդհանուր քուէարկութիւնը արժանի է իր դէմ յարուցուած քննադատութիւններէն մէկ քանիին , առանց ուրանալու թէ կը պատահի որ սխալներ զործէ , իր սխալմունքները նախընտրելի են քան թնդանօթիւնները : Թիւին գերիշխանութիւնը , հակառակ իր անպատեհօթիւններուն , ուժի գերիշխանութեան շատ զնահատելի մէկ հոգեկանացումն (spiritualisation) է : Եւ այս ա՛լ աւելի զգալի պիտի ըլլայ , երբ թիւը ստանայ այն զարգացողութիւնը (culture) որուն իրաւունք ունի :

Արդ , խնդիր է թէ , մերինին նման ընկերութեան մը մէջ թիւը կրնա՞յ երբեք հասնիլ զարգացման ա՛յն աստիճանին՝ որ անհրաժեշտ է ուղղելու համար իր թերութիւնները : Շատ բարի միտքեր կը տարակուսին այս մասին , եւ իրենց տարակոյսը իրբ փաստ կը դործածեն Ռամկավարութեան դէմ :

Շատ ճշմարիտ է որ , քաղաքական ընկերութիւն մը ո՛րչափ աւելի ընդարձակ եւ ստուարաթիւ ըլլայ , ա՛յնչափ աւելի դժուար է որ զարգացումը մտնէ անոր ամէն խաւերուն մէջ , եւ անոնց ամենուն մէջ զոհացուցիչ մակարդակի մը բարձրանայ : Թերեւս , որչափ

ալ անխոնջ ըլլայ թափուած ջանքը, մասնակի յուսա-
խարութիւններ տեղի պիտի ունենան: Սակայն, մենք
որ ընդհանրապէս կը հաւատանք զարգացողութեան
ստեղծագործ կարողութեանը, չենք կրնար տարակու-
սիլ թէ՛ վերջ ի վերջոյ անիկա կը յաջողի յաղթանա-
րել բնագոյրը և անոր անխորհուրդ թելադրութիւնները:
Ապա թէ ոչ, պէտք է փակե՛նք մեր դպրոցները, մեր
եկեղեցիները, ջախջախե՛նք մեր մամուլները, դադ-
րեցնենք այն բոլոր շարժումները որ մեզ կը մղեն
մարդկութիւնը ազնուացնելու փորձին :

Մենք որ՝ առանց ցաւի եւ առանց զայրոյթի՝
ականատես եղանք ազգին երբեմնի խաւարեալ տար-
բերուն, ժողովուրդին՝ — որուն զաւակներն ենք — ա-
տիճանաբար հասնելուն քաղաքային կեանքի պայման-
ներուն հասկացողութեանը, չենք կրնար այսօրուան
տակաւին խաւարեալ միւս տարբերալ — որոնք սա-
կայն աւելի խաւարեալ չեն քան որչափ էին երբեմն
մեր նախորդները եւ մեր հայրերը — զուրկ նկատել
լուսաւորուելու ամէն ընդունակութենէ, իրենց կար-
գին օր մը քաղաքական կատարեալ գիտակցութեան
բարձրանալու ամէն հաւանականութենէ: Այլապէս,
պէտք է հաւատանք թէ երբորդ դասակարգը (քաղքենի
դասակարգը — *le tiers état*) գերազանց բարեմասնու-
թիւններ ունէր՝ որոնց շնորհիւ կարողացաւ իր նախ-
կին թշուառ վրձակը փոխանակել այն առանձնաշնորհ-
եալ եւ առաւելակշիռ վրձակին հետ զոր անկէ ի վեր
այսչափ երկար ժամանակ վայելեց եւ որուն վերջին
պատուարները կը պաշտպանէ հիմա՝ աւելի յամառու-
թեամբ քան թէ յաջողութեան հաւանականութիւններ-
ով: Քանի որ նման պատճառներ նման արդիւնքներ

առաջ կը բերեն , պէտք է ընդունինք որ չորրորդ դասակարգն ալ (ընչազուրկ դասակարգը—*le quatrième état*) իր զարգացումովը եւ հանրային բարիքին գիտակցութեամբը պիտի հասասորի օր մը երրորդ դասակարգին , որ ժամանակաւ ընկերային նուիրապետութեան աստիճաններուն վրայ կը գրաւէր ճիշդ միեւնոյն յետնեալ դիրքը ինչ որ իրեն վիճակուած է այսօր :

Եւ արդէն չե՞նք տեսներ , որ հանրային հաստատութիւնները իրենց բնական ընթացքով այս արդիւնքին կը միտին : Գործաւորական ընկերակցութիւնները , արհեստակցական միութիւնները , խնայողական , գործակցական եւ փոխադարձ օգնութեան ընկերութիւնները մէյմէկ գործնական դպրոցներ են՝ ուր չորրորդ դասակարգը կ'ընտելանայ դրական գիտելիքներու , եւ կը զարգացնէ իր մէջ այն բարոյական յատկութիւնները որոնք կարեւոր են քաղաքական գործունէութեան համար :

Արդէն շատ մը քաղաքապետութիւններ (*municipalités*) ձեռք անցուց , եւ քաղաքապետական իշխանութեան կիրարկութիւնը զինք պիտի պատրաստէ , ինչպէս երբեմն քաղքենի դասակարգը պատրաստեց , քաղաքական իշխանութեան կիրարկումին : Յանդըպետութիւն մը չէ՛ կարծել թէ չորրորդ դասակարգին յառաջդիմութիւնը աւելի արագ պիտի ըլլայ քան ինչ որ եղաւ երրորդ դասակարգինը : Վասն զի, ո՛չ միայն քաղաքակրթութեան ընդհանուր յառաջխաղացութիւնը արագցած է , այլ եւ բարձրացման ցանկացող ան-

հատններուն եւ խմբակցութիւններուն ընծայուած կատարելագործումի միջոցները եւ օժանդակութիւնները այսօր նուազ ժլատութեամբ կը մատակարարուին քան ինչ որ էր անցեալին մէջ : Պէտք է աւելցնել նաեւ թէ , քաղքենի դասակարգը՝ իր դասակարգային շահերուն պաշտպանութեանը մէջ նուազ սպառազէն կամ նուազ վայրագ է՝ քան ինչ որ էին երբեմն ազնուականները , կղերականութիւնը եւ իշխանութիւնը :

Այս բոլոր պատճառներով , կարելի է հաւատալ եւ վստահ ըլլալ թէ , ուշ կամ կանուխ , քուէարկութեան իրաւունքին գիտակից եւ անկախ կերպով կիրարկութեանը համար անհրաժեշտ եղող զարգացումը պիտի ընդհանրանայ ժողովուրդին ամէն խաւերուն մէջ : Այն ատեն թիւը իր կողմը պիտի ունենայ ո՛չ միայն ուժը եւ իրաւունքը , այլ եւ բանականութիւնը :

Ասկէ աւելի բարձր նկատում մ'ալ կայ : Եթէ ռամկավարութիւնը՝ մեր դատողութեամբ՝ միւս բոլոր քաղաքական ձեւերէն գերազանց կը համարինք , պատճառն այն է որ , անիկա ժողովուրդին ամբողջութիւնը կ'ընդգրկէ եւ բոլոր քաղաքացիներու մէջ մարդկային անձին լիակատար զարգացումը կը նպաստաւորէ : Ժամանակ է որ , ստէպ գործածուած այս բանաձեւին իմաստը աւելի մեկին եւ ճշգրիտ կերպով բացատրուի :

Ռամկավարութիւնը կ'ենթադրէ մարդկային անձին ստորոգելիներուն (ընդունակութիւններուն) կատարեալ զարգացումը բոլոր անհատներուն մէջ : Արդարեւ , հասկանալի է որ , ռամկավարական իրաւակարգը՝ որպէս զի կարողանայ իր բոլոր պտուղները

տալ, կը պահանջէ որ իւրաքանչիւր քաղաքացի իր սեփական ջանքերով եւ կամ այդ նպատակին յատկացեալ հաստատութիւններու շնորհիւ, ստացած ըլլայ իր բարձրագոյն մարդկային արժէքը. եւ մարդկային արժէք ըսելով պէտք է հասկընալ թէ՛ տնտեսական եւ թէ՛ բարոյական արժէքը : Այն ատեն, բայց միայն ա՛յն ատեն, պիտի անհետանան այնչափ անգամներ մատնանշուած բոլոր չարիքները, բոլոր այն վտանգները, որոնք այնքան պերճաբանօրէն նըշաւակուած են իբր ռամկավարութեան ընդարձս երեւոյթներ, եւ որոնք սակայն արդիւնք են այն հանգամանքին, որ մեր ապրած ընկերական միջավայրը անկատար ռամկավարութիւն մէ : Այն ատեն միայն ռամկավարական իրողութիւնը, իր լիութեանը մէջ պիտի վերածուած ըլլայ ռամկավարական իրաւունքի (իրաւակարգի) . նո՛ր իրաւունք մը, եթէ նկատի առնենք իր ծլարձակումին համեմատօրէն յապաղու։ը . ընդհակառակը շա՛տ հին իրաւունք մը, եթէ ի հաշիւ առնենք այն գաղափարը հոսանքները որոնք ձեւակերտեցին անոր երկարատեւ եւ շարունակական կազմաւորումը :

Ռամկավարութիւնը կը նպաստաւորէ մարդկային անձին բարգաւաճումը : Միակ իրաւակարգն է որ սկզբամբ ունէ հակամարտութիւն չենթադրեր կառավարողներու եւ կառավարուածներու շահերուն միջեւ, ըստ որում առաջինները վերջիններուն կողմէ ընարուած գործակատարներ են պարզապէս : Կրնայ պատահիլ, եւ կը պատահի իսկ, որ ազգին մէկ մասը, —ամենէն լուսաւորեալ, ամենէն հարուստ եւ ազդեցիկ ու ճարտար մասը, —չարաչար գործածէ իր ա-

աւելութիւնները, եւ կառավարութիւնը ծառայեցնէ դասակարգային մասնաւոր շահերու, առանց որ ժողովուրդը անդրադառնայ կամ յաջողի արգիլել: Բայց ո՛րչափ աւելի զարգացողութիւնը տարածուի, ո՛րչափ աւելի ժողովուրդը իրազեկ դառնայ կառավարութեան մէջ անցած դարձածին, ա՛յնչափ աւելի պիտի դժուարանայ կառավարողներուն՝ հակառակ վարուիլ կառավարեալներու գլխաւոր շահին, որ կը կայանայ անդադար աւելի զիտնալուն եւ աւելի արժեւուն մէջ: Նոյն իսկ պիտի գայ օր մը, երբ բոլորովին անկարելի պիտի դառնայ դասակարգային մասնաւոր շահերու այդ հետապնդումը, եթէ առանձնաշնորհուածները իբրևնք իսկ կանխած չլլլան—արդարասիրութեամբ կամ խոհեմութեամբ—հրաժարելու իբրևնց այդ յաւակնութենէն:

Դիտելի է նաև որ, աամկավարական իրաւակարգին հասցէին ուղղուած քննադատութիւններուն մեծագոյն մասը իրական նշանակութիւն պիտի ունենային միայն այն պարագային, երբ աամկավարութիւնը դատապարտուած ըլլար անպայմանօրէն մեաւու այնպէս՝ ինչպէս զայն կը տեսնենք այսօր: Այդ աամկավարութիւնը հաղիւ սկսած է, եթէ չըսենք գոյութիւն առնել, գո՛նէ իր ձեռքով վարել իր ճակատագիրը: Դեռ վարանոտ են իր քայլերը, ու կը խարխափի, եւ այս՝ գլխաւորապէս այն պատճառով որ, տակաւին յստակ ու ամուր գաղափարներ ու սեփական աշխարհահայեացք չունի: Անիրաւ եւ անիմաստ չէ՞ր ըլլար սակայն աամկավարութեան դէմ իր փաստ գործածել այն իրողութիւնը՝ որ անիկա մէկ անգամէն չէ կրցած վճռական ըլլալ իր հայեացքին:

բուն կամ իր գործունէութեանը մէջ . բան մը՝ որուն
 իրմէ աւելի ընդունակ չի հանդիսացան նախորդ իրա-
 ւակարգերը՝ իրենց սկզբնաւորութեան ժամանակ :
 Արդարեւ , ո՛չ ֆրանսական թագաւորականութիւնը
 կրցած է՝ առջի օրէն՝ ճշդել իր գործելակերպը այն
 ուղիղ գատուութեամբ որ կը տեսնուի Հանրի Դ . ի
 մը կամ Ռիչլիէօյի մը քով , ո՛չ ալ ֆրանսական քաղ-
 քենի դասակարգը՝ համայնքներու ազատագրութեան
 հետաւոր ժամանակաշրջանին՝ կրցած է սահմանել իր
 քաղաքական մտատիպարը՝ այն ճշդութեամբ ու լայ-
 նութեամբ որուն պիտի հասնէր յետոյ , 1789ին : Եթէ
 երբեմն պատմութիւնը այս կերպ չէնք իմաստասիրեր ,
 պատճառն այն է որ՝ մենք հետուէն՝ անցեալին մէջ
 գործածուած բանաձևերուն կ'ընծայենք արշիական
 (*moderne*) իմաստ մը , որ լիովին չի համապատաս-
 խաներ այն ժամանակի մարդոց միտքին եւ առու-
 մին :

Արդ , ի՞նչ կը նշանակէ ըլլալ մարդ , մարդկային
 ակն եւ այնուհետեւ՝ առաւել մարդ եւ կասարելագոյն
 մարդ :

Մարդ կոչումին իսկապէս արժանանալու համար ,
 ամէն բանէ առաջ՝ պէտք է ունենալ որոշ աստիճան մը
 տնտեսական անկախութիւն , զոնէ այն փոքր աստի-
 ճանով յորում անհատը՝ ինքնիրեն կամ իր ընտանի-
 քին տարրական պէտքերուն բաւելու չափ բան մը
 կուրենայ :

Թշուառութիւնը ինքնին մարդկային զարգաց-
 ման մեծ թշնամին է : Առանց անկումի զայն կարե-
 նալ կրելու համար , պէտք է այնպիսի հոգեկան կորով
 մը , որ թերեւս՝ բացառաբար՝ կարենայ փայլիլ մէկ

քանի նազուազիւտ անհատներու քով, բայց որ
 երբեք ամենուէն բաժինը չպիտի ըլլայ: Այն մարդը որ
 ոչ ուտելու բա՛ն մ'ունի եւ ոչ պատասպարուելու տեղ
 մը. ա՛յն որ չի գիտեր թէ՛ նոյն իսկ ուզելով աշխա-
 րիլ եւ աշխատութիւն փնտռելով՝ վաղուան համար
 գործ մը պիտի կրնա՞յ գտնել, ա՛յն մարդը՝ բառին բուն
 նշանակութեամբ մարդ է: Այո՛, մարդ անուան դէմ
 նախատինք մ'է վիճակը անոր, որ կը զգայ թէ՛ ա-
 մէն պատահարներու խաղալիք մըն է, եւ որ՝ մէկ
 վայրկեանէն միւսը՝ անօթութենէ չի մեռնելու եւ իր
 կիներն ու զաւակները նոյն տանջանքին չի դատապար-
 տելու համար, կ'ըստիպուի եւ կրնայ ստորնանալ մին-
 չեւ ա՛յն աստիճան՝ որ « իր անձը վաճառէ », ըստ ժո-
 ղովրդային բացատրութեան. — բացատրութիւն մը,
 որ ուժեղ է, ըստ որում տարտամ է, ըստ որում իր
 մէջ կը բովանդակէ այնքան բազմադիմի իմաստներ
 որքան բազմադիմի են յուսահատները պաշարող փոք-
 ձութիւններն իսկ: Այսպիսի գրութեան մը մէջ ինկած
 մարդը պարզապէս առարկայ մ'է, գործիք մը, գոր-
 ուրիչ մարդ մը ըստ հաճոյս կտոնէ կամ կը թողու: Ռամ-
 կավարութեան տռաջին մտահոգութիւնը պէտք է
 ըլլալ՝ այդ գործիքը վերածել մարդու:

Եւ պէտք է լաւ հասկընալ թէ՛ սասնաւորներու
 միջամտութիւնը, բարեգործութեան վեհանձն ք-ձայն-
 ները՝ — որոնք ա՛յնչափ յարգելի են իրենց շարժա-
 ութիւներով, բայց այնչափ անորոշ եւ սահմանափակ
 իրենց արդիւնքով — անբաւական են: Որպէս զի ա-
 մէն աշխատող անհատ կարենայ նաեւ ուտել, եւ քը-
 նանալ առանց ահուելի տուայտանքի, պէտք է որ
 ընկերային կազմակերպութիւնը իրեն ապահովէ իր
 աշխատութեան արդիւնքին մէկ արդար բաժինը: Այս

բանին ճանապարհը եւ միջոցները կրնան դժուարաւ ճշգրտուիլ, սակայն սկզբունքը այլեւս անլիճելիօրէն բացայայտ է : Պէտք է նաեւ որ, ընկերութիւնը դրդելով հանգերձ անհատը՝ ինքիւր հաշտոյն կանխաւ հոգ եւ խնայասէր ըլլալու, անոր աւելի դիւրամատչելի ընծայելով հանդերձ խնայողութեան գործնական միջոցները, միւս կողմէ, պարտականութիւն ստանձնէ, ծայրայեղ սպարազաններու մէջ — ինչպէս են ծերութիւնը եւ հիւանդութիւնը — անոր ապահովելու եղբայրական օգնութիւն մը : Այն ատեն, բայց այն ատեն միայն, այդ դեռ շատ տարրական — օրը օրին — ապահովութեան մէջ, աշխատաւորը պիտի անցնի մարդկութեան սանդղին առաջին աստիճանէն, — պիտի սկսի մարդ ըլլալ :

Սակայն բառին կատարեալ առումովը մտայն պիտի չըլլայ, բայց միայն ա՛յն ժամանակ երբ գիտնայ թէ պարտաւորութիւններ եւ իրաւունքներ ունի, երբ իր անձին արժանապատուութեանը մասին գո՛նէ ամենատարրական գաղափար մ'ունենայ, երբ ճանչնայ իր աւրելուն նպատակը : Բարոյական զարգացողութեան այս տարերքը մարդկային անհատներու սորվեցնելու կանխելը, առանց նախապէս անոնց դիւրացնելու առօրեայ հացը ճարելու ամենադժուարին գործը, պարզապէս հեզնութիւն մը պիտի ըլլար : Բայց միւս կողմէ, անհատին պէտքերը եւ ընկերութեան օգնութիւնը միմիայն «նիւթական» ին մէջ սահմանափակելն ալ, առանց անոր կցելու բարոյական պէտքը, պիտի նշանակէր պատրաստել ժողովուրդ մը որուն մէջ մարդկային նկարագիրը կիսով չափ միայն կերպաւորուած պիտի ըլլար :

Առաւել Մարդ ըլլալ կը նշանակէ երջանկութեան աջնքան բնական բաղձանքին մէջ կարգի եւ ներդաշնակութեան սկզբունք մը մտցնել : Այն որ քիչ բան ունի , պէտք է հասկընայ եւ անշքադանայ որ , կեանքի մէջ գլխաւոր առաւելութիւնը շատ ունենալուն մէջ չկայանար , այլ շատ արժեքուն մէջ : Իսկոյն որ աւելի առատ ինչքի տէր է , պէտք է չափաւորութիւն դնէ իր վայելքին մէջ , ո՛չ միայն բարոյական վայելչութեան համար , այլ եւ իբր պարտականութիւն մը անոնց հանդէպ որ կը տաժանին ու կը տառապին :

Վերջապէս կատարեալ մարդ ըլլալը այն է որ , մարդ՝ ի՛նչ վիճակի ալ պատկանի , բարօրութեան մասին հասարակ դադարաբէն աւելի մաքուր եւ աւելի բարձր գաղափար մը կազմելէ վերջ՝ բարօրութիւնը ստորագասէ առատաձեռնութեան եւ զոհարերութեան ոգիին , մարդկային հոգիին ամենէն բնատիպ շարժումներուն :

Ասոնք են այն աստիճանները որոնցմէ մի առ մի պէտք է անցնի ռամկավարութիւնը՝ կեանքի իր իմաստասիրութեանը մէջ . այս խօսք է լիակատար նըշանակութիւնը սա բանաձեւին . ռամկավարութիւնը՝ մարդ ակուակ երթալով աւելի արժանի ակձեր կը կերտէ : Եւ այս հեռապատկերին շնորհիւ է որ , մենք այժմէն կը սիրենք ռամկավարական վիճակը , որպէս թէ անիկա արդէն հասած ըլլար այն կատարելութեան որուն կրնայ եւ պարտի հասնիլ , եւ որուն պիտի հասնի աստիճանաբար , բայց ապահովաբար :

Եւ թող չի կրկնեն մեզի — ինչ որ արդէն ըսած են , բայց որ կոյր կամ անիրաւ մեղադրանք մ'է

լոկ — թէ ընդհանուր մարդկութեան զարգացումին այս մտահոգութիւնը՝ եսին շփացումը առաջ կը բերէ, եւ հետեւեալաբար՝ անիշխանսականութեան կառաջնորդէ : Եսը չէ՛ զոր ոամկալարական զարգացողութիւնը կը հետամտի ծաղկեցնել, այլ անձն է, այսինքն այն բանը որ անհատին մէջ կը գերազանցէ անհատակա- նութիւնը, եւ որ անհունորէն հաղորդական ու ըն- կերական է : Անուրանալի է որ, կրնայ գտնուիլ ան- հատապաշտութեան (*individualisme*) սխալ եւ վտան- գաւոր ըմբռնում մըն ալ, որ սակայն ուրիշ բան չէ՛ եթէ ո՛չ այս սկզբունքին մէկ խեղաթիւրումը : Ար- դարեւ, ուրի՛շ բան է ճշմարիտ ոամկալարական ան- հատապաշտութիւնը, եւ ուրիշ բան՝ անոր ծաղրա- նկարը (խեղաթիւրուած մէկ ձեւը) ոամկալարութեան հակառակորդներէն բռնազրօսիկ կերպով հնարակե- րութեամբ՝ ի պէտս եւ ի դիւրութիւն իրենց վիճաբա- նութեանց :



ՌԱՄԿԱՎԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՀԱՅԵԱՅՔԸ

Եթէ Ռամկավարութեան սահմանը այն է, ինչ որ տեսանք նախորդ գլխուն մէջ, ի՞նչ պէտք է ըլլայ ուրեմն անոր քաղաքական աշխարհայեացքը: Քաղաքական աշխարհայեացք մը հետապնդելի նպատակներու տեսութիւն (théorie) մ'է եւ ոչ թէ գործածելի միջոցներու դուցակագրութիւն մը: Միջոցներու ընտրութիւնը պետական մարդուն եւ տնտեսագէտին գործն է, մի՞նչդեռ նպատակներու որոշողութիւնը քաղաքական իմաստասիրութեան կը պատկանի: Չանանք ձեւակերպել նպատակներու այս տեսութիւնը:

Ռամկավարութեան առաջին նպատակը պէտք է ըլլայ Ազատութիւնը: Ո՛չ թէ անոր համար որ լաւ մը բռնուած ազատութիւնը ճնշուի՞ն նախընտրելի եւ աւելի վե՛հ է: Եթէ այս փորձանիշը ընդունուէր, ա՜նըզգայ եւ անկեալ ժողովուրդ մը պիտի կրնար ազատութիւնը արհամարհել: Այդպիսի ժողովուրդ մը իրեն իտէալ պիտի ունենար իրաւակարգ մը, ուր իշխանութիւնը ստանձնէր կամենալ, խորհիլ եւ գործել քաղաքացիին համար: Եւ անտեղի պիտի ըլլար ըսել թէ այդ ժողովուրդը անպատճառ կը սխալի, եթէ միայն զգացումին կամ շահուն թողուէր վճիռ արձակել: Ո՛չ, եթէ ազատութիւնը ռամկավարութեան

նպատակներուն ճակատը կարձանագրուի , պատճառն այն է որ մարդկային անձին լիակատար զարգացման անհրաժեշտ պայմանն է այն :

Կրնայ ըսուիլ թէ գիտակցութիւնը անձին կեանքին հանդոյցն է : Զարկէք գիտակցութիւնը եւ անձը կը մեռնի : Մարդկային կենդանի մը կը մնայ , բայց ո՛չ մարդը : Ռամկավարութեան բուն պաշտօնն է , ինչպէս վերեւ ըսինք , գիտակցութիւններ արթընցնել : Ռամկավարութիւնը կարելի է սահմանել՝ գիտակցութիւններու ռուսանը : Արդ գիտակցութեան եւ ազատութեան միջեւ սերտ աղերս մը , խորունկ յարակցութիւն մը կայ : Գիտակցութիւնը , անգամ մը որ կը ծնի , կը ձգտի լիակատար եւ բացարձակ ազատութեան — անձնիշխանութեան — ստացումին : « Ռամկավարութիւնը գիտակցութիւններու ոստանն է » խօսքը համանիշ է ըսելու . « Ռամկավարութիւնը անձնիշխան գիտակցութիւններու ոստանն է » : Դեռ չազատագրուած գիտակցութիւններու ընկերութեան մը մէջ տիրապետող կարգաւորութիւնը կրնայ ունենալ իր արժէքը , իր գեղեցկութիւնն իսկ . բայց եւ այնպէս անիկա հեռւոր նմանութիւնն ու աղօտ ուրուագիծն է լոկ այն ճշմարիտ կարգաւորութեան որ պիտի ծնանի օր մը՝ անձնիշխան գիտակցութիւններու կամաւոր միաբանութենէն : Միւս կողմէ , ազատութիւնը գիտակցութիւններու ծաղկումին համար հարկաւոր միջնորդան է : Բռնատիրող իրաւակարգ մը առաջ կը բերէ մարգամեքենաներ որոնք պիտի գերասանեն , պիտի կսպկեն մարդկային անձը , բայց անոր տեղը չպիտի բռնեն :

Բարոյական եւ կրօնական այլավարութեան (*bétéronomie*) վարդապետութիւնները այս կէտին իրազեկ

ըլլալնուն համար է որ, անխոհեմ՝ եւ նշանակալից պատուասիրութեամբ մը՝ ՚լու հնազանդութիւնն իսկ ազատութեան անունով կը պճնազարդեն (*):

Բայց գիտակցութիւնը չի կրնար, առանց տեսակ մը անձնաստղանութեան՝ անդործ եւ համբ կենալ: Ապրիլը՝ իրեն համար՝ խօսիլ, գործել է: Գիտակցութիւնը կը խօսի՝ իր հաւատքը խոստովանելու համար, կը գործէ՝ իր հաւատքը տարածելու համար: Հետեւաբար գիտակցութիւններու ազատութիւնը կը պահանջէ՝ իբր պաշտպանութեան զրահ մը, եւ իբր գործիք՝ կարգուսարքերու այն ամբողջ կազմածը զոր արդի հանրային իրաւունքի լեզուով կը կոչենք ֆալսափասն ազատութիւն. — շատատուն դատարաններ, դատավարական մնայուն կերպեր, պատժական բանաւոր օրէնքներ, ամէն ինչ որ կը նպաստէ քաղաքացիին ապահովութեանը. խօսքի ազատութիւն, մամուլի ազատութիւն եւ ընկերակցութեան ազատութիւն, այն չափով որ պետութեան ապահովութեան հետ կրնայ հաշտուիլ. — նկատողութիւն մը՝ որմէ ո՛չ մէկ պետութիւն չբաժարած է կամ կրնայ չբաժարիլ երբեք. — վերջապէս՝ մասնակցութիւն քաղաքական ընտրութեանց (ընդհանուր քուէարկութիւն):

(*) Ընկերակցութեանց ազատութեան սկզբունքին վրայ հորագոյն վիճաբանութեան մը մէջ՝ Մ. քր Մէօն (կղերամիս), խօսելով կրօնաւորութեան ուխտին վրայ, կ'ըսէր որ այդ ուխտը բնողներ՝ «իրենց ազատութեան գոհարեւումին մէջ՝ նոյն այդ ազատութեան գերագոյն, ամենափառաւոր եւ ամենավճռակալ կիրարկութիւնը կրնեն»: (Ֆրանսական Երեսփ. Ժողով, 21 Յունուար 1901ի նիստը):

Ճիշդ է թէ, գիտակցութեան ազատութեան եւ քաղաքական ազատութեան միջեւ այն յարաբերութիւնը զոր վերեւ պարզեցինք՝ տակաւին շատերէն ընդունուած չէ : Ընդհանրապէս, գիտակցութեան (խղճի) ազատութիւնը կը ներկայացնեն իբրեւ մին այն ազատութիւններէն — թէեւ ոչ նուազ թանկագինը — զորս կենթադրէ քաղաքականապէս ազատ պետութիւններու կազմակերպութիւնը : Առանց խղճի ազատութեան, կըսեն, չկայ կատարեալ քաղաքական ազատութիւն : Մենք այս յարաբերութեան եզրերը կը յեղաշրջենք : Մեր աչքին՝ գիտակցութեանց ազատութիւնը քաղաքական ազատութեան հետեւութիւնը կամ անոր լրացուցիչը չէ, այլ անոր գոյութեան պատճառն է :

Մարդիկ՝ գլխաւորաբար իրենց ուզածին պէս խորճելու եւ իրենց կրցածին պէս հաւատալու իրենց իրաւունքը հաստատելու եւ պաշտպանելու համար էր որ, ջանադիր եղան ինքզինքնին օժտելու երթալով աւելի ազատ կարգուսարքերով : Փոյթ չէ՛ թէ այս շարժումը՝ երկարատեւ ժամանակաշրջաններու մէջ՝ անյայտ կերպով առաջացած ըլլայ եւ անոր մասնակցող սերունդներուն նշմարելի եղած չըլլայ միշտ : Օրուան ծանրութեան տակ կբած եւ երկրորդական հոգերու մանրամասնութեանց մէջ կորսուած այդ սերունդներէն աւելի, մե՛նք ենք որ կը տեսնանք այսօր պատմութեան բուն ընթացքը, վախճանը որուն կը ձգաի ու կը մօտենայ այն : Նւ արդէն, եթէ մեր նախորդներէն պայծառ կը տեսնենք, առաջին տեսնողները չենք սակայն այս իրողութեան : Իմաստասիրական հայեցողութեան հնաւուրց զարթօնքէն ի վեր, խորհող մտքերու անընդհատ յաջորդութիւն մը

իրենց գրուածնէրով սորվեցուցին — եւ երբեմն ալ այս գատին հասար տառապելու իրենց արիութեամբը ցոյց տուին — միտքի եւ կարծիքի ազատութեան անբաղդատելի, անսահման արժէքը :

Գիտակցութեան ազատութեան եւ քաղաքական ազատութեան իրարու նկատմամբ յարաբերութիւնը ըստ վերնոյն սահմանելով՝ խզած կ'ըլլանք վերջին կապերը որ կը կապակցեն ռամկալարական աշխարհահայեացքը անցեալ ժամանակներու նիւթապաշտութեան հետ :

Ընդունի՛լ թէ գիտակցութեան ազատութիւնը պարզ մէկ մասն է այն ամբողջին որ կը կոչուի քաղաքական ազատութիւն, կը նշանակէ ընդունիլ թէ անիկա կը բղխի իրերու մասնաւոր կարգէ մը, որ կրնայ գտնուիլ որոշ ժամանակներ, որոշ տեղերու մէջ, բայց որ կրնար նաեւ գոյութիւն չունենալ. պատմութեան մէկ բարեպատեհ դիպուածը՝ վերջապէս. կը նշանակէ, մէկ խօսքով, մխրճուած մնալ այն հին ըմբռնումին մէջ, որու համաձայն պետութիւնը՝ իբր անդամներուն հետապնդած վախճաններէն տարբեր վախճան մ'ունենալով՝ ժլատ ձեռքով մը եւ ակամայ ստիպումի տակ միայն՝ անոնց կը կշռէ՝ ազատութեան կարելիին չափ քիչ բաժին մը : Այնպէս չէ սակայն, կամ լաւ եւս ըսել, այնպէս ըլլալէ կը դադրի՝ երբ քաջակալարական աշխարհահայեացքի մը խորէն նայուի իրերուն վրայ : Քանի որ գիտակցութիւններու լիակատար ազատութենէն աւելի բարձր բան մը չի կրնար երեւակայուիլ, կրնանք հետեւցնել թէ պետութիւնը իբր ամբողջութեամբը կը կազմակերպուի՝ անհատական իրաւունքներու պաշտպանութեան համար :

Թերեւս ոմանք զարմանան տեսնելով որ այստեղ քաղաքական ազատութիւնը՝ ռամկավարութեան նըպատակներուն առաջին կարգին վրայ դրուած է, մինչդեռ ընդհանրապէս կը կարգանք թէ ռամկավարութեան գլխաւոր նպատակն է՝ ամենուն մասնակցութիւնը՝ գերիշխանութեան : Բայց ժողովուրդին գերիշխանութիւնը ռամկավարական իրաւակարգի արտայայտութիւնն է եւ ո՛չ թէ անոր նպատակը : Եթէ զանուէր սեւ է կամք մը որ կարող ըլլար ի գերեւհանել ընդհանուրին կամքը՝ այն քաղաքական ընկերութիւնը որուն մէջ հնարաւոր կ'ըլլար այս բանը՝ կը դադրէր ռամկավարութիւն ըլլալէ : Ազգին՝ գերիշխանութիւնն ունենալու եւ մի միայն ինք գերիշխան ըլլալու ձգտումը՝ չնակակշռուած եւ սկզբունքով բացարձակ իշխանութիւն մը ի գործ դնելու սին հաճոյքին համար չէ՛ — մանաւանդ պետական արդի կազմին մէջ, ուր այս իշխանութեան կիրարկութեան ստացած ձեւն ուրիշ բան չէ եթէ ոչ՝ պարբերաբար քուէտուփին մէջ քուէթուղթ մը ձգելը : Եւ ոչ ալ՝ իր քովն ի վեր ուրիշ սեւ է իշխանութեան գոյութենէն ազատուած ըլլալու՝ թէեւ քիչ մը աւելի իրական բայց ոչինչ նուազ ժխտական՝ գոհունակութեան համա՛ր է, որ ռամկավարութիւնը միայն ժողովուրդին կը սահմանէ գերիշխանութիւնը : Այլ միայն ազատութեան համար է : Քուէարկութեան մէջ ամենուն մասնակցութիւնը՝ ամենուն ազատութեան պայմանն է : Սակայն ո՛չ բաւարար պայմանը . արդարեւ, մեծամասնութիւնը կրնայ իր քուէներուն առաւելութեանը շնորհիւ ճնշել փոքրամասնութիւնը : Պէտք է փոքրամասնութեան իրաւունքներն ալ իրենց

կարգին երաշխաւորուած ըլլան, եւ այդ երաշխաւորութիւնը կը կայանայ այն զանազան մասնաւոր ազատութիւններուն մէջ որոնց վայելումը՝ ռամկավարութեանց մէջ՝ բոլոր քաղաքացիներուն համար ապահովուած է կամ պէտք է ըլլայ: Ժողովուրդին գերիխանութիւնը ազատութեան մէկ անհրաժեշտ պայմանն է, ըսինք. զի անով վերջ կը գտնէ ամէն հակամարտութիւն ընդհանուրի կամքին եւ զայն խափանելու իսկ կարող ո եւ է մասնաւոր կամքի մը միջեւ:

Քաղաքական ազատութիւնը ռամկավարութեան առաջին վախճանը ըլլալով, կը հետեւի թէ, ժողովուրդ մը, որ իր քուէի իրաւունքը կը գործածէ ինք իր գլխուն տէր մը բարձրացնելու համար, ժողովուրդ մը՝ որ իր ներկայացուցիչներուն ազատ ընտրութեանը տեղ կը նախընտրէ ռամկավճիւղը (*plébiscite*), մէկ խօսքով՝ կեսարական ռամկավարութիւն մը՝ կատարեալ հրէշտութիւն մըն է: Այդպիսի ռամկավարութիւն մը իր ձեռքով ջնջած կըլլայ իր գոյութեան պատճառըն իսկ՝ որ ազատութիւնն է:

Նոյնպէս պէտք չէ զարմանալ որ հաւասարութիւնն ալ չենք դրած ռամկավարութեան մը նպատակներուն գլուխը: Սովորական բնաբան մը եղած է ըսել թէ, հաւասարութեան նպատաւոր ռամկավարութիւն մը՝ թշնամի է ազատութեան. եւ այնչափ աւելի թշնամի է ազատութեան, որչափ աւելի կը ձգտի նպատաւորել հաւասարութիւնը: Բայց այս բնաբանը, ո՛րչափ որ յաճախ գործածուած եւ նոյն իսկ էմիլ Գագէի (*Emile Faguet*) (*) նման խորա-

(*) Տեսնել նոյնի «*Questions politiques*»-ը եւ «*Problèmes politiques du temps présent*» գրքին Յառաջաբանը:

զննին զիտողի մ'ալ գրչին տակ հանդիպուած ըլլայ ,
 հեռի է ուղիղ ըլլալէ : Քիչ մը վերը ցոյց տուի թէ
 ռամկավարութեան մը մէջ ամենէն պահանջուած բանն
 է ազատութեան պահպանումը եւ ծաւալումը : Գալով
 հաւասարութեան , միակ հաւասարութեան որուն
 ռամկավարութիւնը ջատագով կը հանդիսանայ , կա-
 ընելի է ըսել թէ՛ ընկերային միութիւններուն բոլո-
 բովին վերացական եւ մաթեմատիքական հաւասա-
 րութիւնն է այն , հաւասարութիւն մը՝ որ կը պա-
 հանջուի արգարացնելու համար ընդհանուր քուէար-
 կութեան սկզբունքին օրինաւորութիւնը . հաւասա-
 րութիւն մը՝ որ բիրտ խորհրդանշանն է լոկ այն հա-
 ւասարութեան , որ պիտի տիրապետէր կատարելատիպ
 ռամկավարութեան մը մէջ , յորում բոլոր քաղաքա-
 ցիները բարոյապէս եւ մտաւորականապէս իրարու
 հարմարաւոր , հարմարժեք ըլլային : Բայց իրական
 հաւասարութիւնը , իրականին մէջ հաւասարութիւնը ,
 այն որի շնորհիւ բոլոր քաղաքացիները պէտք էին
 ունենալ միեւնոյն վիճակը , միեւնոյն առաւելու-
 թիւնները , ո եւ է ռամկավարի մը ծրագրին մէջ տեղ
 չունի : Ռամկավարութիւնը երբեք չէ խոստացած
 հարթաչափ գործիք մը անցընել զլուխներուն վրայէն
 կամ նոյն իսկ միայն հարստութիւններուն վրայէն :
 Ռամկավարութեան բոլոր ջանքը կը կայանայ ընկե-
 րական կարգուսարքը այնպիսի ձեւի մը վերածել , որ
 անհասակսն անկասագիրներու մեկնակիտիւ վրայ կա-
 րելիիւ չտի նորազ անհարստորութիւն ըլլայ : Կը
 տեսնուի ուրեմն , որ այս կէտի մէջ ալ՝ նախ ռամ-
 կավարութեան ձրիապէս կը վերագրեն անտեղի յա-
 ւակնութիւն մը , որպէս զի այնուհետեւ դիւրին ա-

աւելլութիւնը ունենան ռամկավարութիւնը հերքելու :

Ռամկավարութեան երկրորդ վախճանն է՝ օրինականութեան բացարձակ յարգումը : Օրէնքը ուրիշ բան չէ բաց միայն ընդհանուր կամքին արտայայտութիւնը : Ռամկավարութեան մէջ, եթէ քաղաքացի մը կընդլի օրէնքին դէմ, կրնանք ըսել թէ ընդլիզած կըլլայ ինքիւր անձին դէմ, ըստ որում ինքն ալ ընդհանուր կամքին մէկ բաղկացուցիչ տարրն է : Ինչպէս անհատները, նոյնպէս խմբակցութիւնները եւ ժողովրդային զանգուածները (*masses*) պարտաւոր են յարգել օրինականութիւնը : Եթէ երբեք զայն բռնաբարեն, զայթակղութիւնը աւելի խոշոր կըլլայ, ողջմտութեան դէմ նախաախնքը՝ աւելի անտանելի :

Այս կերպով է որ մէջտեղէն կը վերնան ո՛չ միայն սղանդներու, կուսակցութիւններու ըմբոստութեան փորձերը օրէնքի մը դէմ որ դադրած է իրենց հաճելի ըլլալէ կամ որ երբեք հաճելի չէ եղած իրենց, այլև՝ ընդհանրապէս՝ յեղափոխական գործունէութիւնը : Ռամկավարութենէ տարբեր իրաւակարգի մը տակ՝ յեղափոխութիւնը կրնայ թուիլ յուսահատական գերազոյն միջոց մը : Ռամկավարութեան մէջ՝ իր աւելի չունի : Ո՛չ որովհետև օրէնսդրութիւնը կատարեալ եւ անքննադատելի է . ընդհակառակը, ինչպէս քիչ վերջը պիտի ըսենք, մշտնջենապէս յետսկոչելի է այն եւ մշտական ձեւափոխութեան ենթակայ : Եւ այն անիկա միմիայն օրէնսդիր մեծամասնութեան հաճութեամբը կրնայ փոխուիլ : Ասիկա մին է այն ըմբռնումներէն որոնք ամենէն աւելի անհրաժեշտ է քանդակել ամէն մարդու մտքին մէջ : Այն օրը միայն

նամկավարական մնայուն կարգ մը իրապէս գոյութիւն առած եւ վերջնականապէս հաստատուած պիտի ըլլայ, երբ այս ճշմարտութիւնը անվիճելիօրէն ընդունուած ըլլայ :

Քաղաքական աղատութիւնէն եւ օրինապահութիւնէն վերջ պէտք է դնել՝ լաւագոյնին մտահոգութիւնը, յառաջդիմութեան բաղձանքը : Ռամկավարութիւն մը միայն չի ձգտիր յարատեւել, իր գոյութիւնը պահպանել՝ այնպէս ինչպէս որ է, այլ կը ձգտի լաւագոյն դառնալ : Ուստի պէտք է որ յարածամ բաց ըլլայ օգտակար փոփոխութիւններու առջեւ : Անշորրութիւնը ինքնին բարիք մ'է, եւ այս բարիքը զբաւականն է ուրիշ բարիքներու : Բայց պէտք չէ չփոթել անշորրութիւնը անշարժութեան հետ : Ընկերութիւններ կան որոնց մէջ ինչ որ նոր է սարսափելի կ'երեւայ, միմիայն այն պատճառաւ որ նոր է : Այդ կարգէն չէ ռամկավարութիւնը : Առանց սիրահար ըլլալու ամէն փոփոխութեան, որովհետեւ փոփոխութիւն է, եւ գիտնալով տարբերութիւն դնել փորձառութիւններու եւ արկածախնդրութիւններու միջեւ — բան մը որ ուղիղ զատողութեան եւ խոհեմութեան խնդիր է —, ռամկավարութիւնը ոչ միայն չի մերժեր ս'ուէ խիզախ փորձ, այլ ընդհակառակը իր փառքը կը կայանայ ամէն փորձ փորձելուն մէջ : Հետեւաբար պէտք է հրաժարիլ ռամկավարութիւնը մեղադրելէ՝ իր օրէնքներուն յարափոփոխութեանը համար : Եթէ իրօք ճիշդ ըլլար օրէնքներու այդ փոփոխականութիւնը (որ շատ առարկելի է սակայն, բայց որում շատ անգամ փոփոխութիւնները աւելի մակերեւութային են քան հիմնական), զարձեւալ գանգատելու տեղի չկար, զի այդ կատարելապէս

պատշաճ եւ համաձայն է ռամկավարական իրաւակարգի ոգւոյն :

Այն գծերը որոնց վրայ ծանրացայ, կը զանազանեն այս իրաւակարգը իր նսխորդներէն : Արդի իրաւակարգը կը նուիրագործէ քաղաքական ազատութիւնը, զինաթափ կ'ընէ յ'զափոխութիւնը եւ կը հրատարի մեծարելէ սովորութիւնը, որովհետեւ սովորութիւն է : Բայց այս չէ բոլորը : Ժամանակաւ, Պետութիւնը միայն երկու նպատակ ունէր. պահպանել իր գոյութիւնը, տարածել իր իշխանութիւնը : Ռամկավարութեան մէջ՝ Պետութիւնը կ'ուզէ անչուշտ յարատեւել, բայց յառաջդիմելու համար : Գալով իր իշխանութեան սահման, որ այլեւս դժուարահաշտելի է խաղաղութեան տիեզերական պէտքին եւ տիեզերական սէրին հետ, ռամկավարական Պետութիւնը զայն կուզէ փոխարինել աշխարհի վրայ բարոյական ճառագայթումի (բարոյական ազդեցութեան տարածման) մտահոգութեամբը :

Բայց հոս չհ'նք իյնար արեւօք ծուղակի մը մէջ ուր ռամկավարութեան հակասակորդները պիտի ուղէին մեզ բռնել : Ի՞նչ, պիտի բռնեն անոնք. դուք կը հաւատտէ՞ք որ ռամկավարական Պետութեան մը ամենաէական նպատակը չէ՛ իր իշխանութեան տարածումը : Ուրեմն դուք կ'ընշունիք, իբր հետեւութիւն մը ռամկավարական սկզբունքին՝ ազգային ըզգացման, հայրենասիրութեան տկարացումը : Այս է սոսարկութիւնը որով ռամկավարութեան հակասակորդները կը յուսան մեզ նեղը ձգել : Եթէ կը պատասխանեն՝ այս սոսարկութեան, ոչ այնչափ ռամկավարութիւնը զերծ կացուցանելու համար է մեզազ-

րանքէ մը՝ որ անոր չի հասնիր, որչափ ծանրանալու համար օգտակար գաղափարի մը վրայ :

Ռամկավարութեան մէջ՝ աւելի քան ուրիշ ուրիշ իրաւակարգի մէջ, քաղաքացիին կը շահագրգռուի քաղաքին (*cité*, այսինքն Պետութեան) զօրաւոր ըլլալուն : Ոչ միայն որովհետեւ զօրաւոր քաղաքը քաղաքացիին կերպաշխաւորէ իր անձնական ապահովութիւնը, — նկատողութիւն մը, որ ինքնին զանցաւելի չպիտի ըլլար, այնպիսի ժամանակ մը՝ երբ աւմէն մարդ կը կարծէ իրաւունք ունենալ (եւ այս նոր գաղափար է) իր ապահովութեան մասին անձամբ խորհելու եւ միջոցներ ձեռք առնելու, տրամաբանելով որ կեանք մը ուրիշ կեանքի մը համարժէք է, — այլ եւ մանաւանդ, որովհետեւ ռամկավարական քաղաքը բնական պահապանն ու նախանձախնդիրն է այն սկզբունքներուն, որոնց յաղթանակին քաղաքացիին իրաւամբ այնքան արժէք կը նծայէ :

Տկար, վտանգուած, աղմկայոյզ քաղաքի մը, երկրի մը անձուկ շրջանին մէջ ալ կրնան ծաղկիլ արուեստները եւ գեղեցիկ դպրութիւնները : Այսպէս եղան մէկ քանի խառնակահան հանրապետութիւնները՝ վերածնութեան (*Renaissance*) շրջանին : Բայց քիչ հաւանական է որ ընկերային մեծ ճշմարտութիւնները այսպիսի քաղաքներու մէջ նպաստաւոր հող գրտնին ծաւալելու : Ընդհակառակը, անոնք կրնան դիւրաւ զարգանալ ընդարձակ եւ խաղաղ քաղաքի մը մէջ, ուր սրտերը կը խայտան գուարթութեամբ, քաղաքի մը մէջ՝ որ ճանչցած չըլլայ ո՛չ անդարմանելի պարտութիւններու գառնութիւնը եւ ոչ վերջնական փոքրկացումներու մեղամաղձութիւնը : Աւելի

քան ուրիշները՝ հպարտ եւ գոհ միտքերն են որ զիտենն ընդզրկել եւ կը յօժարին տարածել ոսակաւարական ճշմարտութիւնը : Արդ քաղաքացիին հպարտութիւնը եւ ուրախութիւնը սերտօրէն կախում ունին քաղաքին ամբողջականութենէն :

Ահա թէ ինչո՛ւ կարեւոր է որ քաղաքին գոյութեան պայմաններուն եւ քաղաքացիներուն անոր հանդէպ պարտականութիւններուն ծանօթութիւնը մեծ տեղ մը բռնեն ոսակաւարութեան դաստիարակութեանը մէջ :

Հոս զգացումը համաձայն է բանականութեան հետ : Չկայ բան մը աւելի ցաւաւիթ քան քաղաքի մը գերագոյն տագնապը : Հարաւ-ափրիկեան հանրապետութիւնները բաւական հեռու էին Եւրոպայէն եւ անոր գրեթէ անծանօթ : Կը հաւատեն թէ անոնց բնակիչները մէկէ աւելի անգամներ անյազ եւ անգութ գանուեցածն, իրենց անկախութեան յուսահատ պաշտպանութեանը մէջ ի հանդէս բերելէ առաջ այն դիւցազնական կորովը՝ որ մեզ հիացուց : Սակայն իրենց ճիգերուն հետեւեցանք անկեղծ եւ բռնն համակրութեամբ մը : Մեզ այնպէս կը թուէր թէ այդ հանրապետութիւններուն անհետացումը մեծ կորուստ մ'էր համայն մարդկութեան համար : Ուստի եւ այն Ծերունին որ Եւրոպայի ճամբաներուն վրայ կը պըտըտցնէր մեռնիլ չուզող այդ հայրենիքներուն տըրտունջը՝ տեսաւ իր առջեւ բացուելը մեր սրտերուն եւ մեր դրանը, ինչպէս որ կը պատշաճէր ազատ ժողովուրդի մը (*) : Եւ սակայն Հարաւ-ափրիկեան հան-

(*) Գծրազոպար այդ համակրական արտայայտութիւնները, որքան ալ անկեղծ եղած ըլլային նմարտապէս ոսակաւարական ժողովուրդներու կողմէ, ռեւէ դրական արդիւնքի մը չի յանգեցան, ժամանակակից միջազգային դիւանագիտութեան անսիրտ եւ անաղէտ հաշիւներուն եւ նկատումներուն երեսէն :

րապետութիւնները ուրիշ բան չի տուին աշխարհի ,
 բայց միայն իրենց բարքերուն պարզութեան եւ խրա-
 տամբերութեան օրինակը , որուն վրայ պէտք է աւել-
 ցընել իրենց հոգեվարքին մէջ ցոյց տուած անընկ-
 ճելի կորովը : Անոնք սուէ դեր մը չունեցան բարո-
 յական գաղափարներու գանձարանին կազմութեանը
 մէջ եւ ոչ ալ քաղաքակրթութեան գործին մէջ : Ի՞նչ
 պիտի ըլլար , եւ ի՞նչ զգացում պիտի կրէր աիեզեր-
 քը , եթէ յանկարծ վտանգուէր մին այն մեծ հայրե-
 նիքներէն որոնք իրենց բաժինը ունեցած են գաղա-
 փարներու շարժումին մէջ , որոնք իրենց դրական
 գործակցութիւնը ընձևուած են մարդկային յառաջի-
 մութեան : Ի՞նչ պիտի ըլլար , եթէ՝ բոլոր հայրենիք-
 ներուն մէջէն ամենէ՛ն անճնուէրը գեղեցիկ դատե-
 րուն , ամենէ՛ն աւելի ընդունակը զքնարեւրութիւն-
 ներու , Ֆրանսան , կրէր նոր նուազում մ'ալ : Բոլոր
 Ֆրանսացիներուն պարտքն է իրենց բովանդակ եռան-
 դովը աշխատիլ որ չպատահի այսպիսի աղէտ մը , որ
 պիտի չըլլար միայն Ֆրանսական-ազգային , այլ տի-
 եզերական-մարդկային :

Իբար հասկընանք սակայն : Ռամկավարութեան
 մը քաղաքացին որ այնքան որդիականօրէն կապուած
 է հայրենիքի մը , չսիրեր միայն անոր մարմինը ,
 այսինքն անոր հողը եւ սամամանները : Կը սիրէ նաեւ
 անոր հոգին , անոր զգացումները եւ գաղափարները ,
 որ իրն ալ են եւ զորս միւս երկիրներն ալ կը ճանչ-
 նան իր իր հանձարին բնորոշիչ զգացումներն ու
 գաղափարները : Ազգ մը իր բարոյական խէշտին
 պարտութիւններն ալ կրնայ ունենալ , որոնք նոյն-
 քան եւ աւելի գէշ կ'ազդեն քաղաքացիին վրայ որ

քան կորսուած պատերազմ մը : Ահա այս է մեր հայ-
րենիքի ըմբռնումը , որ ուրիշ ուեէ ըմբռնումի մը
հետ բաղդատութենէ չի վախնար :

Քանի մը անգամ արտասանեցի Արշարութիւն
բառը , եւ այս բառ մ'է որուն վրայ պատշաճ է կանգ
առնել , ըստ որում կարտայայտէ ռամկավարական քա-
ղաքականութեան էութիւնն իսկ :

Արդէն՝ քաղաքական ազատութիւնը , օրինակա-
նութիւնը , յառաջդիմութիւնը եւ հայրենիքը սիրելը
արգար ըլլալ ըսել է : Բայց արգար ըլլալու ուրիշ
աւելի արժանաւճայել կերպ մ'ալ կայ : Այդ կը կա-
յանայ ուրիշներու իրաւունքը այնչափ սիրելուն մէջ ,
որ մարդ կարենայ զուարթ սրտով ընշունիլ իր սե-
փական իրաւունքէն կարելուր կրճատումներ յօգուտ
ուրիշներու : Արշարութեան եւ զթութեան միջեւ զա-
սական զանազանութիւնը վերջին ծայր առարկելի է :
Նոյն իսկ կասկածելի ալ է : Հնարուած է պաշտպա-
նելու համար սեփականատէրներուն առանձնաշնոր-
հումները՝ սեփականազուրկներուն աենչանքներուն
դէմ : Մասնաւորապէս վերստեղծուած է Ֆրանսայի
մէջ 1848ի Յունիսի օրերուն վաղորդայնին : Ընկերա-
յին պաշտպանութեան զինարանէն փոխ առնուած
դէնք մ'է (*) :

(*) Վիքոր Քուզեի ծանօթ էջերը՝ - «Ճշմարիտ, Գեղեցի-
կը եւ Բարին» - ներհնուած են «Արդարութիւն եւ Գրութիւն»
փոքրամասն իր մէկ ուրիշ համառօտ նեղիմակութեան, զոր յաւկա-
պէս գրած է «*Petits Traités*» հաւաքածոյի համար, զոր 1848ին
կր խմբագրէր *Institut*-ն կառավարութեան խնդրանօ՞ «վնա-
սակար վարդապետութիւնները» հարուածելու համար :

Աւելին կայ . այն գաղափարը թէ՛ գթութիւնը արդարութենէն վեր է , թէ գթութիւնը աւելի կարժէ քան արդարութիւնը , անպաշտպանելի գաղափար մ'է : Չկայ բան մը որ աւելի թանկագին ըլլայ քան արդարութիւնը , պայմանաւ որ ընդլայնուած եւ խանգաղաճալից արդարութիւն մ'ըլլայ , որպէս զի կարենայ ընդգրկել այն ամէնը ինչ որ մարդասիրութեան մէջ վսեմ յիմարութիւն մը չէ : Անշուշտ , արդարութեան արդէն դժուարամտչելի սահմաններէն անդին՝ պիտի մնայ տակաւին վերնագաւառ մը՝ բացուած անհաշիւ կամ եթէ կուզէք՝ անբանաւոր սլացքներու : Եւ պիտի շարունակուի գրութիւն , մարդասիրութիւն , այսինքն բացարձակ անձնուիրութիւն անունը տալ այս մղումներու թելադրիչ սկզբունքին : Բայց պիտի ընդունուի որ այս կարգի մղումները աւելի կը բղխին բարոյական գեղեցկագիտութենէ մը քան թէ բուն իսկ բարոյականէն :

Ինչպէս կը տեսնուի , ռամկավարութեան քաղաքական աշխարհայեացքը կենթադէ դաստիարակութիւն մը , եւ կը յանգի բարոյականի մը , նոյն իսկ կրօնքի մը , որ է արդարութեան կրօնքը :

Արդարութիւնը այս բարձր պատուանդանին վրայ կը գնենք , որովհետեւ անիկա մեր աչքին այն սկզբունքն է որ իր մէջ կը բովանդակէ կեանքի պահանջները , եւ կեանքը մենք կը նկատենք բարիք մը , Այո՛ , կեանքը բարիք մ'է , հակառակ իր տրութիւններուն եւ իր սահմանաւորութեանը . բարիք մ'է , որովհետեւ խիստ ընդարձակ ասպարէզ մը կը բանայ՝ ուրիշներու եւ մեր անձին բարեկաւութեան ձգտող ճիգերուն առջեւ :

Մարդկութիւնը երկար ժամանակներ արդարութիւնը իրականացած չտեսնելով աշխարհի վրայ, մխիթարուեցաւ այն ակնկալութեամբ որ օր մը պիտի գտնէր զայն կազմ եւ պատրաստ՝ հանդերձեալ աշխարհի մը մէջ : Մարդկութիւնը շատ մեծ սփոփանք մը գտաւ այս հաւատքին մէջ, եւ դեռ այսօր կը գտնէ : Նպատակէս դուրս է այստեղ ըսել ուրիշ խօսք մը որ բնոյթ ունենար այդ հաւատքը տկարացնելու կամ խախտելու՝ անով անանող հոգիներուն մէջէն : Բայց ս'վ կրնայ ուրանալ որ, եթէ մարդկութիւնը՝ անհանդուրժելի չարիքներու եւ անյողթելի երեւցող անիրաւութիւններու հանդէպ՝ իր հաւատքէն աւելի իր բարոյական կորովին եւ իր սեփական ձեռներէցութեանը ապաւինած չըլլար, այսօր շա՛տ հեռու պիտի ըլլար զարգացողութեան եւ քաղաքակրթութեան այն բարձր աստիճանէն որուն հասած է : Արդարեւ, մարդիկ միշտ մտքատած են աւելի արդարութիւն մտցնելու համար իրենց անհատական ճակատագրին մէջ, եւ աւելի ուրախութիւն՝ հաւաքական ճակատագրին մէջ : Ա՛լ հիմա մարդիկ հասած են աւելի բարձր հասկացողութեան մը, որու շնորհիւ կրմբոնեն թէ, ինչ որ անցեալին մէջ ըրած են սրտի խոյանքով մը, կամ իրենց փրկութեան կասիրական մտահոգութեամբը եւ կամ վերջապէս այն համոզումով որ՝ նուազ նպաստաւորեալներու հանդէպ բարեսրտութիւնն ու բարեացակամութիւնը աստուածահաճոյ առաքինութիւններ են, նոյնը պէտք է ընեն այսուհետեւ առանց իրենց անձին վրայ ուրիշ անդրադարձութեան, առանց ուրիշ հաշիւի կամ նկատումի, այլ պարզապէս որովհետեւ արդար է :

Ստիպուած չե՛ն անպատճառ իրենց միաքը այս աշխարհի վրայ կեդրոնացնելու : Բոլորովին ազատ են հանդերձեալ կեանքի վարկածը ընդունելու եւ հաւատալու անոր : Բայց միւս կողմէ հասկըցած են որ , այս սոցնքան հրապուրիչ վարկածը չի կրնար մէջ բերուիլ ո՛չ իբր հակադրութիւն մը աշխարհի երջանիկներուն ծուլութեանը եւ տկարացումներուն , եւ ոչ իբր սփոփանք մը՝ որով կարելի ըլլար մարդկօրէն փոխարինել թշուառներու տառապանքը : Այս վերջիններուն մարդ պարտաւոր է՝ իբրեւ մարդ՝ բոլոր կարելի արգարութիւնը ընել , այս աշխարհի մէջ իսկ :

Կարծել՝ թէ կեանքը կը ձգտի եւ ընդունակ է բարւոքուելու ամենուն համար՝ կը նշանակէ վերագառնալ 18րդ դարու լաւատեսութեանը , — այն խորունկ համոզումին՝ որուն վրայ կառուցուած է այն ժամանակի մարդերուն գաւանած իմաստասիրական գաղտփարններուն ամբողջ շէնքը : Ճի՛շդ ինչպէս որ կը վերանորոգենք անոնց գաղտփարները , բայց գաւանք ամբողջացնելով եւ երբեմն ուղղելով , նոյնպէս պէտք է անդամ մ՛ալ բանանք մեր հոգիները անոնց հոգին լեցնող զգացումին — լաւատեսութեան — որ այդ մարդերուն ներշնչեց՝ այնչափ խիզախել եւ այնչափ համբերել : Մեր լաւատեսութիւնը սակայն կէտառ կէտ չի յիշեցներ մեր նախորդներունը : Մերը պիտի ըլլայ աւելի զգաստ , նուազ ենթակայ պատրանքներու , աւելի իմաստուն եւ աւելի շրջահայեաց , միանգամայն այնչափ տոկուն եւ այնչափ ձկուն , որ կարենայ մեղի ներշնչել ինչպէս յուսալու համարձակութիւնը նոյնպէս սպասելու համբերութիւնը : Լաւատեսութիւնը չտպացուցուիր : Բայց յուստեսու-

թիւնն ալ նոյնպէս տրամաբանական նախադասու-
 թիւններու շարքի մը եզրակացութիւնը չէ ։ Եթէ
 ստիպուած ենք բաժին մը տալ ենթադրութեան—եւ այդ
 հարկը անխուսափելի կը դառնայ երբ կեանքի իմաս-
 տը հետազօտելու կը ձեռնարկենք — այդ պարագային
 աւելի բանաւոր է ընտրել այն ենթադրութիւնը որ
 զօրաւոր շարժառիթներ կընձեռէ ապրելու եւ կամե-
 նալու ։



Ե.

ՌԱՄԿԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆ

Գ Ա Ղ Ա Փ Ա Ր Ա Պ Ա Շ Տ Մ Է Թ Ո Տ Ը

Այստեղ առաջ բերուած քաղաքական աշխարհահայեացքը՝ նախ եւ առաջ ազատական աշխարհահայեացք մ'է, որովհետեւ քաղաքական ընկերակցութեան իրը գլխաւոր նպատակը ցոյց կուտայ նախ՝ քաղաքական ազատութեան ստեղծումը, եւ յետոյ՝ անոր պահպանումը եւ զարգացումը. որովհետեւ կը յայտարարէ թէ՛ բոլոր ազատութիւնները, սկսեալ զիրտակցութեան ազատութենէն, — որ սկիզբն եւ ազբիւրն է միւս ազատութիւններուն, — նուիրական են. որովհետեւ, վերջապէս, տարածուելու եւ միտքերու վրայ տիրապետելու համար՝ կը զործադրէ միմիայն ազատութեան արժանաւլայել միջոցներ :

Բայց հասարակ ազատականութեան պէս բոլորովին ժխտական աշխարհահայեացք մը չէ, որուն բոլոր փառասիրութիւնը կայանար՝ աշխարհի բարեբաստիկներուն առանձնաշնորհմանց շուրջը պահակի դեր կատարել : Դրական աշխարհահայեացք մ'է, որ կը պայքարի՝ ազատութեան բարիքը քաղաքին (հայրենիքին) բոլոր անդամներուն տարածելու համար : Թո՛ղ ամէն մարդ սեփականութիւն ունենայ, որպէս զի սեփականութեան ազատութիւնը շահագրգռէ ամէնքը .

Թո՛ղ ամէնքը բան սորվին , որպէս զի մտածումի ազատութիւնը ամենուն սիրելի ըլլայ . թող ամէն մէկը կենդանի գիտակցութիւն մը ըլլայ , որպէս զի գիտակցութեան ազատութիւնը՝ իւրաքանչիւրին աչքին՝ երևայ իբրև բարիքներուն ամենաստուգիւնը :

Ռամկավարական լաւ ըմբռնուած աշխարհահայեացքը միանգամայն մարդկայնական աշխարհահայեացք մ'է , ըստ որում օրինաւոր եւ հարկաւոր կը յայտարարէ բոլոր մարդերու վիճակին բարելաւումը, — բարոյական եւ մտաւորական վիճակին , ինչպէս նաեւ տնտեսական վիճակին : Ի դուր ընկերվարականութիւնը կը ճգնի ցոյց տալ թէ իրմէ զատ չկայ վարդապետութիւն մը որ ընդհանուր մարդկութեան վիճակին լիակողմանի բարւոքումը իրեն նպատակ ընտրած ըլլայ : Այս նպատակը ընկերվարականութեան առանձնաչնորհումը չէ՛ սակայն . այս կէտի մէջ ռամկավարական եւ ընկերվարական վարդապետութիւնները իրարու հետ ունին թէ՛ սերտ առնչութիւններ եւ թէ՛ անլերածելի տարբերութիւններ : Մարդկութեան բոլոր ձգտումները գէպ ի տիեզերական բարելաւութիւնը սրտերու , մտքերու եւ մարմիններու , մասնաւորապէս աշխատաւորներու վիճակին բոլոր կարելի եւ գործնական բարւոքումները՝ ռամկավարական աշխարհահայեացքի անբաժան մասը կը կազմեն . ինչ որ դուքսը կը մնայ , ընկերվարական—յեղափոխական մտայնութեան եւ գործելակերպին հետ՝ ընկերվարական վարդապետութեան ենթադրական , հակագիտական եւ ցնորատեսական մասն է , եւ այս վերջին մասն է արդէն՝ որ որոշակի կը հակասէ ռամկավարութեան եւ զոր հարկ դատուած է յայտաբոյժել Ընկերվարականութիւն անունին տակ :

Ընկերվարականութեան ասմկալարութեան հետ
առնչութիւններուն կարգին , անցողակի յիշենք թէ ,
Ֆրանսական ընկերվարականութեան ասմկիրանները
ամէնքն ալ պահանջ դրին զարգացողութեան յառաջ-
գիմութիւնը , իբր պայման եւ գրաւական տնտեսա-
կան յառաջգիմութեան : Չբաւականացան միայն տըն-
տեսական կողմէն քննելու մարդկութեան ճակա-
տագիրը :

Ռամկավարական աշխարհայեացքը կարելի է կը
նկատէ սեփականութեան շուրջ նախատեսուած ձեւա-
փոխութիւններուն մեծագոյն մասը , թէ՛ անոր սկզբ-
բունքին մէջ եւ թէ՛ մանաւանդ անոր որպիսութեան
եւ գոյութեան պայմաններուն մէջ , — միակ վերապա-
հութեամբ մը սակայն , որու համաձայն՝ ԱՆՀԱՏԱ-
ԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ կը ներկայանայ ասմկավա-
րութեան աչքին՝ իբր «ԸՆԿԵՐԱՅԻՆ ՅԱՌԱՋԴԻՄՈՒ-
ԹԵԱՆ ՄԷԿ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԷԹՈՏԸ , ՈՐՈՒՆ ՆՊԱՏԱԿԱ-
ՅԱՐՄԱՐՈՒԹԻՒՆԸ ԱՊԱՅՈՒՅՈՒԱԾ Է ՓՈՐՉԱՌՈՒ-
ԹԵԱՄԲ» (*) : Գալով սեփականութեան որպիսութեա-
նը , գոյութեան պայմաններուն , ասոնք շրջափոխ-
ուած են յորմեհետէ մարդկութիւնը գոյութիւն ունի
եւ իր կեանքին յիշատակարանները կը բռնէ , ու դեռ
պիտի փոխուին : Բայց այս փոփոխութիւնները տեղի
պիտի ունենան աստիճանաբար , իրերու բնական ըն-
թացքով , առանց զօրաւոր ցնցումի :

Ռամկավարութեան եւ ընկերվարականութեան
տարբերութիւններուն կարգին՝ անցողակի յիշենք
վերջինին հոգեբանութեան եւ գործունէութեան այն
նկարագիրը զոր ասմկավարութիւնը կը մերժէ իբր

(*) Renouvier, Science de la Morale-հասրԲ. երև 27 :

բոլոր ուժովը. — յեղափոխական կազմը՝ իբրև պատմունան, ասելուքիւնը՝ իբրև սկզբունք, բունութիւնը՝ իբրև միջոց, աղանդաւոր ոգին՝ որ չի հանդուրժեր որ ունէ մէկը կարողանայ, առանց բանազրուելու՝ տարբեր մտածել վարպետէն, եթէ նոյն իսկ վարպետ մ'ալ ինք կզամ ըլլայ. վերջապէս միանգամայն սուկաշի եւ միամիտ այն վարդապետականութիւնը՝ որու շնորհիւ կարգ մը տեսականագէտներ կը ճշգրտուեն փափաքուած եւ փափաքելի բոլոր բարեփոխումներուն ձևը. — կարծես գաղափարներու պատմութիւնը ապացուցած չըլլար՝ յաճախ կատարուած եւ նոյնչափ յաճախ վրիպած այս փորձին ունայնութիւնը :

Կրնայ ըսուիլ թէ ամէն բան կը պատահի աշխարհի վրայ. բայց գրեթէ երբեք պատահած չէ, որ ընկերային փոփոխութիւն մը առաջ եկած ըլլայ ճշդի'ւ իր նախաձեռնողներուն գծած բանաձևին համաձայն : Եւ այս պարագան պէտք էր որ աւելի համեատ դարձընէր սխաթէմներու յօրինողները : Նոյնպէս պէտք էր դանոնք ներողամիտ դարձընէր, եւ անոնց ներշնչէր այն հաւատքը թէ՛ իրենց յաճախ քմածին ըմբռնումներուն բռնութեան ենթարկուիլ չուզող մտքերուն շարքին մէջ ալ կան այնպիսիներ՝ որ իրենցմէ պակաս խիզախ չեն եւ ոչ ալ նուազ անկեղծօրէն հետամուտ ընկերային յառաջդիմութեան, նոյն իսկ եթէ իրենց ստանձնաշնորհումները մասամբ տուժէին այդ յառաջդիմութենէն : «Արտաբոյ ընկերվարականութեան չիք փրկութիւն» յաւակնող հաւաստումը աւելի արժէք չունի՝ քան հուշակաւոր պապական նշանաբանը, որուն ծնունդ տուող մասայնութենէն տարբեր չէ՛ արդէն ընկերվարական մտայնութիւնը. մին երկնաւոր

արքայութիւն կը խոստանայ, միւսը երկրաւոր. երկուքն ալ բացարձակապաշտ են : Երկուքը իրարմէ սերած են, եւ իրար կարժեն :

Վերջապէս, այստեղ կիրարկուած մէթօար՝ գաղափարապաշտ (*idéaliste*) մէթօա մ'է : Այդ մէթօար գործածելու համար, պէտք է ընդունիլ թէ՛ աշխարհի կառավարութեան մէջ գաղափարները լայն բաժին մը ունին : Այս տեսութիւնը ընդունուած չէ ամենուն կողմէն . նոյն իսկ բաղմամբիւ հակառակողներ ունի : Այս հակառակ կարծիքներու նորագոյն տեսակը կուգո՞յ՝ արդիական ոգւոյն եւ ազատ կարգուսարքերուն կարգ մը հակառակորդներէն, որոնք կը յաւանդեն Քօնթէն, թէնէն եւ Ռընանէն քաղուած փաստեր գործածել ի պաշտպանութիւն կրօնական եւ քաղաքական բացարձակապետութեան : Ասոնք ձեռնարկած են վերահաստատելու բնապաշտական զպրօցը, զոր իբր նոր բան մը կը ներկայացնեն եւ որ իրենց կարծիքով վերջնական գատապարտութիւնն է քաղաքական գաղափարապաշտութեան (*):

Բայց այս բնապաշտութիւնը նոր չէ՛, որչափ որ անոր արդիականութեան երևոյթ մը արուի, Քօնթէն, թէնէն եւ Ռընանէն մէջբերուիներով : Անվընաս վերակենդանացումն է հին վարդապետութեան մը, որ հակառակ իր երկարատեւ տիրապետութեանը, տասնեւիններորդ դարուն վերջերը անդօր գանուեցաւ՝ Տէքարդեան ոգիին եւ բնական իրաւանց տեսականագէտներուն յարձակմանց դիմագրաւելու :

(*) Charles Maurras եւ Paul Bourget իրենց գրութիւններով կը քննարկեն ապացուցանել թէ «միապետական դրօշիւնը միակ ձեւն է որ կը համաձայնի գիտութեան նորագոյն հոգապաշտութիւններուն» :

Գալով Թէնիւն եւ Ռընանին, (չխօսելու համար Քօնթի վրայ, որուն համակարգական իմաստասիրութիւնը շատ չի պատշաճիր այսպիսի արագ եւ հատուածական բանավէճի մը, եւ որ պէտք չէ արդէն բառին կատարեալ իմաստովը քաղաքական իմաստասէրներու կարգը դասուիլ), ասոնք գլխաւորաբար քննադատեցին 18րդ դարուն եւ Ֆրանսական յեղափոխութեան սկար կողմը, որ էր՝ ի յաւաքագունե հայեցողութեան (la spéculation à priori) չափազանց գործածութիւնը, եւ գործնականին մէջ՝ փորձառական մէթոտին նկատմամբ արհամարհանքը: Եթէ ասոնք իրենց ուշադրութիւնը դարձրնէին՝ քաղաքականութեան նպատակները եւ անոր միջոցները որոշելու սահմանուած մէթոտներուն իրարմէ զանազանութեանը վրայ, զանազանութիւն՝ որու մասին վերը խօսեցանք (Գլուխ Է.), ըստ ամենայն հաւանականութեան պիտի չմերժէին որդեգրել այսպիսի բնարան մը. «փորձառութեան կը պատկանի միջոցներու ընտրութիւնը. իսկ վախճաններու, նպատակներու որոշողութիւնը բանականութեան գործն է»:

Շնորհիւ այս բնարանին, գաղափարապաշտ (idéaliste) մէթոտը՝ իր ճշմարիտ եւ միակ օրինաւոր ուղղութեան վրայ բերուած՝ ուրիշ բան չէ՛, եթէ ո՛չ բանականութեան ինքիւ վրայ հաւատքին հանգանակը, ճի՛շդ այն վայրկեանին երբ ինքզինք կը հարցաքննէ՝ ո՛չ թէ մարդ էակին վերջին խորհուրդին մասին, այլ սահմանափակ եւ իր բանաձեւումին մէջ լիովին յայտորոշուած խնդրի մը շուրջ. — «Թէ՛ ամբողջ տասնեւինն դարերու քրիստոնէական եւ իմաստասիրական զարգացողութենէ մը յետոյ, ռամկավարական երկրի մը քաղաքացին ի՞նչ կերպ կրնայ եւ պարտի ըմբռնել քաղաքական ընկերութեան ամենէն բարձր նպատակակէտները»:

Ե Ր Կ Ր Ո Ր Դ Մ Ա Ս

Ռ Ա Մ Կ Ա Վ Ա Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Ր Հ Ա Հ Ա Յ Ե Ա Ց Ք Ը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Այս երկրորդ մասին մեջ շօշափուած է առանձնապէս Ռամկավարութեան ճնշեսական աշխարհահայեացքը: Հակառակ մեր երկրի ճնշեսական զարգացման սակաւին յեճնեալ վիճակին, քանի որ մեր մեջ երեւան եկած են կարգ մը հայ «ընկերաբան»ներ եւ «գիտական-ընկերվարական»ներ որոնք կարտօրան մեր կեանքին մեջ պատուաստել ընկերվարական-համայնական սկզբունքները եւ ադանդաւոր մտայնութիւնը, եւ ընկերվարականութիւնը «կեանքի մեջ» իրագործելու ծիծաղելի յաւակնութեամբ կը դիմեն գործնական միջոցներու, եւ բուռն ու յախուռն քայլեր առնելու կը մղեն իրենց միամիտ հետեւողները, -- պարտք համարեցինք այստեղ մասնաւորապէս ծանրանալ ճնշեսական եւ ընկերային հարցին վրայ եւ ցոյց տալ բնաւ շօշափուած բուն ընթացքը, հետեւելով *Մօրիս Պուրկենի*, որուն ամենավերջին հեղինակութենէն քաղուած են այս յետագայ էջերը:

Ասկէ պիտի տեսնուի քե՛ս ճնշեսական եւ ընկերային պայտարի եռուզեռին մեջ ծնած ու մեծցած խորհողները ո՛րչափ չափաւոր, խոհեմ եւ համեստ են իրենց վարկածներուն, գուշակութիւններուն ու կարծիքներուն մեջ, բաղդասմամբ մեր արհամարհոտ եւ կոկոզավիզ սօցիալիստներուն, որոնք վերջնական, անսխալ վարդապետութիւնը, «գիտութեան վերջին խօսքը» մեզի բերած ըլլալու յաւակնութիւնը ունին:



Ա.

ԲՆԱՇՐՁՈՒՄԻՆ ԸՆԹԱՅԻՐ ԵՒ ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ

Արդի ընկերութիւնը բազմաբարդ միջավայր մ'է, բաղկացած վերջին աստիճան իրարմէ տարբեր եւ երբեմն իրերամարտ տարբերէ, որոնց ամէն մէկը իր հաշուոյն կը ջանայ ազրիլ եւ զօրանալ. այս կարգէն են գրամատիրական հսկայ հաստատութիւնները, երկրագործական, ճարտարարուեստական եւ վաճառականական փոքր ձեռնարկները, սպառողական ընկերութիւնները, գիւղացիական ընկերակցութիւնները, արհեստակցական միութիւնները (syndicats), պետութեան եւ համայնքներու ճարտարարուեստական ձեռնարկները, եւ այլն : Եթէ այս տարբերէն ունէ մէկը յաւակնէր միւսները իրեն հպատակեցնել եւ զանոնք իր մէջը հալեցնել, այդ վտանգուած տարբերուն միահաղոյն ընդդիմադրական ուժերուն պիտի բաղխէր : Ո՛չ բացարձակ անհատապաշտութիւնը (individualisme), ոչ լիակատար հաւաքայնականութիւնը (collectivisme) եւ ոչ ընդհանրացած գործակցականութիւնը (coopérativisme), մէկ խօսքով՝ ո՛չ մէկ արմատական սիստէմ կարող է իր պարզապաշտ (simpliste) լուծումը պարտադիր ընել այնքան բազմաբարդ կազմաւորութեան մը, որպիսին է ժամանակակից մարդկային ընկերութիւնը :

Մէկ կողմէ՝ դրամատիրականութեան (քափիթալիզմի) ընդարձակումը եւ միւս կողմէ՝ հաւաքական ուժերուն կազմակերպութիւնը . ահա՛ կրկու մեծ իւրողութիւններ որոնք ժամանակակից տնտեսական շարժումին իսկական նկարագիրը կը բնորոշեն : Քափիթալիզմը , կեդրոնացեալ ձեւերու միջոցաւ՝ որոնք իր զօրեղութիւնը կը բազմապատկեն , եւ վարկի կատարելագործեալ եղանակներով՝ որոնք նուազ ակնեղեւ կերպով անոր ծաւալման զարկ կուտան , արդիւնաբերութեան եւ շրջաբերութեան ամենամեծ մասը իր ազդեցութեան տակ առած է . իր գործունէութեան գերազոյն արտայայտութիւններն են՝ բաժնետիրական ընկերութիւնները , ֆառքիչները եւ քրջարները : Եւ սակայն քափիթալիզմին առջեւ իբրեւ խոչընդոտ , իբրեւ սահման կը կանգնին կարգ մը ուրիշ հաւաքական կազմեր , ինչպէս քաղաքային եւ գիւղական գործակցական ընկերութիւնները , գործաւորական միութիւնները , պետութիւնը եւ քաղաքապետութիւնները , որոնց տնտեսական կարելորութիւնը արագօրէն կը մեծնայ մերձաւորսպէս երեսուն տարիներէ ի վեր : Հետեւաբար , արդի ժողովուրդներուն մէջ կը գտնենք մէկ կողմէ՝ ճարտարարուեստական եւ ելեւմտական զօրաւոր ազնուապետութեան մը տարրերը , եւ միւս կողմէ՝ գիւղատնտեսական , ճարտարարուեստական եւ առեւտրական լայն ռամկավարութեան մը տարրերը , զորոնք պետութիւնը իր հակակշռով կը կանոնաւորէ եւ հաւասարակչութեան մէջ կը պահէ :

Եթէ մեր երեւակայութեամբ շարունակենք աստիճանական զարգացումը ընկերային կազմակերպութեան այն հիմնարկութիւններուն որոնք այսօր ամե-

նէն աւելի կենսունակ եւ յառաջդիմութեան ընդունակ կերեւին, պիտի հետեւցնենք թէ՛ ապալային, ընկերակցութիւնները հիմակուանէն ա՛լ աւելի կարեւոր դեր մ՛ունենալու սահմանուած են : Դրամատէրներու ընկերութիւնները եւ դաշնակցութիւնները, երկրագործական եւ ճարտարարուեստական մանր արդիւնագործողներու սեկտորները, զանազան գործակցական ընկերութիւնները, արտագրողական ձեռնարկութիւններ վարող գործակցական դաշնակցութիւնները, պետութեան եւ քաղաքապետութիւններու ուղղակի շահագործութիւնները (exploitations), գործատէրերու ընկերակցութիւնները եւ աշխատաւորական միութիւնները՝ ապագայ տնտեսական կազմակերպութեան հիմնական տարրերը պիտի ըլլան :

Վասն զի ընկերակցութիւնը ընկերակցութիւն կը բերէ : Արտադրողներու համաձայնութիւն մը տեղի կուտայ սպառողներու ընկերակցութեան մը . աշխատաւորական սէնտիքայի մը ճնշումը գործատէրերը կը մղէ նոյնպէս սէնտիքա կազմելու, կամ հակադարձաբար . երկրագործական սէնտիքան ծնունդ կուտայ փւղացիական սնտուկներու եւ փոխադարձ ապահովագրութեանց սնտուկին, գործակցական դրամատունը կ՛ըստեղծէ սպառողական ընկերութիւնը, եւ այլն : Միեւնոյն ճիւղին պատկանող խմբակցութիւնները, երբ քիչ մը բազմանան եւ զօրանան, որով ի վիճակի ըլլան դաշնակցելու, շուտով կը մօտենան իրարու : Տարբեր կարգի խմբակցութիւններու եւ դաշնակցութիւններու միջեւ յարաբերութիւններ կը հաստատուին . քաղաքային եւ գիւղացիական գործակցական ընկերակցութիւններու զանազան ճիւղերը պայմանա-

զբաճան (contractuel) բազմադիմի կապերով կը կապակցին իրարու, նոյնպէս քաղաքային գործակցականները՝ բանւորական սէնտիքաներուն, հողատիրական ընկերութիւններու եւ ուրիշ կարգի ընկերակցութեանց միջեւ, ինչպէս նաեւ գործատէրերու եւ բանւորներու միջեւ կը կազմուին կապակցութիւններ, եւ այսպէս շարունակաբար: Ասկէց կը հետեւի թէ քաղաքակիրթ ժողովուրդները կոչում ունին հետզհետէ ստանալու կազմակերպական աւելի կանոնաւոր ձեւեր, որոնց մէջ եւ որոնց շնորհիւ երկար ժամանակէ ի վեր տարադնած ընկերային տարրերը իրարու աւելի համերաշխ եւ լաւագոյն կերպով շարադասուած պիտի ըլլան:

Վերջապէս անխուսափելի է որ ազգերու միջեւ ալ զարգանան ներդաշնակութեան եւ համերաշխութեան միեւնոյն կապերը՝ գաղթաւորումի (colonisation) եւ փոխադրութեանց բարգաւաճումին հետ զուգընթացաբար: Այժմէն իսկ արտադրողներու ընկերակցութիւնները եւ բանւորական դաշնակցութիւնները սամանները կը գլեն կանցնին եւ միջազգային կերպարանք կը ստանան: Դիւանադիտական պայմանադրութիւնները, որոնք արդէն այնչափ յաճախաբար են մաքսերու, նաւարկութեան, արտածութիւնը քաջալերելու ձգտող պարզեւններու, չափերու եւ կշիռներու, երկաթուղիներու, նամակատուններու եւ հեռագրատուններու, առողջապահիկ միջոցներու, գաղթականութեան, նպաստի, յանցաւորներու փոխադարձ յանձնումի եւ այս կարգի ուրիշ ինչիւրներու մէջ, հետզհետէ պիտի ընդգրկեն դեռ շատ ուրիշ նպատակներ ալ որոնք միջազգային նկարագիր ու

նին , ինչպէս՝ օրինակի համար՝ աշխատաւորներու օրէնքով պաշտպանութիւնը , թրքսթները եւ ապահովագրութիւնները : Արդէն բանւորներու պաշտպանութեան ձգտող միջոցները մտած են գիւանագիտական համաձայնութեանց սահմանին մէջ , շնորհիւ Ֆրանքօ-իտալական Աշխատանքի Դաշնագրին եւ Պէտնի խորհրդածողովին : Եւ մինչդեռ մէկ կողմէ միջազգային կանոնները կը բազմապատկուին , միւս կողմէ ազգային-պետական օրէնագրութիւնները երթալով կը նոյնանան : Տարալոյս չկայ որ տնտեսական շահերու յարամերձութիւնը (*connexité*) աշխարհի վրայ առաջ պիտի բերէ քաղաքակրթութեան միութիւն մը , նրման այն միութեան զոր կրօնական դաւանանքներու յարեւմտանութիւնը կըրցած էր առաջ բերել Միջին դարու Եւրոպային մէջ :



Ռ Ա Մ Կ Ա Վ Ա Ր Ո Ի Թ Ե Ա Ն Դ Ե Ր Ը

Բ Ն Ա Շ Ր Ջ Ո Ի Մ Ի Ն Մ Է Ջ

Կեդրոնացումի եւ գաշնակցութեան ընդհանուր շարժումը պատմական մեծ հոսանք մ'է, զոր մարդկային ուեւէ կարողութիւն մը չկրնար կասեցնել կամ խոտորեցնել: Ի զուր մէկ քանի երկիրներու մէջ կը փորձեն փոքր ճարտարարուեստը զօրացնել, արհեստակցական պարտաւորիչ դասակցութիւնը (*corporation*, էսնաֆութիւն) վերանորոգելով. ի զուր կը փորձեն, օրէնսդրական միջոցներով արգելել ձեռնարկութիւններու մեծացումը, ֆառքեղներու եւ քրքրքներու կազմութիւնը, մեծ վաճառատուններու եւ գործակցական հաստատութիւններու բազմացումը. կեդրոնացումը կը շարունակուի, հազիւ քիչ մը դանդաղելով օրէնքներով, որոնցմէ ա՛յնքան դիւրին է խուսափել: Ի զուր տեսականագէտները իրենց պատճառարանողի ամբողջ պերճախօսութիւնը կը թափեն՝ ապացուցանելու համար աշխատութիւնը կանոնի տակ առնող օրէնքներուն վրասակարութիւնը եւ գիներու բնական շարժումին դէմ օրավարձը պաշտպանելու ձգտող բանւորական սէնտիքաներուն անկարողութիւնը: Այս ամենուն հակառակ՝ խորհրդարանները եւ բանւորական միութիւնները անդուլ կը յարատեւեն իրենց քաղաքականութեան մէջ եւ օրէ՛ օր կը սահմանեն՝ աշխատաւորին բնականոն կեանք մը ապահովելու յատուկ կանոններ:

Տնտեսական շարժման օրէնքներուն դէմ կռիւը նուազ ապարդիւն եւ նուազ մեասակար չէ քան մեքենակահանութեան (machinisme) դէմ պայքարը. պէտք է գիտնալ խոնարհիլ պոստական մեծ շրջափոխութեանց պատճառներու շղթայակցութեան (déterminisme) առջեւ, եւ փոխանակ ամուլ ընդդիմադրութիւններով ու ժաթափ ըլլալու՝ մեր գործերը համաձայնեցնել իրականութեան հետ:

Ասանկով մեր անկարողութիւնը խոստովանած կըլլանք կամ անգործութեան առաջնորդող ճակատագրական իմաստասիրութիւն մը ջատագոված: Ո՛չ երբեք. եւ ոչ ո՛ր պիտի յանձն առնէր մարդկային կամքին դերը ուրանալ, եւ ամենէն իրապաշտ իմաստասէրներն իսկ իրենց չեն ներեր ճակատագրապաշտ (fataliste) ըլլալ: Բարեշրջութեան բնական օրէնքները՝ իրենց նկարագրով՝ մեր կամքէն բոլորովին անկախ ըլլալու չափ անողոք չեն. մարդկային կամաւոր եւ գիտակից գործունէութիւնը միշտ որոշ չափով իր ներգործութիւնը կունեննայ իրերու ընթացքին վրայ, պայմանաւ որ հակառակ ուղղութեամբ չազդէ: Պատմական սրահանջները պարզապէս մեքենական ուժերու արգասիքը չեն. անոնք՝ արտադրութեան արուեստաբանական հիմունքներուն վրայ հանդիող տնտեսական անհրաժեշտութիւններէ միայն չեն ծնունդ առներ: Ընդհակառակը, բարեշրջութիւնը առաջ բերող սատարներու շարքին մէջ գաղափարները, աւանդութիւնները, սովորութիւնները եւ բարքերը, գիտակցութեան մէջ ծագում առած բարոյական ըմբռնումները՝ կը խաղան մեծ դեր մը, որուն կարևորութիւնը կաճի քաղաքակրթութեան զարգացման հետ զու-

զընթացաբար: Մարդուս համար ներելի է իսկաչ մը յղանալ, եւ այս խոէալը, անգամ մը որ մտքերու մէջ կը ծաւալի, կորովութեան աղբիւր մը կը գառնայ եւ ինքնին կը ձգտի իրականանալ: Այսօր ոչ ոք կ'առարկէ պատմական *déterminisme*ի այս չափաւորական մեկնաբանութեան դէմ:

Ներկայ ժամանակի մարդոց խոէալը՝ այլեւս չի կրնար հին ցնորապաշտներուն խոէալին պէս՝ միակ միտքի մը քմահաճ եւ անպայման յղացումէն կազմուիլ, ո՛րչափ ալ բարձր եղած ըլլայ այդ միտքը. այդ խոէալը փորձառական գիտութեանց մէթոտին ընտելացած մտքերու կողմէ ուրիշ կերպ չի կրնար ըմբռնուիլ՝ բայց միայն պատմական զարգացման իբր յառաջածագը. անիկա զանչաղօրէն կը կազմաւորուի մարդկութեան ծոցին մէջ, եւ դարերու ընթացքին՝ կը կերպարանափոխուի պատշաճելու համար ընկերային տարբեր վիճակներու: Այսպէս հին ժամանակներու հանրապետութեանց խոէալն էր՝ ոստանին (քաղաք, պետութիւն, *cité*) մեծագօրութիւնը, իր անգամներուն գերութեան վրայ հիմնուած կատարեալ համասեռութեան շնորհիւ. մինչդեռ արդի ժողովուրդներուն մէջ աստիճանաբար կազմուող խոէալը՝ ուսման կալարական նկարագիր ունի: Այդ խոէալը չի կայանար բացարձակ սկզբունքի մը մէջ, այնչափ հետու իրականութեանէն որ անկարելի ըլլար զայն մեր գործնական ճիգերուն նպատակակէտը դարձնել. այլ կը կայանայ գո՛նէ արդարութեան գաղափարի մը մէջ որ կրնայ իրագործուիլ ժողովուրդին մեծամասնութեան բարոյական եւ նիւթական զարգացման շնորհիւ:

Այսօր, ոչ միայն ժողովրդային դասակարգերուն մէջ, այլ ևև խորհողներու շարքին ևւ ընկերութեան միւս դասակարգերու մէկ մասին մէջ, — որուն միտքը տակաւ խուլ յեղաշրջու՞ մը կը կրէ — սկսած է ծաւալ գտնել զգացում մը, ևւ այս՝ այն գիտակցութիւնն է թէ՛ հակառակ անուրանալի յառաջդիմութեանց, հասարակ աշխատաւոր դասակարգը զեռ հազիւ ամենաչնչին մասով մը օգտուած է դարուս նիւթական ևւ մտաւոր տիրացումներէն. թէ՛ հակառակ զարմանահարազ գիւտերուն, որոնք բնական զօրութիւնները ի սպաս դրին մարդկութեան, ո՛չ աշխատութիւնը թեթեւցած է ևւ ո՛չ օրավարձը աւելցած՝ մարդկային ճիգին արդիւնաւէտութեանը բազմանալուն համեմատութեամբ : Ըսել չենք ուզեր թէ աշխատաւոր դասակարգը բոլորովին անմասն մնացած է յառաջդիմութեանէ ևւ բնաշրջումի ընթացքին ընծայած առաւելութիւններէն : Ընդհակառակը, արտակարգ երեւոյթով մը, որ պատմական ուրիշ շրջաններու մէջ ալ ի յայտ եկած է, ընկերային զանազան խաւերու վրայ տեսնուած գիտակցութեան այս զարթնումը ո՛չ թէ ժողովուրդին մեծ զանգուածին յարաճուն աղքատացման արդիւնքն է, այլ ընդհակառակը անոր նիւթական վիճակին որոշ չափով բարւոքումին, անոր բարոյական ևւ մտաւոր դաստիարակութեան զարգացմանը ևւ ընդհանրապէս՝ արդի ընկերութեանց սովորական վիճակին հետեւանքն է : Ասիկա թէև երբևին տարտամ, բայց ոչինչ նուազ ճնշող բաղձանք մ'է լաւագոյն վիճակի մը, որուն մէջ բովանդակ մարդկութիւնը վայելէր աւելի ապահովութիւն, բարօրութիւն ևւ զարգացումի պատեհութիւններ :

Հանրային կարծիքը, որ երբեմն իր անտարբե-
րութեամբը կը փայլէր հանդէպ դրամագլուխի եւ
աշխատութեան պայքարներուն, հիմա երթալով ա-
ւելի կը շահագրգռուի անոնցմով, եւ բանթող աշխա-
տաւորները այժմ աւելի յաճախ եւ աւելի վստահու-
թեամբ կը դիմեն անոր, զայն իրենց դատին շահե-
լու : Մամուլը, համալսարանները, հանրային հաւա-
քոյթները երթալով աւելի մեծ տեղ կուտան ընկե-
րային խնդիրներուն, որոնք կը թուին այսուհետեւ
դերազանցել միւս բոլոր խնդիրները : Քաղաքական
տնտեսութիւնն ալ եւս չէ վերացական գիտութիւն
մը, ինչպէս էր երբեմն, բոլորովին գրաւուած ան-
յեղլի բնական օրէնքներու հայեցողութեամբ եւ մի
միայն աւելի առատ արդիւնաբերութիւն եւ աւելի մեծ
շահ արտադրելու յատուկ եղանակներու տարամերժ
հետազոտութեամբ . ընդհակառակը՝ ի ներկայիս առա-
ւելապէս կը մտահոգուի արտադրութեանց բաշխումին
վերաբերեալ հարցերով . եւ եթէ տակաւին արտադ-
րութեանց զարգացման հարցերով ալ փոքր ի շատէ
կը շահագրգռուի, գլխաւոր պատճառն այն է որ ա-
սոնք մեծամասնութեան նիւթական վիճակին վրայ
ունին իրենց ներգործութիւնը : Մարդկայնութեան
աւելի լայն շունչ մը կը թափանցէ հոգիներուն մէջ :
Այնպիսի տառապանքներ որոնք երբեմն անխուսափե-
լի չարիք կը նկատուէին եւ ըստ այնմ համակեր-
պութեամբ կը տարուէին, մեր ժամանակի մարդե-
րուն աչքին անհանդուրժելի կերևան : Չքաւորութիւ-
նը եւ անկէ առաջ եկած մոլութիւնները, վստառողջ
բնակարանները եւ մաշեցնող աշխատանքը, օրավար-
ձերու անբաւականութիւնը, մանաւանդ աշխատա-

նոցէ զուրս արուած զործերու մէջ որոնք ամենէն աւելի են թակալայ են անխիղճ շահագործումի, — այս ամէն թշուառութիւնները կը կազմեն ամօթալի վէրք մը, զոր պէտք է բուծել ամէն գնով, եւ ո՛չ ոք կը մտարեքէ այսօր կրկնել աղատականութեան իմաստաւ սէրին՝ Հէրպէրթ Սքէնսէրի խօսքերը, թէ «Անկարողներուն աղքատութիւնը, անխոհմտներուն անձկութիւնը, ծոյլերուն կարօտութիւնը, մէկ խօսքով՝ ակարներուն զօրաւորներէն ջախջախումը, որ մարդերու այնքան ստուար թիւ մը ստորնութեան եւ թշուառութեան մէջ կը ձգէ, անսահման եւ նախատեսող բարեգործութեան մը դատակնիքն են» (*)

Ընկերային խնդիրները միայն բարոյական տեսակէտով չէ՛ որ ամենուն ուշադրութիւնը կը հրաւիրեն իրենց վրայ. նոյն իսկ անոնք՝ որոնք զգացումի նկատումներէ չեն առաջնորդուիր, չեն կրնար անտարբեր մնալ սա իրողութեան հանդէպ որ, մտլութիւնը եւ թշուառութիւնը՝ քաղաքակիրթ կեդրոններու մէջ՝ ֆիզիքական եւ բարոյական վարակումի վաւարան մը կը դառնան եւ հանրային անգործութեան գէմ մնայուն վտանգ մը : Եթէ եղբայրական զգացումը չըլլար, ընկերային դժուարութիւններու եւ միջադէպերու պատահականութիւնը ինքնին բաւական պիտի ըլլար ցնցելու ամենէն անտարբեր հողիներն անգամ եւ անոնց աչքին կասկածելի դարձնելու՝ թշուառութեան լաւատես իմաստասիրութիւնը :

(*) Հ. Սթեյնը, «Անհատ Պետրքեան դեմ»

Ուրեմն մարդկային յարաբերութեանց օրէնքներուն աւելի ճշգրիտ ուսումնասիրութիւն մը կը զուգընթանայ գլխաւորութեան եւ սիրոյ ամենամաքուր զգացումներուն հետ՝ նոր սերունդներուն վճռել տալու որ անկեալներու եւ տկարներու վերականգնումին համար աշխատին, ո՛չ այնչափ անհատական բարեգործութեան բազմապատիկ միջոցներովը, որչափ՝ չարիքին բուն պատճառները բառնալու ձգտող ընդհանուր բարենորոգումներով :

Հանրային խղճին այս նրբացումը եւ ընկերային ինդիւրներու այս յարաձուն մտանդութիւնը բարոյական յայտնի զարգացումի մը ազդանշանն է : Համայնասիրութիւնը, «փնթակի համերաշխութիւնը», այսինքն այն զգացումը թէ անհատը կը պատկանի հասարակութեան մը, որուն հանդէպ աւելի ընդարձակ պարտաւորութիւններ ունի քան համայնքին պաշտպանութեան մէջ իր բաժինն ունենալու տարրական պարտքը, այս վե՛ր զգացումը որ ա՛յնքան զօրաւոր էր ՚ի՛ն ընկերութիւններուն մէջ եւ որ ա՛յնքան երկար ժամանակ ընդարմացած մնաց արդիական ընկերութեանց մէջ, այսօր արդէն սկսած է վերազարթնուլ : Մարդիկ կը սկսին ըմբռնել թէ՛ անհատը չէ՛ այն ինքնավար, անկախ կեդրոնը որ իր եսասիրութեամբը եւ հպարտութեամբը կենթադրէ ըլլալ իր բարօրութիւնը, իր գլխութիւնը, իր մտաւորական եւ նիւթական վայելքները, իր խորհելակերպն իսկ կը պարտի զինք շրջապատող քաղաքակրթութեան, նախորդ սերունդներու երկարաձիգ շարքին կտակած ժառանգութիւններուն, այն ընկերային կարգուսարքերուն որ իրեն կապահովեն իր ստաց-

ուածներուն վայելումը , մէկ խօսքով՝ իր նախորդներուն եւ իր ժամանակակիցներուն աշխատութեանը : Մինչդեռ ինք ամենաաննշան չափով միայն մասնակցած է այն քաղաքակրթութեան գործին որուն բարիքները կը վայելէ . հետեւաբար պէտք չէ ինքզինք այլեւս ամէն պարտականութենէ զերծ համարի , երբ բաւականացած է միայն իր գաշինքը կատարել՝ իրեն մատուցուած ծառայութիւնները ճշգրտօրէն փոխարինելով :

Մարդ այս զգացումներով պէտք է ապօրոյս , որ պէս զի անարտունջ կարենայ յանձն առնել այն զուհողութիւնները որոնք ընկերային բարենորոգման ամէն քաղաքականութեան անխուսափելի մէկ հետեւութիւնն են : Թշուաութեան հանդէպ կարեկցող , սրտցաւ մէկու մը համար , օրինադրուած սահմանափակումները , հակակշիռները եւ հարկային պարտադրութիւնները թեթեւ եւ տանելի կերեւան , բաւական է որ անոնց նպատակն ըլլայ ապրուստի եւ ազատութեան գոնէ նուազագոյն չափ մը հայթայթել ընդհանրութեան : Մարդ յօժարակամ կը նշուեն՝ ընկերային կանխատեսութեան կողմէ իրեն սահմանուած պարտականութեանց եւ յանձնառութեանց բաժինը , երբ կը մբռնէ թէ՛ ասոնք մարդոց ստուար զանգուածին համար փրկարար միջոցներ են : Աւելի նպաստաւորեալներուն վրայ զրուած տուրքերը պէտք է նկատել ո՛չ թէ ընկերութիւնը տկարացնող անիրաւ հարկաւ կահանութիւն մը , այլ միջոց մը՝ պահպանելու համար անհասները անիրաւ անկումէ մը , որ կը խորտակէ կորովութիւնները եւ կապականէ ընկերային կազմաւորութեան մէկ մասը :

Ուրեմն կայ իտէալ մը, — մարդկային անձնաւորութեան իւրաքանչիւր անհատի մէջ զարգացման իտէալը, — որ պիտութեան եւ ռամկավարական դադարփաթէն հետ զուգընթացաբար ծաւալած ու բարգաւաճած է Ժողովրդային գիտակցութեան մէջ. իտէալ մը՝ որ կատարելապէս համաձայն է թէ՛ գիտութեան եւ թէ՛ ռամկավարական սկզբունքներուն, ըստ որում համերաշխութիւնը միանգամայն թէ՛ գիտական եւ թէ՛ ռամկավարական դադարփար մ'է. իտէալ մը՝ սերտօրէն կապուած ընկերային յառաջխաղացութեան ամբողջ ընթացքին հետ, եւ հետեւաբար համաձայն՝ պատմական զարգացման օրէնքներուն :

Բայց բաւական չէ՛ ռամկավարական իտէալին այս ընդհանուր ըմբռնումը պատմական մէթոտի վերջին էնթարկել : Այս յղացումը բնականաբար տարտամ եւ վերացական կը մնայ, եթէ անոր չընկերանայ կազմակերպութեան ծրագիր մը, որուն զլիաւոր գծերն ընդհակառակը որոշապէս ու բուազբուած պէտք է ըլլան : Ահա այս կարեւոր ու գծուարին կէտին — այլ խօսքով՝ միջոցներու ընտրութեան — մէ՛ջն է որ մասնաւորապէս կարեւոր է կապուած մնալ քննական կամ փորձառական մէթոտին : Իրապաշտ իմաստասէրը կամ պետական մարդը, նոյն խկ երբ մարդկային արդի մտածողութեան հողին կազմող բարոյական նկատումներէ ներշնչուած ըլլայ, իր ծրագիրը կը սահմանափակէ կարելի եւ իրագործելի բարենորոգումներու մէջ, եւ իր քաղաքականութենէն զուրս կը վտարէ ամէն նպատակ որ զուտ զաղախարական (վերացական) է եւ հետեւաբար զուրկ գործնական հասողութենէ (հնարաւորութենէ) :

Անա այս էական կէտին վրայ է որ կը բնորոշուի մէթոտնեբու տարբերութիւնը : Իրապաշտ պետական մարդը՝ չի կրնար ինքիւր երազին մէջ պարփակուած իմաստասէրին նման տրամաբանել եւ ըսել . «Ըստ ուրում անհաւասարութիւնը չարիք մ'է, ուրմնն պէտք է ջնջել սեփականատիրութիւնը՝ որ անհաւասարութեան նուիրագործումն է » : Բարոյական սկզբունքները իբրեւ մեկնակէտ ընդունող մակաձական մէթոտին (*méthode déductive*) այսպիսի միամիտ կիրարկութիւնները իր աչքին կերեւան իբրեւ ժամանակաշրջութիւն (*anachronisme*), իբրեւ հինցած տրամաբանելու եղանակ մը, որ անհամաձայն է դարուս դրական գաղափարներուն եւ քննական ոգիին : Փոխանակ կամահաճօրէն՝ դուս վերացական հիմերու վրայ հաստատուելու ընկերային գրութիւն մը, կըստուզէ թէ այդ գրութիւնը կրնա՞յ իրագործուիլ եւ թէ անոր սերմերը արդէն գոյութիւն ունի՞ն եւ զարգանալու ընդունա՞կ են մարդկային ընկերութեան մէջ : Կը լուցնէ իր անհամբերութիւնները եւ ի հաշիւ կառնէ աւանդութիւնները, զանազան շահերը, մինչեւ իսկ միջավայրին մէջ արմատացած նախապաշարումները, վասն զի ասոնք ուժեր են զորս ընկերային քաղաքականութիւնը չի կրնար անդիտանալ կամ զանց առնել : Շուտով կը համոզուի թէ՛ նոյն իսկ մասնակի եւ համեստ ջարենորդում մը, ինչպէս օրինակի համար՝ օրական աշխատութեան ժամերուն օրէնքով սահմանափակումը, զործադրել կարենալու համար՝ երկարատեւ նախապատրաստութիւնն եւ հազարումէկ զգուշութիւններ հարկաւոր են . այսպէս փորձով կը կշտադատէ թէ ի՞նչ արժէք ունին այն խոշոր ծրագիրները

որ կը ձգտին մարդկային ընկերութիւնը վեր ի վայր յեղաշրջել :

Տարակոյս չկայ որ, ապրելու իրաւունքը ընկերային արդարութեան ամենէն հրամայողական պահանջներէն մին է: Եւ այս պատճառով է որ, *A. Menger* ի եւ ուրիշներու ընկերվարական ամենավերջին գրութիւնները կը հռչակեն թէ ապրելու իրաւունքը իրաւաբանական ընկերվարութեան (*) էական սկզբունքն է: Բայց ի՞նչ եզրակացութեան կը յանգին այս նոր «իրաւաբանական» զաղափարապաշտութեան հանձարեղ շարադասութիւնները եւ տրամաբանական ընդլայնումները: Պարզապէս համայնական դրութեան մը, որուն մէջ իւրաքանչիւր համայնք կը վերածուի բանտի մը. ա՛յս է, ինչպէս կերեւի, ըստ ընկերվարականներու, նոր ժամանակներու իտէալը: Ընդհակառակը, կարելիապաշտ (*possibiliste*) կամ դրական իմաստասէրը, ինքն ալ ուրիշներուն չափ ապրելու իրաւունքին ջատագով եւ զայն երաշխաւորուած տեսնելու հետամուտ հանդիսանալով հանդերձ, արդի ըն-

(*) . Իրաւաբանական ընկերվարութիւն (*le socialisme juridique*) անունը չի ծառայեր բնորոշելու ընկերվարութեան առանձին ձեւ մը՝ հիմնուած արդարութեան գաղափարին վրայ, հակադրութեամբ Մարքսիս նիւթապատեան, կամ դասասանական միջոցներով իրագործուելիք ընկերվարութիւն մը. այլ իրենց սեփական ընկերվարութիւնն ունենալու սնափառութենէն բնուած մէկ քանի իրաւագէտներու հնարած մէկ բառն է՝ բնորոշելու համար բարեկարգիչ ընկերվարութիւն մը, որ կը փորձէ կողմնակի կերպով իրականանալ, ի գործադրութեան եղող օրէնքին խեղաթիւրումովը:

կերութեան շրջագիծէն դուրս չեններ . իր թելագրած գործնական միջոցները հեռուները չեն երթար, այլ կը կայանան, օրինակի համար, բանւորական կեանքի վտանգներուն դէմ պարտաւորիչ ապահովագրութեան, ճարտարարուեստական բէժիմի զեղծումներուն դէմ աշխատաւորներուն օրինական պաշտպանութեան եւ անկարողներուն նպաստարաշխութեան սիստէմներուն ընդհանրացմանը մէջ :

Ասո՛նք են գործելակերպի տարբերութիւնները : Տրամաբանողը մարդկութեան բարօրութեանը համար հեռաւոր ոստան մը կը կառուցանէ, մինչդեռ իրապաշտ բարենորոգիչը կը ջանայ ընկերային չարիքներուն դէմ կռուիլ ամենէն արդիւնարար միջոցներով : Փոխանակ վանականի ամուլ գաղափարապաշտութեան մը մէջ փակուած ամրացած մնալու, իր միտքը կը բանայ արտաքին աշխարհին եւ կը խառնուի կեանքին մէջ, ո՛չ այնչափ մեծ գործունէութիւն ունենալու, հրաշք գործելու տենչով, որչափ կեցիկանի գործունէութեան ցանկութեամբ, իր երազը իրականութեան հետ շփման մէջ դնելով, առանց դադրելու իր հոգիին ալքերուն մէջ սնուցանելէ խտելին պաշտումը եւ մարդկային յոռաջդիմութեան անպարտելի հաւատքը :

Արդարեւ, ինչո՞ւ յուսահատինք ապագայէն, քանի որ անցեալը արդէն մեզի կընծայէ՝ աշխատաւոր դասակարգերու վիճակին բարելաւումի այնքան օրինակներ, մեքենականութեան մուտքէն եւ խոշոր արտադրութեան սկզբնաւորութենէն ի վեր : Բաւակա՛ն է մտքով վերադառնալ դէպ ի մտայլ ժամանակաշրջանը անգործութեան (*chomage*) եւ թշուառութեան : Բաւական է միտք բերել Ֆրանսայի եւ Անգլիոյ մէջ բաց-

ուած հին քննութիւնները , որոնք ի վեր հանեցին
կնոջ եւ մանուկներու անպատկառ շահագործումի այն-
քան տխուր իրողութիւններ՝ գործարանական կեանքի
վաղորդայնին , ու այն ատեն սիրայօժար պիտի խոս-
տովանինք թէ , եթէ չարիքը անհետացած չէ , գո՛նէ
բաւականաչափ ամոքած է , եւ թէ՛ անծանօթ ուժեր
պարունակող նոր տարրերու ներգործութեամբ այլայ-
լած ընկերային վիճակը վերանորոգելու համար թափ-
ուած ճիգերը ամուլ չե՛ն մնացած : Այդ ճիգերը կարժէ
ինամով վերլուծել , վերահաս ըլլալու համար թէ ա-
նոնցմէ զեռ ինչե՛ր պիտի կրնանք յուսալ ապագա-
յին մէջ :

Ռ Ա Մ Կ Ա Վ Ա Ր Ո Ւ Թ Ե Ա Ն
 Ը Ն Կ Ե Ր Ա Ց Ի Ն Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Ը



Երբ մարդ կը ջանայ ապագան գուշակել ներկա-
 յին տուիքներէն (*données*), չսխալելու լաւագոյն
 կերպն է կարելի եղածին չափ շատ վերապահումներ
 դնել : Նոյն իսկ երկար հետազոտութիւններու ար-
 դիւնք եղող եւ շատ խոհեմ երևցող ներածութիւն
 (*induction*) մը կրնայ իբօք սնտախ խիզախաբանու-
 թիւն մը եղած ըլլալ եւ հերքուիլ ապագայ իրողու-
 թիւններով :

Այսպէս, տնտեսական բարեշրջումի ընթացքին
 ուսումնասիրութեանը մէջ՝ ապագայի մասին մեր
 խիզախ գուշակութիւնները, շատ անգամ ամենէն
 յառաջդիմական երկիրներու մէջ զիտուած կարգ մը
 երեւոյթներ ընդլայնելով եւ ընդհանրացնելով ստաց-
 ուած հետեւութիւններ են : Պէտք է ընդունիլ սա-
 կայն որ՝ բոլոր ազգերը անվրէպ միեւնոյն ուղղու-
 թեամբ զարգանալու կոչուած չեն . նոյն իսկ արեւ-
 մտեան քաղաքակրթութեամբ զարգացած երկիրներուն
 մէջ, կլիմայի, երկրի, ցեղի եւ պատմական կազ-
 մութեան պայմանները ա՛յնչափ տարբեր են, որ ա-
 նոնց բնաշրջումին ընթացքը կատարելապէս յար եւ

նման չկրնար ըլլալ : Այսօր իսկ , Միացեալ Նահանգները , որոնք քրքրսրներու (trust) նախասիրական երկիրն են , գործակցութեան սիոգէմին (coopération) համար նպաստաւոր կուտան մը չեն ընծայեր . հողագործական ընկերակցութիւնները , որոնք ա՛յնչափ բարգաւաճ են Գերմանիոյ մէջ , չեն կրցած Անգլիոյ մէջ արմատանալ . այս վերջին երկրին մէջ այնչափ յառաջացած քաղաքապետական ընկերվարութիւնը (le socialisme municipal) հազիւ սկսած է ծայր տալ Ֆրանսայի եւ Պելճիքայի մէջ : Այս օրինակները կարելի էր բազմապատկել . ասոնցմով կապացուցուի թէ ազգայ ընկերութեան տնտեսական կազմը՝ ամէն տեղ միեւնոյն կերպով չի յառաջանալով , կրնայ մէկ քանի երկիրներու մէջ զուրկ մնալ կարգ մը գործօններէ (organes) , անոնց բարեշրջումին յամբօրէն առաջ գալուստ կամ նոյն իսկ երբեք տեղի չունենալուն պատճառով :

Ասկէ զատ , ամէն երկիրներու մէջ պէտք է ի հաշիւ առնել նաեւ ընդհատումի կամ յետադիմութեան հաւանական պատճառները , որպիսիք են , յարձակողական եւ աշխարհակալական ոգիին վերադարձը , յեղափոխական ոգիին սուսելակազուցութիւնը՝ կազմակերպական ոգիին վրայ , ցեղային եւ դասակարգային առեկտութիւնները , հանրային ուշադրութիւնը անտեսական հարցերէ հեռու պահելու եւ բոլոր գործունէութիւնները իրենցմով զբաղեցնելու բնոյթ ունեցող կրօնական պայքարները , եւ վերջապէս ձախորդ եւ հապճեպ բարենորոգումները՝ որոնք արդիւնաբերութեան ազբիւրներուն իսկ կը մնասեն , կործանելով հանրային ելլումուտքը եւ հակազգեցութիւն

առաջ բերելով ոչ միայն փոքր սեփականատիրութեան շրջանակին մէջ, այլ եւ ժողովրդային դասակարգւելուն մէջ :

Վերջապէս, պատմական զարգացման ընթացքը կրնայ խորապէս այլալիլ չնախատեսուած կամ հազիւ ընդհնմարուած ազդակներու ներդրածութեամբ: Գիտութիւնը տակաւին պիտի կերպարանափոխէ բնական ուժերու շահագործման կերպերը՝ ճարտարագործութեան (industrie) մէջ. թերեւս վերիվայր պիտի յեղաշրջէ փոխադրութեան կերպերը եւ մտքերու հաղորդակցութեան միջոցները. ընդունակ է յեղափոխելու երկրագործութիւնը եւ անհաւատալի կերպով բազմակերպելու անդատութեան միջոցները: Այսօրու ընդ իսկ կընդհնմարենք՝ բնական զօրութեան մեծ հեռաւորութիւններու փոխանցումին կարեւորութիւնը. մտքով կը կանխենք այն ժամանակը՝ երբ հողագունտիս բոլոր բնակիչի երկիրները պիտի ենթարկուին երկրագործական եւ ճարտարարուեստական ընդարձակ շահագործումի. ըսյց դժուարու կրնանք գուշակել՝ այսպէս ընդարձակուած աշխարհին մէջ՝ արտադրութեան եւ շրջարեքութեան առնելիք շարժումը, եւ այն ամէն կարգի անդրադարձութիւնները զոր պիտութեան եւ անտեսութեան այս յառաջդիմութիւնները պիտի կըրնան ունենալ ընկերութեան մէջ ապրող մարդուն վիճակին վրայ: Այս կերպարանափոխութեանց հետեւանքով՝ այսօրուան մեզ զբաղեցնող հարցերը կրնան այն ստեն տեղափոխուած եւ այլափոխուած ըլլալ եւ մեր այժմեան գուշակութիւններու սահմանէն անդին փոխադրուած:

Սակայն եւ այնպէս, հաւանական չերեւար որ

հետզհետէ երեւան եկող նոր տարրերը կամ ազգակները կարողանան իրերու բնական ընթացքը յայտնապէս կասեցնել եւ ընդ երկար յապաղեցնել քաղաքակիրթ ժողովուրդներու զուգընթաց կամ իրերայաջորդ յառաջխաղացութիւնը դէպի քափիթալիզմի, հաւաքական կազմակերպութեան եւ սամկավարութեան բաղադրեալ վիճակ մը, որուն մէջ աշխատաւոր դասակարգերը հաւասարապէս պիտի բարգաւաճին իրենց հզօրութեամբը, հարստութեամբը եւ զարգացողութեամբը :

Անհատական սեփականութիւնը եւ օրավարձի դրութիւնը (le salariat) պիտի մնան առկաւին : Բայց ըսել չենք ուզեր թէ յաւիտենական կարգեր են անոնք, ըստ որում յայտնի է թէ այդպիսի հաւաստում մը՝ առ հասարակ մարդկային հիմնարկութիւններու պատմութեամբը պիտի հերքուէր : Այժմէն պիտի կրնանք կանխատեսել թէ հաւաքական սեփականութեան սահմանը պիտի ընդարձակուի, եւ թէ անհատական սեփականութիւնը, կարգ մը ուժերու ազդեցութեան տակ՝ որպիսիք են հարկային եւ բանւորսպաշտպան օրէնքները՝ բացարձակ իրաւունքի իր բնաւորութիւնը պիտի կորսնցնէ՝ հաւաքական իրաւունքի հետ զուգորդուելով : Կրնանք կանխատեսել նաեւ որ օրավարձի դրութիւնն ալ պիտի բարեփոխուի աշխատաւոր դասակարգերու աստիճանաւոր ազադատագրումովը : Բայց ժամանակակից իրողութիւններու ամենաուշադիր ուսումնասիրութիւն մը՝ այսօրուան օրս մեզի չի թոյլատրեր կանխաձայնել անհատական սեփականութեան ամբողջովին վերածումը հաւաքական սեփականութեան, կամ արդիւնաբերու-

թեան եւ փոխանակութիւններու արդի ձեւերուն արմատական կերպարանափոխութիւնը : Մենք՝ մարդկային ճակատագրին անգիտակից մշակներո՛ իրաւունք չունինք ապագան պարուրող ծածկոցը ա՛լ աւելի վեր բարձրացնելու, առանց անհաւատարիմ գտնուելու պատմական ներածութեան մէթոտին . անկէ անդին ամէն ինչ ենթադրութիւն է՝ զուրկ փորձառական ապացոյցէ, եւ հետեւաբար գիտական արժէքէ :

Այստեղ ներկայացուած առարկայական (objectif) հայեացքը՝ դիտենք թէ՛ ոմանց աչքին խիստ չափաւոր պիտի երևայ եւ ուրիշներու՝ չափազանց յառաջադէմ : Բայց եղելութիւնները ունէ կուսակցութեան մը կամքին համեմատ չեն ընթանար, այլ հակընդդէմ ուղղութեամբ ազդող բազմապատիկ զօրութիւններու յառաջածագն են, եւ պատմութեան ընթացքը յառաջադէմ քաղաքակրթութեամբ օժտեալ երկիրներու մէջ՝ մշտնջենական իրաւախոհութիւն մ'է պահպանողական աւանդապաշտութեան եւ բանապաշտ վերանորոգչութեան միջեւ :

Մեր ընդնշմարելի փորձած ընկերային վիճակը անշուշտ վերջին կատարելութիւն մը պիտի չըլլայ, որմէ անդին ունէ գործ չմնար կատարելու . անտարակոյս մարդկութիւնը երբեք պիտի չի հասնի այգպիտի վերջին հանդուանի մը, տինգերական բարօրութեան մնայուն վիճակի մը : Բայց այս միթէ պատճառ մ'է հրաժարելու կատարելատիպին, իսկալին պաշտամունքէն : Այդպիսի ձեռնթափութեան մը վիսաւր անհաշուելի պիտի ըլլար : Արդարութեան կատարելատիպ ոստանի մը տեսիլքն է՝ որ յեղափոխական

կուսակցութեան մարտիկներուն մէջ կը հրահրէ պայքարի եռանդը եւ կիրքը . անիկա՛ է որ ամենէն խոնարհները կը դատնպնէ գործադուլի թշուառութեանց միջոցին եւ կը ներշնչէ ամենէն վսեմ անձնուիրութիւնները : Այդ տեսիլքին մէ՛ջն է որ կը գտնուի կորոմներու ամենէն արգասաբեր աղբիւրը, եւ եթէ այդ աղբիւրը ցամքէր օր մը, ա՛լ վերջը եկած պէտք էր համարիլ աշխատաւոր դասակարգի զարգացման գործին, որ ամէն բանէ առաջ կախում ունի իր սեւփական ճիգերէն : Բայց ինչո՞ւ ենթադրել թէ աշխատաւորներու այդ եռանդը պիտի մարէր, այն օրը երբ անոնց փորձատութեամբ հասունցած միտքը անդրադառնար թէ հաւաքայնականութեան խտէպը (*l'idéal collectiviste*) ցնորք մ'է, եւ սորվէր իր յոյսերը չափել իրականութեանց վրայ : Միթէ մտքի այդ հասունցած վիճակը չե՞ն ներկայացներ արդէն՝ այն բազմաթիւ աշխատաւորները՝ որոնք արհեստակցական միութիւններու, գործակցական եւ փոխադարձական (*mutualités*) ընկերակցութիւններու կազմակերպիչ եւ ղեկավարիչ անդամներն են այսօր . միթէ այս կարգի աշխատաւորները՝ ընաչըջումի դրական պայմաններուն կատարելապէս վերահաս ըլլալուն պատճառաւ՝ նուա՞ղ գործունէութիւն եւ անձնուիրութիւն ցոյց կուտան իրենց դասակարգին շահերուն հանդէպ : Ո՛չ, իրականութեանց գիտակցութիւնը չի դանդաղեցներ իրենց եռանդը, որովհետեւ գիտեն թէ իրենց նախաձեռած շարժումին իսկական նպատակը, որ է աշխատաւորական կազմակերպութեանց շնորհիւ օրավարձի դրութեան աստիճանաւոր բարելաւումը, ինքնին ի տէպ մ'է որուն կարծէ հետամուտ ըլլալ եւ որուն համար արժան է թափել ամէն ճիգ եւ զոհողութիւն :

Հակադարձաբար, հասկանալի է չափաւոր եւ պահպանողական մտքերուն վրդովումը՝ ընկերային կազմի այսքան արագ կերպարանափոխութեանց, արդի ընկերութեան յուզումներուն, ազդեցութիւններու տեղափոխութեանց եւ ժողովրդային դասակարգերումէջ ծնած նոր գաղափարներուն եւ զգացումներուն հանդէպ : Արդարեւ, արդի ընկերութեանց փոթորկայօյլ շարժումները՝ հինաւուրց ընկերութեան նուիրապետական անշարժականութեան հակապատկերը կը կազմեն : Հինէն դէպ ի նորը վտանգաւոր անցք մ'է այս, ուր մարդ ենթակայ է կորսնցնելու իր երբեմնի յատկութիւնները, առանց տակաւին ստացած ըլլալու այն յատկութիւնները որոնց պէտք ունի ընկերային նոր վիճակին յարմարուելու համար : Բայց պէտք է գիտնալ որ, «Ամէն ընկերութիւն իր մէջ կը պահէ թաքուն ուժեր՝ որոնք կը վրիպին դիտողին ուշադրութենէն, չարիքին դէմ հակազդեցութեան կարողութիւններ՝ որոնք տկարացումի երեւոյթին տակ կը բարգաւաճին, նոր սերմեր՝ որոնց մէջ կը նիրհեն անձանօթ զօրութիւններ» (*) : Ինքնաբերաբար կը ծնին նոր առաքինութիւններ, որոնք կը հակազդեն ընկերային նոր կազմակերպութեան սպառնացող վրտանգներուն դէմ . ընկերութիւնը՝ իրբեւ կազմաւորութիւն մը (*organisme*)՝ ունի իր պաշտպանողական միջոցները :


Ապագայի ընկերութիւնը արդի ընկերութենէն աւելի լայնօրէն ռամկավարական պիտի ըլլայ, ըստ

(*) Boutmy, *Éléments d'une psychologie politique du peuple américain*, էջ 17 :

որում քաղաքական կարգին մէջ ուսմկաւարութիւնը՝ անվրիպելիօրէն պիտի առաջ բերէ անտեսական կարգին մէջ եւս ուսմկաւարութիւն : Ուրեմն գիտնանք հաշտուիլ այս անհրաժեշտ բարեշքումին հետ : Նախնեաց օւանդութեանց եւ հնօրեայ սովորութեանց անժպիտ պահտումին մէջ յամառիլ մնալը՝ կը նշանակէ իր ժամանակին հասկացողութենէն զուրկ ըլլալ, պատմական մէթօտը անկատար՝ հետեւաորար չարաչար կերպով գործածել : Իր դարուն բոլոր շարժումը ուրանալը՝ անիծելով թիւին դերիչխանութիւնը, հաւասարութեան ձգտումները եւ « 89ի ֆրանսական յեղափոխութեան սխալ վարդապետութիւնները », — որոնք սակայն պատմութեան մէջ արդէն քաղաքացիական իրաւունք ստացած են, — պարզապէս պատմական հասկացողութիւն չունենալ կը նշանակէ . նոյնպէս ժողովուրդին՝ դէպ ի բարձրագոյն կեանք մը եւ դէպ ի մարդկային անձին աւելի լայն զարգացումը՝ արդար բաղձանքներուն դէմ իր սիրտը ամբափակ պահելը՝ աւետարանական սիրոյ օրէնքին դէմ եւս թերացում մ'է :

Անցեալն ալ ունեցած է իր առաքինութիւնները եւ ժողովիւնները, ինչպէս ներկան ունի : Անցեալին ցեղային ամբարտաւանութիւնը, դասային խըտրականութիւնը (*esprit de caste*), ամենազօր տիրապետողներուն ետասէր կիրքերուն ուժգնութիւնը, պատիժներուն վայրագութիւնը, դաւադրական ոգին, անարդար կողմնակալութիւնները եւ արքունիքներուն մէջ տիրող ապականութիւնը՝ նուազ պարսաւելի չէին քան հիմակուան ուսմկաւարութեանց մէջ տեսնուող ժողովրդային մախանքը, աղանդամոլութիւնը, նեն-

գաւոր անափառութիւնը եւ զեղծումները : Աւատական
 պատուազգածութիւնը , տէրերու եւ ստրուկներու
 իրարու հանդէպ նահապետական առաքինութիւնները
 աւելի բարձր բարեմասնութիւններ չէին քան արդի
 ընկերութեան մէջ զխտուած անկախութեան եւ անձ-
 նական արժանապատուութեան զգացումը , եղբայրա-
 կան կարեկցութիւնը , գիտութեան նուիրումը եւ ժո-
 դովրդային դատին ի սպաս առատաձեռնուած վեհանձն
 գործունէութիւնը : Ռամկավաբութիւնը ունի իր տը-
 կարութիւնները , ըստ որում մարդկային է . բայց
 ունի իր մեծութիւնն ալ : Պէտք է զայն ընդգրկել
 առանց վերապահութեան եւ առանց վախի . պէտք է
 զայն սիրել եւ ողջունել ուրախութեամբ , որովհետեւ
 անիկա՛ է որ , քաղաքակրթութեան բարձրագոյն վի-
 ճակին հասած ընկերութեան մը մէջ , ամենէն աւելի
 կը բաղմապատկէ անհատական արժանիքները եւ բա-
 թորութեան մեծագոյն քանակը կընձեռէ քաղաքացի-
 ներու ստուարագոյն մեծամասնութեան :



Faint, illegible handwriting, possibly bleed-through from the reverse side of the page. The text is arranged in several paragraphs, but the characters are too light and blurry to be transcribed accurately.

Ե Ր Ր Ո Ր Դ Մ Ա Ս

ՌԱՍԿԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Ե Ի

ԱՆՈՐ ՅԱՐԱԿԻՑ ՎՏԱՆԳՆԵՐԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Այս երրորդ Մասին նպատակն է՝ — բացատրել քե ի՛նչ զանազան առումներով կը գործածուի «Ռամկավարութիւն»ը, եւ կառավարական ո՛ր ձեւն է որ իսկապէս արժանի է այդ անուան. — հաստատել քե՛ ֆալսֆական համախմբումները չե՛ն սկսիր ռամկավարական կարգերով, այլ աստիճանաբար կը յանգին ռամկավարութեան, որ կը թուի ըլլալ ընկերութիւններու վերջնական եւ կատարելագործեալ ձեւը. — քե՛ ի՛նչ ֆալսֆական պայմաններու, երեւոյթներու եւ ուժերու ազդեցութեան տակ տեղի կուսնեայ ֆալսֆական կարգերու դեպ ի ռամկավարութիւն այս շրջափոխութիւնը. — ցոյց տալ քե ի՛նչ վստանգներու ենթակայ է ընդհանրապէս ռամկավարական կառավարութիւնը. — քե՛ ի՛նչպէս սխալ ըմբռնուած եւ յուրջ երաշխաւորութիւններով շապանովուած ռամկավարութիւն մը կրնայ վերածուիլ անիշխանութեան կամ ծնունդ տալ ռամկավարական բռնապետութեան. — մասնաւոր այս վերջին ֆալսֆական վիճակը բնորոշող երեւոյթները, անոր ծնունդ տուող շարժառիթները եւ ազդեցութիւնները, եւ քե՛ ի՛նչ աւերումներ կը գործէ այն՝ Ազատութեան եւ Հաւասարութեան բնագաւառներուն մէջ. — վերջապէս՝ իբր եզրակացութիւն՝ հետեցնել քե՛ ռամկավարութիւնը իր բարձրութեան վրայ եւ իր բանաւոր ու նեզրիտ սահմաններուն մէջ պահելու համար՝ յարատեւ նիզեր հարկաւոր են գիտակից ֆալսֆացիներու կողմէ :



ՌԱՄԿԱՎԱՐՈՒԹԵԱՆ

ԶԱՆԱԶԱՆ ԱՌՈՒՄՆԵՐԸ



Ռամկավարութիւնն անուան տակ ստիւրարար կը հասկցուին իրարմէ շատ տարբեր քաղաքական վիճակներ, թէպէտեւ այս բանը, որ իր բուն իմաստովը կը նշանակէ ժողովրդասպետութիւն, ժողովուրդիկ հառավարութիւնը, միայն քաղաքական որոշ վիճակի մը սլիտի պատշաճէր:

Այսպէս, օրինակի համար, ռամկավարութիւնն անունը կը տրուի հաւասարապէս՝ թէ՛ Միացեալ Նաւահանգաց կառավարութեան, եւ թէ՛ զանազան քաղաքական վիճակներուն դորս առած է Ֆրանսա՝ 1789ի Յեղափոխութենէն ի վեր, ինչպէս 1830ի Սանմանագրական Ֆրանսան, 1848ի Հանրապետական Ֆրանսան, 1852ի Կայսերական Ֆրանսան եւ այսօրուան Հանրապետական Ֆրանսան: Եւ սակայն ո՛րչափ մեծ է տարբերութիւնը քաղաքական կեանքի եւ կառավարութեան այս զանազան կերպերուն միջեւ: Այս տարբեր կարգի կառավարութիւններէն միտյն մէջ, ժողովուրդը իր իշխանութիւնը կը գործադրէ՝ ազգային ներկայացուցչութեան արդիական սկզբունքին կատարելապէս համապատասխանելու չափ ուղղակի կերպով. միւսին մէջ՝ մտաւորապէս միայն երկու հարիւր հազար քա-

զաքացիներ են որ՝ ժողովուրդին անունով՝ գերիշխանութեան իրաւունքը կը գործադրեն . երրորդ պարագային՝ միակ անձ մը յանուն ժողովուրդին լիակատար իշխանութեամբ պատկուած է : Ռամկավարութիւնը , իր իսկական առումով , չկրնար պատշաճիլ այսչափ իրարմէ տարբեր կացութիւններու :

Բայց երբ քիչ մը վերլուծենք այն իմաստը որով սովորաբար կը գործածուի այս բառը , շուտով կը հասկընանք որ , այսքան իրարմէ տարբեր վիճակներու միեւնոյն անունը անխտիր տուողները՝ երկու տարբոյշ բաներ կը շփոթեն իրարու հետ , այսինքն՝ ընկերութիւնը եւ կառավարութիւնը : Ռաւկավարութիւնն անունը տնխտիր թէ՛ Միացեալ Նահանգաց , թէ՛ կայսերական կամ հանրապետական Ծրանսային տուողները պարզապէս ըսել կուզեն թէ այդ զանազան երկիրներու եւ ժամանակամիջոցներու մէջ ապրող ընկերութիւնը (ժողովուրդը) աամկավարական ընկերութիւն մ'է . եւ այս ճշմարիտ է : Բայց եւ այնպէս , ժողովուրդի մը աամկավարական ըլլալը ո՛րքան ալ անհերքելի ըլլայ , չարգաքացներ ռաւկավարութիւնն ըստին չարաչար գործածութիւնը նոյն ժողովուրդին կառավարութեանը առած զանազան ձեւերուն համար : Որպէս զի այդ բառը ճիշդ գործածուած ըլլայ , պէտք է որ , այդ աամկավարական ընկերութիւնը քաղաքականապէս ալ իբր ռաւկավարութիւն կազմակերպուած ըլլայ , այսինքն ունենայ աամկավարական կառավարութիւն մը , կամ ուրիշ խօսքով՝ ժողովուրդը ինքզինքը կառավարէ մեծամասնութեան կամքին համաձայն եւ հպատակելով մեծամասնութեանց օրէնքին :

Արդ , միշտ չի պատահիր որ աամկավարական ըն-

կերութիւնն մը ունենայ իր պատկերին նման կառավարութիւնն մը, եւ հետեւաբար՝ արժանի ըլլայ օրինաւորապէս կոչուելու ռաւկալարուքիւն մը: Այսպէս, 1830ի Սահմանադրութեան տակ, Ֆրանսացի ժողովուրդը անշուշտ ռամկավարական ընկերութիւնն մ'էր. բայց ճիշդ պիտի չըլլար ըսել թէ այն ժամանակ Ֆրանսան ռամկավարական կառավարութիւնն մ'ունէր, ըստ օրում քաղաքացիներու ամենաստուար մեծամասնութիւնը զրկուած էր ազգին երեսփոխաններուն ընտրութեան ուղղակի մասնակցելու իրաւունքէն եւ հանրային գործերու վարչութենէն: Կառավարութիւնը ռահմանադրական էր, այն իմաստով որ միապետին իշխանութիւնը իմաստուն կերպով ճշդորոշուած եւ խստիւ սահմանաւորուած էր: Կարելի էր նոյն իսկ խորհրդարանական (parlementaire) կոչել զայն, ըստ օրում հանրային իշխանութեան գլխաւոր աւանդապահը խորհրդարանն էր. բայց անոր ռաւկալարական կառավարութիւնն կամ ռաւկալարութիւնն անունը տալ կարելի չէր, առանց ինչալու բառերու այն շփոթութեան մէջ՝ որու մասին խօսեցանք քիչ մը վերը: Եւ սակայն այն ժամանակի Ֆրանսական ընկերութիւնը մեր օրերու Ֆրանսացիներուն չափ ռամկավարական էր: Առաջին կայսրութեան ժամանակ նուազ ռամկավարական չէր Ֆրանսացին, եւ ոչ մանաւանդ երկրորդ կայսրութեան ժամանակ, եւ սակայն՝ առաջին կամ երկրորդ կայսրութիւնը ռամկավարական կառավարութիւնն անունով կոչելը ծիծաղ պիտի պատճառէր բոլոր լուսաւորեալ մարդերու:

Ուրեմն պէտք է ընդունիլ թէ ընկերութիւնն մը կրնայ ըլլալ ռամկավարական, առանց անպատճառ

սամկաւարական կառավարութիւն մ' ունենալու, ըստ
 կալիարուքեան կաղմը ունենալու: Միայն ճշմարիտ է
 որ սամկաւարական ընկերութիւն մը անխուստիկելի
 քէն կը ձգտի կառավարական այս ձեւը ստանալու,
 եւ եթէ այդ ձեւը չունի, կա'մ այն է որ սակաւին
 չէ' հասած անոր եւ կը ձգնի հասնիլ եւ կա'մ անոր
 հասած՝ քայց դայն կորսնցուցած է, եւ կը հետամտի
 վերստանալու:

Ռամկաւարական կառավարութիւն մը իբնն հիմ
 կրնայ ունենալ մի միայն սամկաւարական ընկերու-
 թիւն մը, եւ սամկաւարական ընկերութիւնն ալ իր
 կարգին՝ կը դիւրացնէ ու կը թելադրէ սամկաւարա-
 կան շինուածքին կառուցումը: Այդ շէնքը կրնայ
 գնա կառուցուած չըլլալ եւ իր անդը կրնայ գրաւուած
 ըլլալ սեւէ ժամանակաւոր շինութիւններով, ինչ-
 պէս նաեւ կրնայ անգամ մը կառուցուած ու ստապա-
 լած ըլլալ, եւ անիչ՝ աւերակներ միայն մնացած:
 Երկու պարագային մէջ ալ՝ սամկաւարական ընկերու-
 թիւնը գրկուած է իր բնական կառավարութենէն եւ,
 հակառակ երեւոյթներուն եւ սովորութեան, իրաւ-
 ունք չունի ռամկալարուքիւն կոչուելու:

ԻՆՉՊԷՍ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՄԸ ՌԱՄԿԱՎԱՐԱԿԱՆ

ԿԸ ԴԱՌՆԱՅ ԵՒ ԻՆՉՈՒ ԿԸ ՄՆԱՅ ԱՅՆՊԷՍ

Ընկերութիւնները չեն սկսիր երբեք ռամկավարական վիճակով: Մարդերու միջև բնական անհաւասարութիւն մը կայ զոր քաղաքակրթութիւնը կը ձգտի մեղմացնել, եւ ոչ թէ աւելցնել, ինչպէս կը կարծէին 18րդ դարու իմաստասէրները, որոնք անհաւասարութիւնը կը նկատէին քաղաքակրթութեան արդասիրքը, անոր մէկ ոճիրը, եւ երբեք չէին ընդունիր թէ անոր հիմը բնութեան մէջն է: Հասարակութիւններ ձևաք բերելու եւ պահպանելու համար պէտք եղած մտաւոր ուժը, քաջութիւնը եւ կարողութիւնը անհատներուն մէջ հաւասարապէս չի դարգանար. այս է անհաւասարութեան առաջին եւ բնական պատճառը նախնական ընկերութեան մը մէջ. անհաւասարութիւնը այսպէս միանգամ հաստատուելէն վերջը, կը նուիրագործուի եւ նոյն իսկ կը յաւերժանայ՝ կա՛մ ճնշող օրէնքներով, կա՛մ կրօնական նախապաշարութեանով, կամ յաճախ՝ աշխարհալուծութեան եւ մէկ ցեղին միւս ցեղին վրայ զերակշռութեան հետեւանքով: Միայն ժամանակի ընթացքին մէ՛ջն է որ, արդարութեան գաղափարը ծագում կառնէ եւ կը սորվեցնէ մարդոց թէ՛ հակառակ իրենց բնական, ստացական կամ օրէնքով ենթադրեալ անհաւասարու-

Թեան՝ իրենց միջեւ պէտք է գոյութիւն ունենայ պարտքերու եւ իրաւունքներու որոշ հաւասարութիւն մը: Ահա այն ստեղծ կը սկսի հակառակորդ դասակարգերու միջեւ պայքար մը, որուն տեւողութիւնը անորոշ է, բայց որուն ելքը յայտնի է, եւ որ սպահովապէս կառայնորդէ դէպ ի սամկալարական վիճակը:

Ազնուապետական վիճակը՝ ընկերութիւններու սկզբնաւորութեան բնական վիճակն է (նոյն իսկ եթէ երբեմն գլխաւորի մը արուած սահմանափակ գերիշխանութիւն մը՝ այդ ազնուապետութեան ընծայած ըլլայ միապետութեան մը ատերուոյթ ձեւը): Այս ընդհանուր կանոնին դէմ ոմանք իբր բացառութիւն առաջ կը բերեն Միացեալ Նահանգները, հիմնուելով այն փաստին վրայ որ ասոնց ժողովուրդը առջի օրէն բոլորովին սամկալարական եղած է: Այս առարկութեան պատասխանն այն է որ՝ այդ ժողովուրդը բնաւ երբեք նորածին ժողովուրդ մը չէր, այլ ընդհակառակը աւելի հին ընկերութեան մը կոճղէն անջատուած ուժեղ ոստ մը, եւ որուն անջատման բուն պատճառն ալ սամկալարական վիճակ ձեռք բերելու իր ձգտումն էր, վիճակ մը զոր անկարելի էր այն ստեղծ ստանալ մայր հայրենիքին կապուած մնալով: Հետեւաբար, Միացեալ Նահանգաց մէջ ընկերութիւնը՝ առջի օրէն՝ այն եղաւ ինչ որ պիտի ըլլար Անգլիոյ մէջ, եթէ անգլիական ազնուապետութիւնը այդ միջոցին պարտուած ու ջնջուած ըլլար. այն եղաւ, կ'ըսենք, ինչ որ անտարակուսելիօրէն Անգլիոյ մէջ ալ պիտի ըլլայ օր մը, երբ այլեւս անգլիական ընկերութեան այս մեծ կերպարանափոխութիւնը յամբօրէն կատարուած վերջացած ըլլայ: Այսօր ալ եւ

մեր աչքին տակ, Անգլիա՝ աւստրալեան ցամաքակղզի-
 զիին վրայ ծնունդ կուտայ զուտ ուսմկավարական ըն-
 կերութիւններու, որոնք անմիջապէս կ'ըստանան ի-
 իրենց պատշաճող կառավարական ձեւը եւ կը վերած-
 ուին ուսմկավարութիւններու, մայր երկրին անուա-
 նական եւ խնամակալական հովանաւորութեան տակ :
 Բայց աւստրալեան այս ընկերութիւններն ալ, ինչ-
 պէս ըսինք Միացեալ Նահանգաց կարգին, բառին
 բուն նշանակութեամբ նոր ընկերութիւններ չեն .
 անգլիական ընկերութեան հատուածներ են, որոնք
 մինչեւ այն աստի կը քալէին ընդհանուր պողոտայէն
 եւ որոնք յանկարծ կողմնակի շաղթով մը մայր հայ-
 բերնիքէն զարմանալի կերպով առաջ անցան : Ասոնք,
 իրենց անջատման առաջին վայրկեանէն կը հասնին
 ուսմկավարական վիճակին, այն պարզ պատճառաւ որ
 իրենց ազնուականութիւնը իրենց ետին ձգեցին, եւ
 իրենց մէջ ազնուականութիւնն ա՛յնչպիսի չէ մնացած
 որ կարծես յեղափոխութեամբ մը յանկարծ ջնջուած
 ըլլար այն կամ հաւասարութեան գաղափարին կանու-
 նաւոր դարգացման շնորհիւ յամբօրէն անհետացած :
 Ասոր հակառակ, հայբերնիքի հողին կապուած մնացած
 ուսմիկ դասակարգերուն համար, հաւասարութեան յաղ-
 թանակը միշտ եղած է խստամբեր ճիգի մը եւ երկա-
 րատեւ կռիւի մը պտուղը :

Կարելի է ըսել թէ այս կռիւը կը ծագի եւ ազ-
 նուապետական ընկերութեան մը հանդիստը կըսկսի
 խոռոխի ա՛յն օրէն, երբ իր շնորհներէն զրկուածնե-
 րուն մէջէն ամենէն կարողները եւ ձեռներէցները՝
 ժողովրդային շահերուն եւ կիրքերուն կը կոթնին
 ազնուապետութեան մէջ խրամատ բանալու եւ հան-

բային կարգուսարքերուն մէջ հաւասարութիւնը մըտ-
 ցնելու համար : Ռամիկ դասակարգերը , ծանրաբեռ-
 նուած առօրեայ սպրուստի հոգեւոր , ընդհանրապէս
 քաղաքական փառասիրութենէ զերծ կ'ըլլան . իրենց
 բոլոր աննշանքը կամփոփուի քաղաքային ապահովու-
 թեան եւ բարեկեցութեան մէջ : Բայց միշտ եւ ամէն
 տեղ , այս ուսմիկ դասակարգերուն եւ ազնուականու-
 թեան միջեւ կը գտնուին բաւական թուով մարդիկ
 որոնք՝ օրուան պէտքերու ճնշումէն եւ ձեւագործ աշ-
 խատութենէ ազատագրուած եւ դաստիարակութեամբ
 մշակուած՝ ուշ կամ կանուխ կըսկսին չի հանդուրժել
 ընկերային վիճակի մը , յորում իրենք զբիւրած կը
 մնան կարգ մը առաւելութիւններէ , զորս ազնուա-
 պետական ընկերութիւնը վերաբարձած է քաղաքացի-
 ներու միակ դասակարգի մը համար : Դժգոհութեան
 նիւթ կազմող խնդիրներն են , օրինակի համար , եր-
 բնն բարձր գատուն եւ միւս գասակարգերուն միջեւ
 ամուսնութեան արգելումը , երբնն քաղաքային կամ
 զինուորական բարձր աստիճաններէն ոմանց անմատ-
 չելիւթիւնը՝ ժողովուրդի գասակարգին համար , եր-
 բնն հանրային հարկերու անհաւասար բաժանումը ,
 եւայլն : Երբ այս միջին գասակարգին փառասիրու-
 թիւնը այսպէս կարծարծուի եւ երբ անիկա կըսկսի
 օրինաւոր զայրոյթ մը զգալ , այն ատեն կըսկսի հա-
 ւասարութիւն պահանջել : Եւ որովհետեւ շուտով կըզ-
 դայ թէ զայն ստանայու համար բաւական չէ ի մէջ
 բերել իրաւունքի եւ արդարութեան դադափարները ,
 ձեռք կառնէ ուսմիկ գասակարգերուն անտես առնուած
 չանքեր եւ վերջ ի վերջոյ անվերիպելիօրէն կը յաղ-
 թանակէ այս վերջիններուն ալ աջակցութեամբը :
 Հոովմի մէջ աղքատ ուսմիկը (plébéien) երբեք չէր ե-

բազմեր պրևատոր կամ քոնսլիս (consul) դառնալ . այդպիսի փառասիրութիւնները կը թողուր իր դասակարգին ամենէն հարուստ , լուսաւորեալ եւ մեծամեղ մասին . իր բոլոր տենչանքը կը կայանար իր պարտքերուն ջնջումին կամ հանրային հարստութիւններէն փոքրիկ բաժինի մը ստացումին մէջ : Բայց այս իսկ պատճառաւ օգնութեան ձեռք կը կարկառէր պրևատորութեան կամ քոնսլիսութեան թեկնածուներուն , եւ այս կերպով իրենց ճիգերը եւ իրենց յոյսերը կը միացընէին : Ոմանց քով արմնացած քաղաքական փառասիրութիւնը՝ երբ այսպէս նեցուկ դանայ բարբորութեան ցանկացող անհուն մեծամասնութիւնէն , շուտով անդամադրելի կը դառնայ , ու ա՛լ այն ատեն ազնււնասպետական ընկերութեան մը սամկալարական ընկերութեան փոխակերպութիւնը ժամանակի գործէ միայն :

Այս փոխակերպութեան համար պէտք եղած ժամանակը անհունապէս կրնայ փոխուիլ՝ այն հանգամանքներուն համաձայն որոնց մէջ տեղի կուեննայ այն : Եթէ երկու դասակարգերուն միջեւ պայքարը տեղի ունենայ բաց երկնքի տակ , բարեկարգ պնտութեան մը մէջ , եւ մէն մի յաղթանակը հաստատելու եւ ապահովելու նպաստող օբիեական միջոցներով , այդ պայքարը կրնայ յարատեւել երկար ժամանակ տառնց պնտութեան համար վտանգ մ'ըլլալու , այլ ընդհակառակը անոր գործունէութեան գլխաւոր զըսպանակը եւ անոր մեծութեան ամենէն բեղմնաւոր աղբիւրը կը դառնայ , մինչեւ այն օրը ուր կաւարտի իր յաղթանակովը եւ տեղի կուտայ նոր ու աւելի սարսափելի հարցի մը . — սսիկա Հռովմի պարա-

գան է : եթէ ընդհակառակը այս պայքարը սկսի պետութեան մը մէջ , ուր հանրային կարծիքը ինքզինքը յարգելի ընծայելու ամէն միջոցէ զուրկ է եւ հազիւ կրնայ իր ձայնը լսելի ընել . եթէ պայքարը տեղի ունենայ մութի կամ կիսաստուերի մը մէջ , եւ քանի՛ վրիպի՝ կիրքերը հանդարտեցնելու եւ գոնէ ժամանակի մը համար գոհացում առթելու բնոյթ ունեցող գործնական ուրէ արդիւնքէ կամ մասնակի յաջողութենէ մը , այնչափ աւելի սուր կերպարանք ստանայ , ազնուապետական ընկերութիւնը՝ այս ստորերկրեայ պայքարէն հեռոյնտէ ականահատուած ու մաշած , վերջապէս օր մը մէկ հարուածով կը փլուզի եւ կարծես գահավէժի մը մէջ կանհետանայ եւ պահ մը կը վտանգէ գոյութիւնն անգամ այն ազգին որուն ծոցին մէջ կը կատարուի այս քաղաքական յեղաշրջումը , նման բնութեան ամենէն ուժգին յեղաշրջումներուն . — ասիկա Ֆրանսայի պատմութիւնն է : եթէ վերջապէս այս պայքարը ծագում առնէ այնպիսի երջանիկ կամ խելացի ժողովուրդի մը մէջ , որ առանց անհամբերութեան եւ առանց ատելութեան կարենայ անոր մասնակցիլ եւ անոր հանդուրժել . եթէ ազնուապետութիւնը ողջմտութիւնը ունենայ եռանդուն կերպով ընդգրկելու ժողովրդային շահերը . եթէ անիկա բնազդը ունենայ միշտ յարմար ժամանակին զիջանելու իր առանձնաշնորհմանց այն մասը զոր պահպանելը հանրային վտանգի տեղի պիտի տար . եթէ անիկա արդարութիւնը եւ ճարտարութիւնը ունենայ իր մէջն առնելու իր շուրջը բարձրացող եւ փայլող ամէն բան . եթէ , միւս կողմէ , միջին դասակարգը լիուրի կերպով իր ձեռքն ունենայ այն բոլոր բարիք-

ները որոնք կրնան մարդերը սփոփել և մխիթարել իրենց դասակարգային անհաւասարութենէն, ինչպէս հարստութիւն, իշխանութեան մէջ բաւական լայն մասնակցութիւն և անծայրածիր ազատութեան մը խաղաղ վայելումը. եթէ յարատեւ արագազալ մը շարունակաբար առնէ տանի ազգաբնակչութեան դժգոհ և գործօն մասը, առանց մայր երկրին ուժերունուազում պատճառելու. եթէ այս բոլոր նպաստաւոր հանգամանքները՝ բարեբաղդ զուգադիպութեամբ մը՝ շիասին գտնուին ռամկավարական ընկերութեան մը ծոցին մէջ, այս ընկերութիւնը փոխակերպելու ձգտող պայքարը հազիւ արժանի է պայքար անուան, ա՛յնչպիսի քողարկուած է այն միաբանութեան և հանրային բարօրութեան երեւոյթով, և այդպիսի ընկերութիւն մը դէպ ի ռամկավարութիւն տանող հոսանքը այնչափ կանոնաւոր և մեղմ է, որ գրեթէ անըզգալի է: — Այս ալ Անգլիոյ պատմութիւնն է:

Բայց ազնուապետական ընկերութեան մը ռամկավարութեան փոխակերպութիւնը դանդաղ ըլլա՛յ թէ արագ, բուն ըլլա՛յ թէ խաղաղ, ամէն պարագայի մէջ անխուսափելի է, և անգամ մը կատարուելէն վերջ՝ անդառնալի: Ընկերութիւն մը մէկ քանի անգամ կրնայ իյնալ վերջին ծայր անիշխանութեան և ստրկութեան մէջ, կրնայ գահեր տապալել և զանոնք վերականգնել կրկին տապալելու համար, իր սովորութիւններուն ու բարքերուն և իր լեզուին մէջ յանկարծական յեղաշրջումներ կատարել, փոխ ընդ փոխ հանրապետական անպաճոյճ պարզասիրութիւնը և բիւզանդական ստրկական մեղկութիւնը զգհնուլ. բայց աւելի դիւրին է գետի մը դէպ ի իր

աղբիւրը վերադարձը՝ քան ռամկավարական ընկեր-
 րութեան մը դէպ ի ազնուապետականութիւն նահան-
 ջը : Այդպիսի յետաշրջութեան մը անկարելիու-
 թիւնը կը բացատրուի շատ մը պատճառներով : Ամէն
 մարդիկ հաւասարապէս չեն զգար ազատութեան հրա-
 պոյրը, եւ ազատ կեանքը անհրաժեշտ պահանջ մը չէ՝
 շատ մը անհատներու համար . բայց հաւասարութեան
 քաղցրութիւնը մատչելի է ամենէն տկար մտաւորա-
 կանութիւններու իսկ . եւ մարդ անգամ մը հաւասա-
 րութեան համը առնելէ վերջը՝ ա՛լ չի կրնար հրաժա-
 րիլ անկէ : Ասկէ զատ, ռամկավարական ընկերու-
 թեան մը քաղաքային օրէնքները եւ բարքերը՝ կը
 պատշաճին իրաւունքի եւ արդարութեան ճշգրիտ գա-
 ղափարնեւուն, եւ մարդկային խղճին ու շատերու
 սրտին մէջ զօրաւոր նեցուկ մը կը գտնեն : Զուտ
 բանականութեան աչքին կա՞յ բան մը աւելի արդար
 եւ իրաւացի քան ժառանգութեան հաւասար բաժա-
 նումը, գիրքերու՝ արժանիքի համաձայն եւ հարըս-
 տութիւններու՝ աշխատութեան համաձայն շարժակա-
 նութիւնը, այս մշտնջենական շարժումը վարէն վեր
 եւ վերէն վար՝ իւրաքանչիւրին իմացականութեանը,
 գործունէութեանը կամ բաղաւորութեանը համաձայն,
 ինչ որ ռամկավարական ընկերութեան մը առանձնա-
 յատկութիւնը կը կազմէ : Վերջապէս, ժողովուրդ մը
 որ կապրի այս վիճակին մէջ եւ այս տեսարանով
 կը զմայլի, եթէ հրաշքով իսկ ուղէր անկէ հրաժարիլ
 եւ ազնուապետական կարգերուն վերադառնալ, դարձ-
 եալ չպիտի յաջողէր : Ազնուապետական զգացումը
 այս բանին մէջ կը կայանայ . ազնուապետական ծա-
 գում ունեցող մարդը ինքզինքը գեր ի վերոյ կը նկա-

տէ այդ ծագումին պատճառով, եւ իր հայրենակից-
 ներն ալ, միեւնոյն տպաւորութիւնը զգալով՝ իրենք
 ալ զանիկա գերընտիր կը նկատեն, եւ սնոր հասա-
 րակ մահկանացուէ մը աւելի առաւելութիւն մը կըն-
 ծայնն : Այս զգացումին անհետանալովն է որ ազ-
 նուապետական ընկերութիւն մը կ'իյնայ, եւ անգամ
 մը որ այս զգացումը անհետանայ, մարդկային ունէ
 ճիգ մը չկրնար զայն վերաբրտադրել . երբ այս զգա-
 ցումը միանգամ տեղի կուտայ ռամկավարական զգա-
 ցումին, երբ ազնուափայլ ծագում մը աւելի տաղտուկ
 մը կը դառնայ քան թէ բարեմասնութիւն մը եւ ժո-
 դովուրդին անվստահութիւն կամ ատելութիւն կը
 ներշնչէ, ա'լ անկէ վերջ ի՞նչ հմայք կրնայ ունենալ
 ազնուապետական զաղափարը : Զգացումներու այս
 յեղաշրջումը ռամկավարական ոգիին վերջին խօսքն
 ու կատարելութիւնն է . բայց դէպ ի ռամկավարու-
 թիւն գիմող ընկերութիւն մը այսչափ յառաջացած
 ըլլալու պէտք չունի, որպէս զի իրեն այլեւս անկա-
 թելի ըլլայ նահանջել :



Ռ.Ս.Մ.ԿԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ
ԵՒ

ՉԱՅՆ ՇՐՉԱՊԱՏՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ. — ԱՆԻՇԻԱՆՈՒԹԻՒՆԸ



Իմաստուն մը ըսած է. « Պէտք չէ իրերուն դէմ բարկանալ, որովհետեւ այդ բանը իրերուն վրայ չազդէր » : Նմանապէս անօգուտ պիտի ըլլայ ցաւիլ, տեսնելով որ մարդկային ընկերութիւնները աւելի կ'ամ նուազ արագութեամբ կը հակին դէպ ի սամկավարական վիճակը. վասն զի այս շարժումը ա՛յնչափ բնական է անոնց համար, որչափ բնական է միանգամ ծնած մարդուն՝ յառաջանալ դէպ ի չափահասութիւն, ծերութիւն եւ մահ : Բայց ընկերութիւն մը որ սամկավարական կը դառնայ՝ ամէն օր աւելի կը մօտենայ անաւոր հարցի մը. բնազդաբար կը բաղձայ իր պատկերին նման կառավարութիւն մը հաստատել, սամկավարական կազմ մը ստանալ. եւ մինչեւ որ չի հասնի այդ տեսակ վարչական կազմակերպութեան մը, տեսակ մը անհանդիստ արամադրութիւն մը կ'ըզգայ որ զայն անկարող կը դարձնէ հանդուրժելու կառավարական չափաւոր ձեւերուն. եւ երբ վերջապէս կը հասնի սամկավարական կառավարութեան, միակ նաւահանդիստը ուր կը կարծուէր թէ պիտի կրնայ

դադար գտնել , իր առջև կը բացուի ալէկոծ ծով մը , աւելի խռովայոյզ եւ աւելի բաղմամտանդ քան բոլոր այն ափունքները որոնցմէ անցաւ :

Եթէ ռամկաւարական կառավարութիւնը , նման այն ամէն բաներուն որ հողային արտադրութիւններ են եւ կամ մարդկային մտքի ծնունդ , ենթակայ չըլլա՛ր ապականութեան եւ մահուան . եթէ անիկա նոյն իսկ նշաւակ չի գտնա՛ր կարգ մը մասնաւոր հիւանդութեանց եւ այնպիսի վտանգներու որոնց մեծութիւնը կրնայ համեմատիլ իր գեղեցկութեանը եւ մարդկային սրտին վրայ իր ազդած հմայքին , տարակոյս չկայ որ կառավարութեան այս ձևը պէտք էր նկատուի քաղաքակրթութեան վերջին խօսքը եւ կատարելագոյն միջոցը՝ քաղաքական ընկերութեան մը ապահովելու անդորրութիւնը եւ երջանկութիւնը : Արդարեւ , անգամ մը հաւասարութիւնը բարքերուն մէջ մտնելէն եւ մտքերու մէջ տեղաւորուելէն վերջ , ի՞նչ բան կրնայ երեւակայուիլ աւելի արդար՝ քան խրաքանչիւր քաղաքացիին հանրային գործերու մէջ ձայնի իրաւունք մը տրուելը , միայն անոր համար որ մարդ է , եւ հանրային գործերու վարչութեան մէջ մասնակցութեան բաժին մը տրուելը միայն իր արժանիքին համեմատութեամբ , առանց բնաւ նկատուողութեան առնելու իր ծագումը կամ հարստութիւնը : Այս վիճակը վայելող ունէ՛ մարդ բոլորովին զրկուած չէ՛ իշխանութիւնէ , եւ ամէն մէկ անձ իր ազգեցութեան բաժինը կը ներգործէ հասարակաց ճակատագրին վրայ , մինչդեռ՝ միւս կողմէ՛ ազգեցութեան եւ իշխանութեան մեծագոյն բաժին մը կը կուտակուի անո՛նց շուրջը որոնք ուրիշներն համոզելու բնատուր

ձերքով մը օժտուած ըլլալով, կը յաջողին դիւրաւ իրենց վրայ հրաւիրել ընդհանուրին վստահութիւնը: Հանրային իշխանութիւնը՝ բղխած բոլոր քաղաքացիներէն, անդադար վերանորոգելի՝ ամէնուն կամքով, մէկ քանինքնու յանձնուած՝ ամենուն հաճութեամբը, մի միայն համողիչ միջոցներու շնորհիւ, եւ այս կերպով՝ ժամանակուորայէս կեդրոնացած կարողագոյններուն եւ լաւագոյններուն ձեռքին մէջ. ինչ հրաշալի տեսարան, եւ ո՛րչափ երջանիկ վիճակ մը պիտի ներկայացնէր աշխարհ՝ եթէ ռամկավարութիւնը կարող ըլլար միշտ նոյն օրինակելի տեսարանը պարզելու:

Բայց այսպիսի ուրախալի տեսարան մը շատ քիչ անգամ կը ներկայանայ իմաստունին աչքին, եւ եթէ երբեմն աշխարհ տեսած է այդ տեսարանը, երբեք յարատեւ չէ եղած այն. շաւղոյնիկ ապակաւորքիւնը վասքարագոյն կըլլայ (*optimi corruptio pessima est*): Ռամկավարական կառավարութիւնը ընդհանրապէս հակամէտ է շուտով ապականուելու եւ քայքայուելու. անիշխանութիւնը նշանն է իր արագ քայքայումին, եւ բռնապետութիւնը գրեթէ անմիջապէս ծնունդ կառնէ անոր աւերակներէն, կորովի եւ ախտավարակ բոյսի մը պէս:

Ռամկավարական կառավարութիւնը կիչնայ մարդկային երեւակայութենէն ծնած կառավարական բոլոր միւս ձեւերուն պէս, որովհետեւ անիկա ալ, բոլոր միւսներուն պէս, հիմնուած է ճշմարտութեան եւ վարկածի (*fiction*) իսառնորդի մը վրայ. եւ որովհետեւ իր սարունակած վարկածը ուշ կամ կանուխ երեւան դալու սահմանուած է, այդ երեւոյթը պատ-

ճառ կըլլայ իր կործանումին : Բացարձակ միապետական կառավարութիւնը սա գաղափարին վրայ հիմնուած է թէ՛ միեւնոյն վեհապետական գերդաստանը՝ իւրաքանչիւր սերունդին կը ծնի՝ բացարձակ իշխանութիւնը իմաստութեամբ վարելու կարող մարդ մը, — եւ այս ուղիղ չէ : Ազնուապետական կառավարութիւնը հիմնուած է սա միւս գաղափարին վրայ թէ՛ կարգ մը գերդաստաններ, միանգամ օրէնքներու եւ բարքերու շնորհիւ անկումէ եւ կարիքներէ բարձր վիճակի մը մէջ զրուելէ վերջ, կանոնաւորապէս առաջ կը բերեն ազգին մտաւորական եւ քաղաքական գերընտիր մասը, — եւ այս ալ ճշմարիտ չէ : Վերջապէս ռամկավարական կառավարութիւնը հիմնուած է սա գաղափարին վրայ թէ՛ քաղաքացիներու մեծամասնութիւնը բանաւոր կերպով կը կիրարկէ իր քուէի իրաւունքը եւ միշտ իմաստութեամբ կը տեսնէ ինչ որ համաձայն է արդարութեան եւ նպաստաւոր՝ հասարակաց շահուն . — եւ այս ալ նոյնչափ հեռու է ճշմարտութենէ : Հետեւաբար ռամկավարական կառավարութիւնն ալ կիցնայ միւսներուն պէս, երբ իր հիմին այս խախտւած մասը փլչի :

Արդարեւ, երկու շարժառիթներ կամ գրգայատճառներ կան որոնք մարդիկը կը մղեն իմաստութեամբ գործ տեսնելու . ասոնցմէ առաջինն է բարեսիրութիւնը կամ առաքինութիւնը, եւ երկրորդը՝ զարգացման որոշ աստիճան մը կամ պայծառատեսութիւնը : Առաքինութիւնը, առանց պայծառատեսութեան, սոսկական գործերու անձուկ շրջանակին մէջ իսկ՝ անբաւական է առաջին առնելու ծանր սխալներու կամ անշարմանելի վրիպումներու : Ամենամա-

քուր դիտարութիւններ, տղիտութեամբ և և կու-
րութեամբ ընկերացած՝ յաճախ աւելի մեծ ազէտնե-
րու պատճառ եղած են, քան յուր կիրքերը՝ երբ ա-
սոնք ստախճան մը պայծառատեսութեան շնորհիւ
զսպուած կամ դէպ ի լաւ իմացուած շահը առաջնոր-
դուած են: Բայց մանաւանդ հանրային գործերու դա-
տողութեան մէջն է որ, առաքինութիւնը առանց ի-
մաստութեան անկարողութեան կը մատնուի և կըր-
նայ ազիտարեր դառնալ: Արդ ևն թաղբերով որ — ինչ
որ տարակուսելի է, — բարեսիրութիւնը կամ առա-
քինութիւնը ըլլալ միշտ մարդոց մեծամասնութեան
գործերուն շարժառիթը. ևն թաղբերով որ, — ինչ որ
ա՛լ աւելի տարակուսելի է, — չքաւոր և տաժանքոտ
կեանք մը պարզ հողի մը մէջ չարթնցնէր ունէ ա-
նիրաւ խորհուրդ մը, այլ անոր մէջ միշտ անաղարտ
պահպանէր՝ ամենուն նկատմամբ արշար ըլլալու օրի-
նաւոր հակամիտութիւնը, դարձեալ չի դադրի ինք-
նայայտ ճշմարտութիւն մը ըլլալէ սա իրողութիւնը
թէ՛ քաղաքացիներուն մեծագոյն մասը, իրենց կեան-
քի շրջանին թեւակոխած օրէն՝ իրենց մարմնաւոր
պէտքերը հոգալու մտահոգութեամբ ծանրաբեռնուած՝
միջոց չեն ունենար կատարեալ զարգացում մը ստանա-
լու. այնպէս որ, եթէ երբեք մեծամասնութիւնը ա-
ռաքինութեանէ զուրկ չէ, ապահովապէս զուրկ է լու-
սաւորութենէ:

Արդ ռամկալարական կառավարութիւնը մեծա-
մասնութեան կը յանձնէ՝ — բացառաբար — կարգ մը
հիմնական խնդիրներ ուղղակի իր քուէով վճռելու
հոգածութիւնը (*referendum*) և — սովորաբար՝ — որոշ
պայմանաժամերու մէջ՝ ներկայացուցիչներ ընտրելու

խնամքը՝ հանրային իշխանութիւնը անոնց վատահե-
լու համար : Երեւակայեցէք որ այսքան կարեւոր
գործեր՝ տգիտութեան պատճառաւ առանց ողջամիտ
գատողութեան կատարուէին, եւ պիտի համողութե-
շուտով թէ ի՛նչպէս ռամկավարական կառավարու-
թիւն մը կրնայ եւ թէ ի՛նչպէս անիշխանութիւնը
կուգայ զայն քայքայելու : Ենթադրենք արդարեւ որ՝
երկու քաղաքացիներ, որոնցմէ մէկը՝ իմաստուն եւ
պարկեշտ, իսկ միւսը անխորհուրդ կամ չարանենգ,
միաժամանակ ժողովրդային ներկայացուցչութեան
թեկնածու հանդիսանային եւ ամբոյսը հրաւիրուէր
այդ երկուքէն մէկը ընտրելու՝ կատարեալ ազատու-
թեամբ (զի այստեղ չեմ խօսիր այն բռնադրօսելի ընտ-
րութեանց մասին որոնք ռամկավարական բռնապե-
տութեան անհրաժեշտ գործիքներէն մին կը կազմեն,
եւ որոնց վրայ պիտի խօսինք յաջորդ գլուխին մէջ) :
Ենթադրենք որ այս երկու քաղաքացիները դէմ առ
դէմ գտնուին, եւ անմիջապէս պիտի տեսնուի թէ ա-
նոնց յաջողութեան հաւանականութիւնները ո՛րքան
անհաւասար են, եւ թէ անոնցմէ նուազ յանձնարա-
րելին որչափ աւելի կը նպաստաւորուի այդ երկու-
քին մէջ ընտրութիւն կատարելու հրաւիրուած ժողո-
վուրդին տգիտութենէն : Մինչդեռ երկու թեկնածու-
ներուն մէջէն ա՛յն որ խղճի եւ բանականութեան
լեզուն կը խօսի՝ չպիտի չափազանցէ ո՛չ իր արժա,
նիքներուն ներբողումը եւ ո՛չ իր փափաքած բարե-
նորոգումներուն գործադրելիութեան զիւրութիւնը,
մինչ անիկա զիտցածը միայն պիտի յայտարարէ եւ
յուսացածը միայն պիտի խոստանայ, միւսը՝ որ ո՛չ
բանականութեամբ եւ ոչ խղճմտանքով սանձահար-
ուած է, մեծաշօրինդ կերպով պիտի շռայլէ ամենէն

փայլուն խոստումները , ինքզինք կարող պիտի ներկայացնէ գոհացնելու ամենուն բաղձանքները , պիտի գգուէ բոլորին յոյսերը , առանց ի հաշիւ առնելու ո՛չ փորձառութեան դասերը եւ ոչ բնութեան օրէնքները , եւ պիտի վերակոչէ , անոնցմէ օգտուելու համար , այն բոլոր անմեղ կամ մեղապարտ պատրանքները զորս տղիութիւնը եւ կիրքը կրնան ծնանիլ միամիտ հուզիներուն մէջ : Հետեւաբար այս վերջինը պիտի յաղթանակէ , եւ եթէ օր մը՝ ժողովրդային վաստակութիւնը չարաչար խաբելուն համար՝ կորսնցնէ իր վարկը եւ իր պատգամաւորութիւնը , իր տեղը պիտի ձգէ իրմէ աւելի անպատկառ կամ աւելի վնասակար ուրիշ խաբերայի մը կամ ուրիշ խենթի մը :

Այդ պարագային ահա՛ ռամկավարական կառավարութիւնը անիշխանութեան ճամբուն վրայ կը գտնուի , եւ անոր փճացումին առաջին նշանն է այն յարածուն զգուանքը զոր կըզգան պարկեշտ մարդերը հանրային գործերու միջամտելէն : Արդարեւ այսպիսիները , հրաժարելով աղբեցութեան պայքար մղելէ մեծամասնութեան անթիւ եւ ջերմնաւոր շողոքորթներուն հետ , գրեթէ բոլորովին անոնց առջեւ ասպարէզը ազատ կը ձգեն եւ երթալով աւելի կը մեկուսանան՝ ոմանք ամփոփուելով իրենց անձնական գործերուն եւ իրենց հարստութիւնը շատցնելու հոգերուն մէջ , ուրիշներ իրենց զաւակները կըթելու հատչիքին մէջ եւ ուրիշներ ալ զխտութեան եւ փիլիսոփայութեան երանաւէտ այլութեանը մէջ : Բայց շատ չի տեսեր , իրենք ալ կըզգան որ մարդ չի կրնար անպատիժ խոյս տալ քաղաքացիական պարտականութիւններէն եւ օտարանալ իր հայրենիքի ճակատագրէն : Արդարեւ ,

պնտութեան մէջ տիրող անկարգութիւնը քիչ ատե-
նէն անհանդուրժելի կը դառնայ եւ կըսպառնայ ամէն
բան տակն ու վրայ գարձնել . սոսկական գործերը կը
կրեն հանրային մրցանքներուն հակահարուածը . սին
յոյակերով սնուցուած եւ անընդհատ յուսախաբուած
ամբոխը կը յուզուի ու կը զայրանայ . իբ շողմա-
րաբները իրենց վարկին վերջին մնացորդը կը գոր-
ծածեն անոր կատաղութիւնը դարձնելու համար ի-
րենց ատելիներուն կամ իրենց երկիւղ ազդողներուն
դէմ . ապահովութիւնը կանհետանայ , եւ իշխանու-
թիւնը ապիկար կը դառնայ զայն երաշխաւորելու ,
ըստ որում ո՛չ միայն սիրուած ու յարգուած չէ , այլ
եւ ռամկավարական օրէնքներէն տակաւին չափազանց
կաշկանդուած՝ ինքզինք յարգելի ընծայելու միջոց-
ներէն զուրկ կը դառնուի : Ահա այն ատեն ամէն ինչ
կը խարխլի ու կը տատանի , եւ հանրային իշխանու-
թիւնը կարծես կը դառնայ պատրաստ որս մը՝ ընծա-
յաբերուած անոր՝ որ պիտի համարձակի զայն ձեռք
առնել : Ռամկավարական բն.ապետութեան ժամը
հասած է :

ՌԱՄԿԱՎԱՐԱԿԱՆ ԲՌՆԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԸ

Դիւրին պիտի ըլլար այստեղ ճշգրիտ պատկերը գծել ռամկավարական բռնապետութեան, — անկէ անբաժան եղող կեղծաւորութեան, այն խորամանկութիւններուն որոնք՝ դարերու ընթացքին՝ միշտ նոյնը եղած են, հաստատուելու եւ իր գոյութիւնը պահպանելու համար գործադրած եղանակներուն, որոնք միշտ միատեսակ են, որովհետեւ աւելի իրերու բնութենէն կը բղիւն քան մարդոց նկարագրէն — Բայց այս պատկերը մեզ չափազանց հեռու պիտի տանէր մեր նիւթէն եւ այս գրքին անձուկ սահմանէն դուրս պիտի ելլար :

Աստուածպետական բռնապետութիւնը կը հանգչի աւելորդապաշտ հաւատալիքներու վրայ եւ Աստուծոյ վախին վրայ. զի կենթադրուի որ աստուածային կամքը հաստատած է այդ իշխանութիւնը եւ տակաւին Աստուծոյ շունչն է որ զայն կը կենդանացնէ : Միապետական բռնապետութիւնը հիմնուած է՝ ժողովուրդի մը գրեթէ կրօնական մեծարանքին վրայ հանգէպ գերդաստանի մը՝ աւելի ականաւոր քան բոլոր միւսները, եւ ա՛յնքան վաղնջուց ու սերտիւ կապուած հայրենիքի ճակատագրին հետ որ, ընդհանրութեան աչքին՝ ազգային գոյութեան խորհրդանշանը

դարձած է : Գալով ռամկավարական բռնապետութեան ,
ասոր չիմը նուազ բարձր է , բայց աակաւին բաւա-
կան ամուր . Նիմուած է իր իսկ գոյութեան ճշմա-
րեա կամ ենթադրական պէտքին վրայ՝ հանրային
բարեկարգութեան պահպանումը եւ ընկերութեան
փրկութիւնը երաշխաւորելու համար :

Արդարեւ , հնազանդութիւնը մարդկային ընկե-
րութեանց կապն է , եւ երբ այս կապը թուլնայ , ըն-
կերութիւնները քայքայման վիճակին մէջ կիշնան :
Եթէ հնազանդութիւնը բանաւոր սահմաններու մէջ
ամփոփուի եւ իմաստուն օրէնքներով կանոնաւորուի ,
պետութիւնը թէ՛ ազատ կըլլայ թէ՛ բարգաւաճ եւ
հանրային ապահովութիւնը երաշխաւորուած կըլլայ
առանց մարդկային արժանապատուութեան ունէ կեր-
պով տուժելուն : Բայց երբ բանաւոր հնազանդու-
թեան սահմանէն անդին անցնուի , այդ հնազանդու-
թիւնը կը կոչուի ստրկութիւն . այդ հնազանդու-
թեամբ պահպանուած անդորրութիւնը առեքեւոյթ է ,
եւ քաղաքացիներուն ապահովութեանը համար այդ
անդորրութենէն սպասուած պաշտպանութիւնը ո՛չ
միայն թերի է , այլեւ պաշտպանեալներուն համար
ստորնացուցիչ բան մ'ունի իր մէջ : Արդ դժուար չէ՛
իւրաքանչիւր ժամանակի եւ երկրի համար՝ բանաւոր
հնազանդութեան եւ ստրկական հնազանդութեան սահ-
մանները ճանչնալ , եւ լո՛ւսամբտ մարդիկ այս մասին
գրեթէ չեն սխալիր բնու : Բայց այսպիսիները , եթէ
տեսնան որ՝ ռամկավարական կառավարութեան խիստ
արագ վատթարացումին երեսէն՝ բարեկարգութիւնը
կը թուլնայ եւ ընկերութիւնը քայքայում կըսպառ-
նայ . եթէ քանիցս եւ զեւ վերջին անգամ դժուարու-
թիւն կրած ըլլան՝ ռամկավարական ընկերութեան
մէջ բարեկարգութիւնը եւ ազատութիւնը իրարու
հետ հաշտեցնելու , ա՛լ կը յուսահատին զանազանու-
թիւն զնելէ եւ իւրաքանչիւր քաղաքացիի օրէնքին

հնազանդելու պարտականութիւնը — զոր սիրայօժար պիտի յանձն առնէին — տարբեր նկատելէ իրենց պարտադրուած ապօրէն հնազանդութիւնէն, եւ կամ բոլորովին չի յուսանատելով հանդերձ այս ազնիւ եւ դրժուարին դերը կատարելու կարելիութիւնէն, այլեւս կորով կամ սիրտ չեն ունենար այդ գործին ձեռնարկելու, եւ կարծելով բուականաչափ վճարած ըլլալ հայրենիքին՝ իրենց վիճակուած ճիգերու եւ տաժանքներու բաժինը, այս հոգացողութիւնը կը կտակեն աւելի բարեբաստիկ սերունդներու: Ահա այսպէս կը համակերպին իրենց արդի կացութեանը, եւ ճիշդ լուսաւորեալ մարդերու այս համակերպութեան եւ բարի քաղաքացիներու մեծագոյն մասին լքումին մէջն է որ ուսմկալարական բռնապետութիւնը կը գանէ իր առաջին եւ գլխաւոր ապահովութիւնը, աւելի ճիշդը այն կողմանը՝ որու վրայ կը հանդչի: Եւ սակայն յարատւելու եւ բարգաւաճելու համար ասկէ աւելի բանի մ'ալ պէտք ունի — մեծամասնութեան հաւանութեանը: Այս հաւանութիւնը կրնայ ստացուիլ առանց մեծ դժուարութեան: Ինթադրելով իսկ որ մեծամասնութիւնը քաղաքական ազատութիւններու համար մասնաւոր յարում մ'ունենայ, ուսմկալարական բռնապետութեան դէմ գանգատելու տեղիք չունենար, ըստ որում այս բռնապետութիւնը սովորութիւն ունի խնամով պահպանելու այս ազատութիւններէն ամենէն գլխաւորներուն արտաքին երեւոյթները, ինչպէս Օդոստոս կայսրը Հռովմի մէջ պահպանած էր բռնադատիկ ընտրութիւններ եւ անուանական գատաւորութիւններ: Արդ, քաղաքական կարգուսարքերու արտաքին ձեւը եւ անոնց բուն էութիւնը զանազանելը որոշ չափով զարգացման կը կարօտի, եւ ամբոխը, զգալով հանդերձ որ հանրային ազատութիւններու ամբողջութեան մէջ փոխուած բան մը կայ, իր աչքին առջեւ միեւնոյն արտաքին երեւոյթները տեսնելով՝ երբեք չի կրնար հասկընալ թէ որքան մեծ է

այս փոփոխութիւնը : Ասկէ զատ , ամբոխը բնաւ ծա-
րաւի չէ՛ քաղաքական ազատութիւններու , այլ
միայն բարօրութեան . եւ թէ՛ երբեմն քաղաքա-
կան ազատութիւններու որոշ չափով կարեւորութիւն
ընծայել կը թուի , այդ կը պատահի միայն այն ժա-
մանակ երբ զայն համոզած ըլլան թէ այս ազատու-
թիւնները կրնան ծառայել բարօրութիւն ձեռք բերե-
լու : Ի այց արդէն սամկավարական բռնապե-
տութիւնը միշտ ինքզինք կը ներկայացնէ մասնաւո-
րապէս եւ տարամերժօրէն նուիրուած ժողովուրդին
բարօրութեանը . եւ նոյն իսկ ջանադիր կըլլայ իր
վրայ դարձընելու , իրբեւ իրենց բնական կեդրոնին
եւ իրենց միակ յենակէտին՝ այն տարտամ յոյսերը եւ
անսահման պատրանքները որոնք միշտ ծածկուած կը
մնան ժողովրդային երեւակայութեան մէջ , ինչ որ
ալ ըլլան այդ յոյսերը , աշխարհակալութիւններու
եւ զինուորական փառքի յոյսեր կամ հարստութեան
աւելի արդար բաժանումի մը եւ ընկերութեան վե-
րանորոգումին ձգտող յոյսեր : Այսպէս սամկավարա-
կան բռնապետութիւնը՝ թէ՛ ժամանակի եւ թէ՛ մի-
ջոցներու տեսակէտով անսահման փոխանորդութիւն
մը իր վրայ առած՝ ընդհանուրին բարեկեցութիւնը
ապահովելու եւ օրէնքի ուժով՝ մարդերու վրայ եւ
ժողովրդային երեւակայութեան շնորհիւ իրերու վրայ
անսահման հեղինակութեան մը տիրացած՝ անդիմադ-
րելի ուժգնութեամբ եւ անպատկառ փառայե-
ղութեամբ կը յառաջանայ , մինչեւ այն անխու-
սափելի օրը երբ իր յաջողութեամբն իսկ կուրացած
եւ արբշխ , կը զարնուի ողորմելի խոչընդոտի մը
եւ կը կործանի՝ իրեն իրբեւ խանձարուրք ծառայած
երբեմնի անիշխանութենէն յոռեզոյն անիշխանութեան
մը մէջտեղ :

Ե.

Ի՞նչ կըլլան ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՒԱՍԱՐՈՒԹԻՒՆԸ,
ՌԱՄԿԱՎԱՐԱԿԱՆ ԲՈՒՆԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԸ ՆԵՐՔԵՒ

Այս աշխարհի մէջ ամէն բան բնկատար եւ պահասաւոր է, նոյն իսկ չարիքը. եւ ինչպէս ընկերութիւն մը չի կրնար անխիտանութեան վերջին աստիճանին մէջ իյնալ, նոյնպէս չի կրնար ստրկութեան վերջին սահմաններուն հասնիլ: Մարդկային ոեւէ ստուաբաթիւ համախմբումի մը մէջ, միշտ կը մնայ ազատութեան որոշ քանակ մը զոր չի ջնջեր բռնապետութիւնը, կա՛մ այն է որ այս ջնջումը իրեն անկարելի կերեւայ, կա՛մ այն է որ՝ իրեն շահուն նպաստաւոր կը նկատէ այդ փորձը չի փորձել բնաւ եւ ընդհակառակը որոշ սահմաններ դնել իր իսկ սանձարձակութեանը:

Բռնապետութեան լուծին տակ ճնշուող ընկերութեան մը թողուած այս նուազագոյն ազատութիւնը՝ ժամանակին կամ տեղին համաձայն կը փոխուի եւ երբեմն նոյն իսկ բաւական ընդարձակ է պարտկելու համար հպատակութեան այն իրական վիճակը որուն մէջ ինկած է այդ ընկերութիւնը: Հռովմի մէջ, կեւ սարներու ռամկավարական բռնապետութիւնը բանի մը չէր խնայեր, եւ իր իշխանութիւնը ա՛լ աւելի անսահման կը դառնար շնորհիւ այն հանգամանքին որ,

հին հանրապետութիւնները՝ քիչ վարժուած ըլլալով քաղաքային ազատութիւնը զանազանելու քաղաքական ազատութենէն, սովորութիւն ունէին քաղաքացին անդէն ձգելու հանդէպ Պետութեան. ճիշդ է թէ պետութիւն ըսելով կը հասկընային ամբողջ ժողովուրդը, ինչ որ այս կացութիւնը տանելի կը դարձնէր: Բայց քաղաքացիին այս անհատական ապիկարութիւնը անաւոր համեմատութիւններ առաւ այն օրը, երբ Պետութիւնը այլ եւս միակ մարդով մը ներկայացուած, ենթարկուեցաւ այդ միակ մարդուն բոլոր կիրքերուն, բոլոր քմահաճոյքներուն եւ բոլոր յիմարութեանցը: Այն ատեն պարզուեցաւ տեսարան մը որուն վրայ արդի աշխարհը բոլորովին անկարող է զաղափար մը կազմելու, ինչպէս բարեբաղդարար անկարող է անգամ մ'ալ այդ նոյն տեսարանը վերանորոգելու:

Արդարեւ արդի ազգերը վարժուած են քաղաքացին որոշ ազատութեան մը, զոր ռամկավարական բռնապետութիւնն ալ տրամադիր է կանգուն պահելու՝ յօգուտ իր խիսկ ապահովութեանը: Այս իրաւակարգին տակ, կը տեսնենք ժողովուրդ մը հաւաքաբար զրկուած իր ազգային իրաւունքէն, մինչդեռ իւրաքանչիւր քաղաքացի կը շարունակէ տէր մնալ իր անհատական իրաւունքին: Սրինակի համար, ազգը՝ իր ամբողջութեամբ անուած՝ իրաւասութիւն չունի ո՛չ պատերազմ յայտարարելու, ո՛չ խաղաղութիւն կնքելու, ո՛չ իր ելուժուտքը կարգադրելու եւ ո՛չ իր արտաքին կամ ներքին քաղաքականութիւնը վարելու. կամ, ինչ որ միեւնոյն բանը ըսել է, այս աւագ շահերուն վերաբերմամբ խորհրդակցական ձայն մը միայն կունենայ՝ խարուսիկ իրաւունքներով օժտուած անուա-

նական ներկայացուցչութեան մը ձևով . բայց միևնոյն ժամանակ , այս ընդհանուր ստրկութեան մէջ , իւրաքանչիւր քաղաքացի կը պահպանէ ազատ երթևեկութեան եւ առեւտուրի իրաւունքը . լիովին տէրը կը մնայ իր անձին , իր ընտանիքին , իր ստացուածքներուն , մէկ խօսքով կը պահպանէ ա՛յնչափ քաղաքային անկախութիւն մը որով պիտի կարենար ինքզինք ազատ համարել , եթէ հայրենիքի գաղափարը բնաւ մուտ գործած չըլլար իր մտքին մէջ կամ դուրս ելած ըլլար իր սրտէն :

Եթէ սակայն քաղաքային անկախութիւնը կըրնայ մնալ կամ անվթար երեւալ այն ռամկավարական լռնապետութեան տակ որ միայն կընայ գոյութիւն ունենալ արդի ժամանակներու մէջ , այս անկախութիւնը բնաւ երբեք ապահովուած չէ , մանաւանդ իր այն կէտերուն մէջ որոնք կը մօտենան քաղաքական ազատութեան , եւ ուրիշ ամուր պատուար մը զայն չպաշտպաներ իշխանութեան ռոնձգութիւններէն : Բաւական է որ իշխանութիւնը պզտիկ շահ մը ունենայ կամ կարծէ ունենալ այդ քաղաքային ազատութիւնը սահմանափակելու , իսկոյն կը վտանգուի այն , եւ այն ատեն՝ անոնք որ գլուխի շարժումով մը կամ պարզ խօսքով մը՝ մահաբեր դաւառնելը աքսորուելու վտանգին կենթարկուին , կը հասկընան , թէ եւ շատ ուշ , թէ քաղաքային անկախութիւնը , եթէ քաղաքական ազատութեան պաշտպանութեանը տակ չի գըտնուի , ուրիշ բան չէ բայց միայն եղեգէ տանիք մը որ անկարող է զիբենք պատսպարել փոթորիկին դէմ :

Առջի բերան մարդ կարող է կարծել թէ ռամկավարական լռնապետութիւնը զո՛նէ պիտի խնայէր հա-

ւասարութեան, որուն վրայ հիմնուած կերեւի մա-
 սամբ եւ զօր սիրայօժար կը գործածէ իբր գրօջակ-
 արգարեւ՝ հաւասարութիւնը այն կուռքը չէ՞ որուն
 զոհուած է ուրիշ ամէն բան: Բայց այս վստահու-
 թիւնը քիչ ժամանակէն կը վերածուի յուսախարու-
 թեան, եւ ոամկալարական բռնապետութիւնը ան-
 խուսափելիօրէն կը մղուի խուլ կռիւ մը բանալու
 հաւասարութեան դէմ: Արգարեւ, ամէն բռնապետու-
 թիւն, նոյն իսկ այն որ կը կեղծէ ժողովուրդին ծո-
 ցէն բղխած ըլլալ եւ անոր հաւանութեամբ միայն
 յարատեւել, ստիպուած է կրթնելու իրեն մասնաու-
 ըսպէս նուիրուած որոշ թուով մարդերու վրայ, որոնց
 ի փոխարէն կը ստրտի ընծեւել պաշտպանութիւն եւ
 մասնաւոր շնորհներ: Ռամկալարական ընկերութիւն-
 ներու սա առաջին սկզբունքը հաւասարութեան մա-
 սին, թէ արժանիքը միակ վաւերական ճիշդուն կ բռ-
 շոր պաշտօններու համար, կը փոխանակուի սա միւս
 սկզբունքով թէ՛ իշխանին հանդէպ անձնական եւ
 բացարձակ անձնութեանը՝ հանրային պաշտօննե-
 րու մէջ մուտքի եւ յառաջացման գլխաւոր պայմանն
 է: Ասկէ զատ, եթէ այն անձերէն մին, որոնց իրե-
 րու հաստատուած կարգին հանդէպ անձնութեանը
 նշանաւոր է եւ կարեւոր կերեւի, յանցանք մը գործէ
 կամ օրինազանցութիւն մը ընէ, մարդ չի վարանիր
 անոր վրայ տարածել վեհապետին իշխանութեան վա-
 հանը եւ զայն ազատ կացուցանել իր յանցանքին հե-
 տեւանքներէն եւ նոյն իսկ անոր հրատարակութիւնը
 արգիլել. այնպէս որ, ոամկալարական ընկերու-
 թիւններուն ամենէն աւելի սիրելի սա սկզբունքը,
 թէ՛ բոլոր քաղաքացիները օրեօրի առջեւ հաւասար
 են եւ անոր առջեւ հաւասարապէս պատասխանատու,

լուրջեայն ջնջուած կըլլայ եւ փոխանակուած սա միւս սկզբունքին հետ . թէ օրէնքները ըստ կամս կը դործադրուին եւ թէ անոնք անհաւասար կերպով կը պարտաւորեն կամ կը պատժեն քաղաքացիները , իշխանութեան նկատմամբ իրենց ենթադրեալ բարեկամութեանը կամ թշնամութեանը համաձայն :

Վերջապէս , վերջին՝ եւ հաւասարութեան համար սչինչ նուազ ազեատարեր՝ հակասութիւն մ'ալ անբաժան կերեւայ ռամկավարական բռնապետութեանէն : Ամէն մարդ գիտէ թէ այս կարգի կառավարութիւն մը իր էութեամբը՝ կարծատեւ կեանք մը միայն ունենալու սահմանուած է , թէ անկանոն կերպով կը փոխանցուի մէկ ձեռքէ միւսը՝ փոթորիկներու միջև , եւ թէ երբեք չէ տեսնուած անոր ժառանգական դառնալուն օրինակը . հակառակ այս ամենուն , ռամկավարական բռնապետութեան մը մէջ իշխանութեան տիրացողները միշտ այն պատրանքը կուեննան թէ այդ ժառանգականութիւնը կարելի է ձեռք բերել եւ ըստ այնմ ամէն ճիգ կը թափեն զայն հաստատելու համար : Ուստի կը ջանան այդ վաղանցուկ գահերը շրջապատել հաւատարիմ նեցուկներով , անոնց շուրջը բոլորել զանոնք պաշտպանելու ամենէն աւելի բնորոշակ մարդերը՝ ամէն տեսակ առաւելութիւններ բնծայելով ասոնց : Ծանօթ եւ սակաւաթիւ են արդէն այն միջոցները որոնցմով կարելի է ազդել մարդկային սրտին վրայ , զոր կը վարէ եսասիրութիւնը , այնպէս որ , երբ միանգամ լրացնես անոր ազահութեանը ցանկութիւնները , ա՛լ ուրիշ բան չի մնար ընելու բայց միայն փայփայել անոր սնափառութիւնը : Ազնուականութեան եւ ուրիշ ժառանգական տիրո-

դոսներու բաշխումը այս նպատակին ծառայած է միշտ, եւ ռամկավարական բռնապետութիւնը այս կերպով անզգալապէս մղուած կըլլայ՝ հաւասարութեան դէմ այս վերջին, թէեւ անզօր՝ անարգանքն ալ գործելու։ Այս կերպով օր մ'ալ հարկ կը տեսնէ կեղծ ազնուականութեամբ մը շրջապատուիլ, կա'մ նոր անուաներ ստեղծելով իր շուրջ կամ երբեմն նոյն իսկ պատմութենէն գողցուած մեծ անունով մը զարդարելով իր արբանեակներուն ամենէն անտօն միկները։

Ահա թէ ի'նչ կը դառնան հարկաւորապէս ազատութիւնը եւ հաւասարութիւնը՝ ռամկավարական բռնապետութեան մը ներքեւ։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

(ՎԵՐՋԱԲԱՆԻ ՏԵՂ)

Եթէ ճիշդ է թէ, բոլոր ընկերութիւնները կը ձգտին դէպ ի ոամկավարական վիճակը, եւ անգամ մը որ հասնին այդ վիճակին, կը ցանկան իբր ուսուկալարութիւն կազմակերպուիլ, այսինքն իրենց մէջ հիմնել ոամկավարական կառավարութիւն մը որ կարող ըլլայ իրենց ապահովել անդորրութիւնը եւ ազատութիւնը. եթէ ճիշդ է թէ այս տեսակ կառավարութեան մը հաստատութիւնը եւ պահպանութիւնը շատ դժուարին դործ մ'է, եւ թէ այսպիսի կառավարութիւն մը ճակատադրականօրէն հակամէտ է սոցիալքելու նախ՝ դէպ ի անիշխանութեան պատուհասը, եւ անմիջապէս վերջը՝ դէպ ի բանապետութեան ամօթը եւ պատուհասը, ուրեմն ո՛րչափ կարեւոր եւ կենսական դործ մ'է՝ փնտռել եւ ցոյց տալ ամենէն նպատակայարմար միջոցները որոնցմով կարելի ըլլայ այդ վտանգները կանխել եւ իսկապէս ոամկավարական կառավարութեան մը հաստատութիւնը եւ բարգաւաճ յարատեւութիւնը ընդ միշտ ապահովել:

Մենք սակայն այստեղ այդ փրկարար միջոցները մի առ մի եւ ճշգրտօրէն մատնանշելու յատկնութիւնը չունինք: Չարիք մը կամ վտանգ մը մատնանիշ ընելը, ըստ մեզ, արդէն առաջին միջոցն է ա-

նոր յառաջխաղացութիւնը խափանելու : Երբ ժողովուրդը միանգամ իրագրել ըլլայ թէ ո՛րն է վտանգը եւ ո՛ւրիշ կուգայ այն , ա՛լ այնուհետեւ դիւրաւ կը գտնայ անոր առաջքը աննելու միջոցները : Ամէն սարազայի մէջ՝ այդ միջոցները բռնութեան , խռովութեան եւ յեղափոխութեան միջոցները չեն—որոնք ո՛րքան ուժգին եւ արագահաս են , նոյնքան դիւրարելի եւ վաղանցուկ է անոնց առաջ բերած արդիւնքը , ո՛րչափ ասէն որ յեղափոխութիւնը բռն իսկ միտերու , սիրտերու , գիտակցութիւններու եւ հոգիներու մեջ կասարուած չըլլայ — : Իսկ եթէ կատարուած ըլլայ այդ մտաւոր ու բարոյական մեծ յեղափոխութիւնը , կըրնանք ըսել թէ , այլեւս պէտք չի մնար այն միւս յեղափոխութեան՝ բիրտ ուժի , արիւնի ու քանդումի յեղափոխութեան , զոր պէտք է թողուլ վերջապէս իր միակ վայելուչ՝ եւ միշտ բացառիկ՝ դիրքին ու դերին մէջ , որ է՝ ժողովուրդներու եւ ազգերու՝ բռնութեան գէմ բողոքի եւ ընդվզումի ամենավերջին եւ յուսահատական ԳԵՐԱԳՈՅՆ ՃԻԳԸ : Ռամկալարութեան յաղթանակը ապահովելու ամենէն բանաւոր , օրինաւոր եւ նպատակայարմար միջոցներն են , մեր կարծիքովը , ո՛չ թէ ՔԱՆԳՈՒՄԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ , ՔԱՅՔԱՅԻՉ ՈՒ ՏԱՐԲԱՂԱԴՐԻՉ ՄԻՋՈՑՆԵՐԸ , — որոնց ի գէպս եւ յանգէպս գործածութեան մէջ կը յարատեւեն մեր կարգ մը «գործիչ»ները (կորզի՞չ , կործանի՞չ . . .) , ոտնահարելով Կրօնքը , Ընտանիքը , Բարոյականը , Գալըտացական կարգապահութիւնը , Ազգային զգացումը , Հայրենիքի գաղափարը , ամէն աւանդութիւն , եւ հաստատուած ամէն կարգ ու սարք , չխնայելով ո՛չ մի սրբութեան , — այլ ընդհակառակը , ՇԻՆԻՉ , ԴԱՍ-

ՏԻԱՐԱԿԻՉ , ԲԱՐՈՅԱՑՈՒՑԻՉ և և ԱԶՆՈՒՍՑՈՒՑԻՉ,
ԲԱՂԱԴՐԻՉ ու ԿԵԴՐՈՆԱՑՈՒՑԻՉ ՄԻՋՈՅՆԵՐԸ :

Ահա այդ միջոցներուն մէկ անկատար թուարկու-
թիւնը.— Ամէն բանէ առաջ հանրային լուսաւորութիւ-
նը , քաղաքացիական դատարարութեան ժողովուր-
դի ամէն խաւերուն մէջ ծաւալումը . այս արդիւն-
քին ձգտող հաստատութեանց — դպրոց , լսարան ,
մատենադարան , ժողովրդային համալսարաններ , ըն-
կերակցութիւններ— բազմացումը . սահմանադրական
խրաւունքի և սովորաւարական կարգերու ուսուցու-
մին կարելի եղածին չափ ընդհանրացումը , ժողովուր-
դին գիտակցութեան զարթնումին ու զարգացումին
համեմատութեամբ՝ քաղաքական և քաղաքային ա-
զատութիւններու ընդարձակումը , -- որոնք ձեռք կը
բերուին քաղաքական սովորաւարական կուսակցու-
թիւններու ընդարձակ կազմակերպութեամբ , մա-
մուլով , խաղաղ գումարումներով , ընտրական պայ-
քարով և խորհրդարանական պայքարով— . հանրային ,
քաղաքական , ընկերային և տնտեսական հարցերու
շուրջ ընդհանրութեան հետաքրքրութիւնը ստեղծել ,
այս կարգի բանակոխներու և պայքարներու մէջ
մտցնելով սակայն ազնիւ և ազատ վիճարանութեան
ներողամիտ և շինարար սկզբունքը :

Ռամկաւարութեան յաղթանակը ապահովելու հա-
մար անհրաժեշտ է նաև , մանաւանդ Օսմանեան Պե-
տութեան պէս բազմացել և բազմալեզու երկրի մը
մէջ , ժողովուրդներու և ազգերու միջև առաջ բե-
րել ներդաշնակ յարաբերութիւններ , եղբայրակցական
կապեր , առանց սակայն անոնց այլազանութիւնը և
սոսանձնայատկութիւնները խաթարելու — թողլով որ
ժամանակը և զարգացողութիւնը ինքնաբերաբար ,

յամբօրէն , անդգալիօրէն կատարեն իրենց դերը այդ ուղղութեամբ — . անոնց համերաշխութեան միակ ամուր եւ տեւական հիմունքը նկատել՝ օրէնքի , արդարութեան հաւասար տիրապետութիւնը ամենուն մէջ եւ ամենուն համար — . բազմակողմանի կերպով ուսումնասիրել տառապող մարդկութեան ցաւերը եւ անոնց գործնական եւ գործադրելի դարմանները , տարածել Քաղաքական Տնտեսութեան (*Économie politique*) եւ Ընկերային Տնտեսութեան (*Économie sociale*) առողջ սկզբունքները , որոնց շնորհիւ միայն կարելի է գտնել ընկերային եւ տնտեսական հարցին լուծումը , բաղձացուած տնտեսական հաւասարակշռութեան բանալին . զարգացնել այլասիրութեան ոգին , եւ տնտեսական համերաշխութեան (*solidarité*) , փոխադարձութեան (*mutualité*) ու գործակցութեան (*coopération*) շինարար եւ ստեղծագործ ձեռնարկներով առաջ բերել նոյն իսկ ամենէն համեստ եւ աղքատիկ դասակարգերու տնտեսական վիճակին բարւոքումը , որ անոնց բարոյական զարգացման առաջին սանդղամասն է : Այս կարգի կերպերով ու միջոցներով է որ առաջքը կառնուի՝ ապահովուպէս եւ վերջնականապէս՝ ինչպէս բացարձակ բռնապետութեան վերադարձին նոյնպէս անիշխանութեան , ռամկավարական բռնապետութեան եւ խուժանաւարութեան ահաւոր եւ աղիտարեր վտանգներուն : Ասոնցմով առաջքը կառնուի նաեւ դարուս ամենէն վտանգաւոր ժանտախտին՝ ընկերվարականութեան , որ մէկ կողմէ իր պարզապաշտ , խարուսիկ ու հեշտօրօր վարդապետութիւններով եւ միւս կողմէ իր դատան եւ տմարդի միջոցներով այնքան դիւրաւ կը մոլորեցնէ սոգէանեւ

բու, թշուառներու և յուսահատներու խաժամուժամբոխը, որ դժբաղդարար տակաւին մեծամասնութիւնը կը կազմէ, ինչպէս համայն մարդկութեան, նոյնպէս և մանաւանդ մեր երկրին ու ժողովուրդին մէջ: Այս գրքին մէջ տեսանք ընկերվարական այդ յոխորտանքներուն ու մարգարէութիւններուն արժէքը:

Ահա՛ գործունէութեան ընդարձակ և բեղուն ասպարէզ մը, ահա բարերար աշխատութիւն մը, որուն լծուելու պարտական են բոլոր գիտակից և պարտաճանաչ ուժերը, բոլոր բարի և հօգի կամեցողութիւնները:

Մեր նշանաբանը պէտք է ըլլայ — ինքնամփոփում, ներդաշնակութիւն, համերաշխութիւն և կարգապահութիւն: Պէտք է ունենանք աշխարհահայեացք մը և կազմակերպութիւն մը: Պէտք է գիտակցինք թէ ո՞ւր ենք և ո՞ւր կերթանք, որպէս զի վստահաբար առնենք մեր քայլերը: Քաղաքական աշխարհահայեացքի պակասը գլխաւոր պատճառներէն մէկն է մեր ազգին այսօրուան քաոսային վիճակին: Առանց որոշ աշխարհահայեացքի, առանց ծրագրի, առանց սկզբունքի գործունէութիւնը չկրնար ունէ օգտակար ու տեսական արդիւնքի մը յանգիլ: Միւս կողմէ, աշխարհահայեացք մը չկրնար կեանքի մէջ մտցուիլ, գործադրութեան դրուիլ, առանց ԿՍԶՄԱԿԵՆՊՈՒԹԵԱՆ, առանց միեւնոյն գաղտնիարին շուրջ համախմբուած գործիչներու և մշակներու ներդաշնակ, գիտակից և յարատեւ ջանքերուն: Երկրորդ պատճառ մը մեր անկումին և մեր յետամնացութեան՝ մեր արագ վազքն է. արդարեւ, մինչդեռ ունէ մեքենայի մը արագութիւնը համեմատական է իր տոկունութեանը ու

կատարելագործութեանը հետ, մերք ասոր հակառակն է : Մենք սրտովին բաղձալով ազգին յառաջդիմութեանը, նոյն այդ յառաջդիմութեան սիրոյն համար, պէտք է վեր կանգնինք եւ բսնք մեր ժողովուրդին՝ «Յամբօրէն աճարարեցէք» — «Hâtez - vous lentement» : Եթէ այս պատուէրին չանսանք, մեր կարծեցեալ յառաջդիմութեան ճեպքն թաց շոգեկոտքին անխւր շուտով պիտի գծէն դուրս ելլէ ու խորտակուի :

Ուսէ նպատակակէտի մը համար երբ ճամբայ կելնենք, ամէն բանէ առաջ լուրջ եւ համեստ պէտք է ըլլանք, եւ ո՛չ պոռոտախօս ու յոխորտարան, պէտք է լաւ ճանչնանք մեր միջավայրը, ուսումնասիրենք հանգամանքները եւ ջանանք գտնել գործունէութեան այնպիսի միջոցներ որոնք բոլորն թէ նպատակայարմար եւ թէ ժամանակայարմար : Արդէն մեր գլխաւոր պակասութիւններէն մէկն ալ միջոցներու ընտրութեան կարեւորութիւն չընծայելուն մէջ կը կայանայ : Այս գրքին մէջ ասանք թէ միջոցներու ընտրութիւնը փորձառութեան գործ է եւ ո՛չ իմաստասիրութեան : Մեր մեծագոյն սխալներէն մին եղած է, անգամ մը ազէկ գէշ նպատակ մը գնելէ վերջ, բնաւ կարեւորութիւն չտալ միջոցներու ընտրութեան, այլ անխտիր գործադրել այն ամէն միջոցները որոնք ըստ երեւոյթին դէպ ի այդ նպատակը կառաջնորդեն. առանց սեւէ վարանումի կամ շրջահայեցութեան՝ շեշտակի կերպով դէպ ի նպատակը վաղել . ինչ որ շատ անգամ մեզ կը վրիպեցնէ եւ աւելի կը հեռացնէ մեր նպատակէն : Մեր մէջ անհուն չարիքներու եւ ազէտներու պատճառ եղած է մեր ամէն կարգի գործիչներու բացարձակապաշտութիւնը : Պէտք է խորապէս ուսումնասիրենք մեր մի-

ջալաչքը , մեզ շրջապատող քաղաքական , անտեսա-
կան եւ ընկերային պայմանները , մեր ժողովուրդին
եւ մեզ հետ ապրող միւս ժողովուրդներուն հոգեբանու-
թիւնը , արմատացած աւանդութիւնները , եւ այս ա-
մենուն պատշաճեցնենք մեր միջոցները եւ մեր գոր-
ծունէութիւնը , այն ալ մեր ուժերուն ներածին չափ-
համեատ , զգուշաւոր ու վերապահ ըլլանք , փոխա-
նակ խիղախ եւ յանձնապատան ըլլալու , երբ ճողո-
վուրդի մը ճակատագրին հետ է որ գործ ունինք :

Փնտռենք մեր ժողովուրդին այսօրուան այլասե-
րումին , անկումին , քայքայումին պատճառները , եւ
անոնց դէմ կռուինք մեր բոլոր ուժովը . հակազդենք
չարիքին , ու չհասնինք երբեք այն ա՛լ աւելի կոր-
ծանարար եւ մահացուցիչ եղբակացութեան թէ՛ մեր
այսօրուան անկերպարան , քառասյին վիճակը , մեր ի
հանդէս բերած ապրկարութիւնները եւ պառակտումնե-
րը՝ ազդանշանը եղած ըլլան անբուժելի հիւանդու-
թեան մը որ մեր էութիւնը կը կրծէ կը մաշեցնէ եւ
ամէն օր քիչ մը աւելի կը մօտեցնէ մեր վերջնական
քայքայումին : Զգուշանանք այս մտածումէն . գիտ-
նանք թէ մեր այս անկումը առաւելապէս արշիւնջն
է մեր կրած մեծ փորձանքներուն եւ աղէտներուն , ու
բոնց նմանը քիչ ազգերու վիճակուեցաւ Պահնք յա-
րածամ սրտապնդիչ յոյսը եւ յարատեւենք մեր անձ-
նուէր ջանքերը՝ մեր ժողովուրդի բարեկաւուածին ու
վերականգնումին համար :

Ինչպէս հիւանդութիւնները եւ մարմնաւոր ցա-
ւերը պատճառ մը չեն մեզի արհամարհել տալու
կեանքի քաղցրութիւնը եւ հրապոյրը , այլ՝ հակառակ
անոնց եւ շնորհիւ բժշկական զեղերուն եւ վերարու-

ժական անդամահատութեանց եւ մանաւանդ շնորհիւ
 ևսխազգուշացուցիչ , կրակխարզել ու հակահեխիչ մի-
 ջոցներու՝ մարդկային կեանքը կուռճանայ , կը բեղմ-
 նաւորուի ու կը յաւերժանայ , նոյնպէս վերեւ ակ-
 նաբկուած եւ մատնանշուած բոլոր վտանգները եւ
 քաղաքական կեանքի յաճախադէպ յուսախարութիւն-
 ները պէտք է՝ երբեք զօրեն մեր կորովը թուլացնե-
 լու եւ մեր լաւատեսութիւնը նսեմացընելու ազա-
 գային նկատմամբ . այլ ընդհակառակը մեր գիտակ-
 ցութիւնը , որչափ լուսաւորուած նոյնչափ գօտեպըն-
 դուած՝ պէտք է անդուլ անդադար մաքառի այդ գըժ-
 տաբութեանց , այդ արդելքներու եւ խոչընդոտներու
 դէմ , եւ մանաւանդ պէտք է կանխէ այդ վտանգները՝
 գեւ չի սաղմնաւորուած կամ խեղդէ զանոնք՝ իրենց
 խանձարուրքին մէջ իսկ : Գործադրենք , յարատեւ
 ջանքով , ԱԶԳԱՇԻՆՈՒԹԵՆՆ այս միջոցները , ու պի-
 տի սպրինք ու վերանորոգուինք :

Ծոյլ եւ անաշխատ ընկերութիւնները միայն
 մեռնելու կը դատապարտուին : Իսկ ուր որ կը տիրէ
 ստեղծագործ աշխատանքը , հոն կայ կեանք , շար-
 ժում , յառաջդիմութիւն եւ բարեկեցութիւն :

Վ Ե Ր Չ

ՌԱՄԿԱՎԱՐՈՒԹԻՒՆ

ՑԱՆԿ ՆԻՒԹՈՑ

Յառաջաբան

ԷԶ
5

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Ռամկավարական աշխարհահայեացքը

Բովանդակութիւն

18

Ա. — Ռամկավարական աշխարհահայեացքի
մը պէտքը

19

Բ. — Ռամկավարական աշխարհահայեացքին
ծագումը

27

Գ. — Ի՞նչ է Ռամկավարութիւնը

43

Դ. — Ռամկավարական աշխարհահայեացքը

59

Ե. — Ռամկավարութիւն եւ ընկերվարու-
թիւն. — Գաղափարապաշտ մեքոսը

79

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Ռամկավարութեան Տնտեսական
աշխարհահայեացքը

Բովանդակութիւն

86

Ա. — Բնաւորչումին ընթացքը եւ ուղղութիւնը

87

Բ. — Ռամկավարութեան դերը բնաւորչումին
մէջ

93

Գ. — Ռամկավարութեան ընկերային քաղա-
քականութիւնը

107

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

Ռամկավարական կառավարութիւնը

եւ


Անոր յարակից վսանգները

	ԷԶ
Բովանդակութիւն	118
Ա. — Ռամկավարութեան զանազան առումները	119
Բ. — Ի՞նչպէս ընկերութիւն մը ռամկավարական կը դառնայ եւ ինչո՞ւ կը մնայ այնպէս	123
Գ. — Ռամկավարական կառավարութիւնը եւ զայն շրջապատող վսանգները. — Անիւսանութիւնը	133
Դ. — Ռամկավարական բռնապետութիւնը	141
Ե. — Ի՞նչ կըլլան Ազատութիւնը եւ Հաւասարութիւնը ռամկավարական բռնապետութեան մը ներքեւ	145

Եզրակացութիւն

(Վերջաբանի տեղ)

151



ՌՍՄԿՍՎԱՐՍԿԱՆ ՄՍՏԵՆՍԳՐԱՆԻ հասո-
րները կոչուած են հայ ժողովուրդը վերադարձ-
նելու իւր բնածիր ողջմտութեանը եւ գայն դնե-
լու նեւարիս յառաջդիմութեան նամբուն մէջ,
հաւասարապէս խորհեցնելով լնացած պահպա-
նողականութենէ եւ լպիրս սանձարձակութենէ
ու անիշխանականութենէ: Մեր նշանաբանն է.
ո՛չ կեկուա՛լ՝ բմբելու ասիման, ո՛չ վազել՛ գա-
հավիժելու կամ շնչասպառ ըլլալու ասիման.
այլ հաստատ քայլերով *խաչել* հանգրուանէ հան-
գրուան, միւրս դէպ ի առաջ, միւրս դէպ ի կա-
տարելութիւն, միւրս դէպ ի լոյս:

ՌՍՄԿՍՎԱՐՍԿԱՆ ՄՍՏԵՆՍԳՐԱՆԻ հա-
սորները կը ծախսուին .

Կ. Պօլսոյ մէջ՝ Սահմ. Ռամկավար Կուսակ-
ցութեան Կեդրոնական Ակումբին գրասենեակը
— Պահչէ Գափու, ձէլալ պէյ խան, թիւ 42—
եւ գլխաւոր հայ գրավանառներու հով .

Գարսոնները, Եգիպտոս, Ամերիկա եւ այ-
լուր, նոյնպէս Սահմ. Ռամկ. Ակումբներուն
հով, ինչպէս նաեւ Ամերիկայի «Ազգ» ի, Գա-
նիրէի «Լուսաբեր-Արեւ» ի, Իզմիրի «Գաշինի» ի
եւ Վառնայի «Իրատուի» ի խմբագրասունները:

Մեծաբանակ գնողներուն 25% զեղջ:

ՌԱՄԿԱՎԱՐԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ

1. Ընկերվարութիւն եւ Հայ Ընկերվարականներ Պ. Ո.
(ՄՈՒՇԵՂ, ԵՊԻՍԿՈՊՈՍ) 3
2. Ռամկավարութիւն
(Մ. ՏԱՄԱՏԵԱՆ) 4
3. Վաղուան Հոգին
(ՄՈՒՇԵՂ, ԵՊԻՍԿՈՊՈՍ) 1
4. Ընկերվարութիւն եւ Թուրքիա
(ԱՐԿԸՐ ԼՈՒԻԶ) 1
5. Ընկերվարութիւնը քննադատուած
ՄՐ. ՌՈՒԶՎԷԼԹԵՆ 1



Գ Ի Ն 4 ՂՐՇ. ՈՂԶ

(1 ՖՐԱՆՔ)

